



**NATIONAL ACADEMY OF SCIENCES
OF REPUBLIC OF ARMENIA
INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN**

**DIRECTORY
OF INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN**

2022

**НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

**ВЕДОМОСТИ
ИНСТИТУТА ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА**

2022

**Yerevan 2023
Ереван 2023**

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ

ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

2022

ԵՐԵՎԱՆ

ՀՀ ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

2023

ՀՏԴ 030
ԳՄԴ 92
Հ 247

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան
լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Կազմողներ՝ Վ. Կատվայան, Ն. Հովհաննիսյան Գ. Մխիթարյան

Պատասխանատու խմբագիր՝ Ն. Հովհաննիսյան

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի տեղեկա-
Հ 247 գիրք 2022.– Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատարակչություն, 2023.-
255 էջ:

Տեղեկագիրքը ընդհանուր գծերով ներկայացնում է 2022 թ. ՀՀ ԳԱԱ Հրայրա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակությունը և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար գիտական հետազոտությունների ուղղությունների:

Գիրքը տեղեկատվական բնույթ ունի, նախատեսված է մասնագետների, լեզվաբանությամբ հետաքրքրվողների, գիտական լայն հանրության համար:

ՀՏԴ 030
ԳՄԴ 92

Երկու խոսք

Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը ՀՀ ԳԱԱ կազմում հայերենագիտության ոլորտի գիտահետազոտական հաստատություն է, որը նաև կազմակերպում է հետբուհական կրթություն: Հայոց լեզվի ուսումնասիրությունը ընթանում է գիտական չորս ուղղություններով՝ ա) արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ, բ) հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր, գ) հայ բարբառների ուսումնասիրություն, դ) ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր: Ըստ այդմ՝ ինստիտուտի գործունեության հիմնական նպատակներն են հայոց լեզվի շարունակական և համակողմանի ուսումնասիրությունը, ընդհանուր, համեմատական և կիրառական լեզվաբանական հետազոտություններ ծավալելը, լեզվաքաղաքական ու լեզվամշակութային, գրական լեզվի կանոնարկման խնդիրներ արծարծելը և դրանց լուծմանը նպաստելը, ինչպես նաև գիտական կադրեր պատրաստելը:

Իր գոյության ութ տասնամյակների ընթացքում լեզվի ինստիտուտը գիտական արժեքավոր բազում հետազոտություններով համալրել է հայերենագիտությունը, կիրառել լեզվաբանական հետազոտության նորագույն մեթոդներ, էական դերակատարում ունեցել հայերենագիտության և ընդհանրապես լեզվաբանության գիտակարգերի ուսումնասիրության մեջ, եղել հայերենագետներին և հայերենագիտական կենտրոնները համախմբող, լեզվի ուսումնասիրության խնդիրները համակարգող հաստատություն: Ինստիտուտը ձգտում է նպաստել հասարակության լեզվամշակույթի մակարդակը բարձրացնելուն, լեզվի վերաբերյալ ճիշտ պատկերացումներ ձևավորելուն, մայրենին պահպանելուն և տարածելուն, լեզվաքաղաքական խնդիրներ լուծելուն:

Հայոց լեզվի ուսումնասիրությունը Հայաստանի Հանրապետությունում գիտության գերակա ուղղություն է, իսկ ՀՀ ԳԱԱ Ն. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը երկրում հայերենի հե-

տագոտությամբ զբաղվող հիմնական հաստատությունն է: Այսօր էլ ինստիտուտի գիտական արդյունքները կարևոր ներդրում են հայերենագիտության մեջ, դրանք նաև կարևոր նյութ և աղբյուր են օտար հայագետների, հնդեվրոպաբանների համար:

Լեզվի ինստիտուտը գիտական հանրությանը, կրթական ոլորտի աշխատողներին և սովորողներին, առհասարակ հաստատության գիտահետազոտական արդյունքներով հետաքրքրվողներին իր հրապարակած գիտական աշխատանքների վերաբերյալ ամբողջական տեղեկություններ տրամադրելու նպատակով շարունակում է «Տեղեկագրքի» ամենամյա հրապարակումը: Շարքի երրորդ հատորը ընդհանուր տեղեկություններ է պարունակում 2022 թվականին ինստիտուտի ձեռք բերած կարևորագույն, բազային և թեմատիկ ֆինանսավորմամբ ստացված, ինչպես նաև կիրառական աշխատանքների արդյունքների վերաբերյալ: Տրվում է 2022 թ. հրապարակումների ցանկը: Ըստ գիտահետազոտական աշխատանքների վերոհիշյալ չորս ուղղությունների՝ ներկայացվում են տարվա ընթացքում հրապարակված գրքերի և հոդվածների համառոտ ամփոփագրերը՝ նախ հայերեն, ապա անգլերեն և ռուսերեն: Հոդվածների օտարալեզու համառոտ ամփոփագրերը նույնությամբ արտատպվում են համապատասխան գիտական հանդեսներից:

«Տեղեկագրքի» հատորների բովանդակային և մատենագիտական տեղեկությունները կարևոր աղբյուր կծառայեն ինստիտուտի աշխատանքներին անդրադարձողների համար:

Կազմողներ

ՄԱՍ I

ՀՀ ԳԱՍ Հ. ԱՃԱՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2022 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ա. ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2022թ. ընթացքում լեզվի ինստիտուտում զգալի արդյունքներ են ձեռք բերվել հայերենի 11 բարբառախմբերից մեկի՝ Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախմբի բարբառային միավորների, դրանց լեզվական հատկանիշների, տարածագործառական յուրահատկությունների համակողմանի ուսումնասիրության ուղղությամբ: Նորովի արժևորվել ու մեկնաբանվել են բարբառախմբում ընդգրկված Ղարաբաղի, Հաղբութի, Շամախիի, Բուրդուրի, Կոզենի, Մեհտիշենի բարբառների մի շարք իրողություններ, քննարկվել է Գորիսի բարբառային միավորի կարգավիճակի խնդիրը, կատարվել են դիտարկումներ «Արցախ» տեղանվան ստուգաբանության շուրջ, քննության են ենթարկվել բարբառախմբի բայական, դերանվանական համակարգերին, բառակազմությանն ու բառագործածությանը, բառապաշարին առնչվող հարցեր: Անդրադարձ է կատարվել Արցախ-Սյունիքի խոսվածքների գործածությանը՝ Նախիջևանի տարածքում, բարբառային որոշ միավորներ ենթարկվել են համեմատական քննության: Փաստվել է հայրենազրկված Կոզենի բարբառի գործածությունը ՀՀ Արարատի մարզի Միս գյուղում: Վկայվել է Մեհտիշենի բարբառի գործածությունը Արցախի Հանրապետությունում, չնայած այն համարվել է մեռած բարբառ: Կարևոր է նաև Ղարաբաղի բարբառի հնաբանությունների հետազոտությունը, որը որոշակի նյութ է տալիս ոչ միայն բարբառային հայերենի, այլև հայոց լեզվի պատմության տարբեր հարցերի, քերականական այս կամ այն կարգերի առաջացման, նրանց զարգացման ընթացքի բացահայտման

վերաբերյալ: Հետազոտությունների արդյունքները հրապարակվել են ինստիտուտի կազմակերպած «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովում, գիտական տարբեր հանդեսներում և ժողովածուներում:

Ավարտին է հասցվել ուշ միջնադարում ստեղծված ձեռագիր բառարաններում ամբարված բառապաշարային նյութի ուսումնասիրությունը: Հրապարակվել է «Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն» մենագրությունը, որը կարևոր նշանակություն ունի հայոց լեզվի պատմության տարաբնույթ հարցերը քննելու դիտանկյունից: Առաջին անգամ հետազոտվել են Մատենադարանի ձեռագրացուցակներում վկայված հինգ ձեռագրեր, որոնք ամփոփում են նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարաններ: Կարևոր է, որ բառարանային դիտարկումները հնարավորություն են ընձեռում առանձնացնելու նաև արդի հայերենում իմաստափոխված կամ իմաստային այլ երանգով առկա բառեր:

Բ. ԲԱԶԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՏԱՑՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՊՑՈՒՆՔՆԵՐ

«Հայ բարբառների ուսումնասիրություն» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Կատվայան) կատարվել է հայ բարբառների պատմական շերտերի քննություն, ընդհանրացվել և նկարագրվել են բարբառային հայերենում հինհայերենյան շերտը ներկայացնող իրողությունները: Այդպիսիք դիտարկվել, մշակվել և դասդասվել են նաև բարբառախոս առանձին տարածքում՝ Նախիջևանի տարածքի բարբառային միավորներում: Համակողմանիորեն ուսումնասիրվել են Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախմբի բարբառային միավորների հնչյունաքերականական համակարգերը, բառապաշարը: Դիտարկվել են տղամարդկանց և կանանց առնչվող իրողությունների բառային արտա-

հայտությունները Բայազետի բարբառի օրինակով: Ուսումնասիրվել են Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները: Կատարվել է բարբառների բառիմաստային զուգաբանությունների, բառակազմական իրողությունների քննություն: Դիտարկվել են Կարնո և Մշո բարբառների դրսևորումների որոշ առանձնահատկություններ հայ ժողովրդական հեքիաթներում: Կատարվել են կրոնափոխ համշենահայերի բառապաշարի հետազոտական աշխատանքներ, առկա նյութը համեմատվել է բարբառի այլ խոսվածքների ընձեռած նյութի հետ: Դիտարկվել և նկարագրվել են Սեբաստիայի բարբառի հնչունաքերականական ու բառապաշարային առանձնահատկությունները: Քննության են ենթարկվել Նախիջևանի տարածքի՝ Արցախ-Սյունիքի խոսվածքները: Հաղորդի բարբառի իրողությունները դիտարկվել են Ղարաբաղի և Մեղրիի բարբառների համեմատությամբ:

Հետազոտությունների արդյունքները հրատարակվել են երկու մենագրություններում և հրապարակվել շուրջ չորս տասնյակ հոդվածներում ու զեկուցումներում:

«Հայոց լեզվի պատմական զարգացման հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Գ.Մխիթարյան) վեր են հանվել ու մեկնաբանվել լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի մի շարք փոփոխություններ և դրանց օրինաչափություններ: Շարունակվել է Ղարաբաղի (Արցախի) բարբառի բառային հնաբանությունների քննությունը: Մասնավորապես քննվել են թվականական հնաբանությունները, որոնք նախագրային շրջանի կազմություններ են և գրաբարի համապատասխան միավորի համեմատությամբ դրսևորում են որոշ ձևակառուցվածքային առանձնահատկություններ: Կատարվել է XII դարի երկերում առկա օտար ծագման բառերի դասակարգում և ուսումնասիրություն: Հետազոտվել են Մատենադարանի ձեռագիր քերականություններ, ձեռագիր բառարաններ: Ուսումնասիրության առարկա են դարձել «Հանդես բանաստեղծաց» խորագրով ձեռագիր բառարանները (XII-XVI դդ.): Քննվել են հայերենի զարգացման տարբեր փուլերում բառապաշարի թեմա-

տիկ խմբերը, միջին հայերենի մասնագիտական բառապաշարը (միջնադարյան բժշկարաններ): Աշխատանքներ են տարվել հայերենի և պարսկերենի համեմատական ուսումնասիրության ուղղությամբ:

Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են երկու մենագրություններում և տասնյակից ավելի հոդվածներում:

«Ընդհանուր ու համեմատական և կիրառական լեզվաբանության հարցեր» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.դ. Վ. Համբարձումյան) ուսումնասիրություններ են կատարվել ընդհանուր ու կիրառական և համեմատական ու տիպաբանական լեզվաբանության ոլորտներում: Հետազոտվել են լեզվամշակութաբանական հարացույցը և լեզվաբանական նորագույն ուղղությունները: Շարունակվել է հայ-արաբական և հայ-քարթվելական, հայ-գերմանական լեզվական առնչությունների քննությունը, կատարվել են բառաքննական և ստուգաբանական ճշգրտումներ ու լրացումներ ստուգաբանական բառարանների մեջ:

Հետազոտությունների արդյունքները արտացոլվել են երկու մենագրության մեջ և մեկ տասնյակից ավելի հոդվածներում:

Կիրառական լեզվաբանության բնագավառում կատարվել է կիրառական և համակարգչային լեզվաբանության խնդիրների քննություն: Շարունակվել են հետազոտությունները հայերենի փորձառական հնչյունաբանության բնագավառում:

«Արդի արևելահայերենի և արևմտահայերենի ուսումնասիրման և կանոնարկման խնդիրներ» թեմայի շրջանակում (ղեկ.՝ բ.գ.թ. Թ. Ստյան) ուսումնասիրություններ են կատարվել հայերենի ոլորտային տերմինաբանության ուղղությամբ, քննվել են շարահյուսական միավորների և կապակցության եղանակների հարաբերակցությունները: Արդի արևելահայերենի ուսումնասիրության ոլորտում աշխատանքներ են իրականացվել բառարանների և բառացանկերի կազմության ուղղությամբ: Հրատարակման փուլում է «Արդի հայերենի ուղղագրական բառարան»-ը: Քննվել է Մխիթարյանների հայերենագիտական գործունեությունը: Հետա-

գոտվել են իրանական ծագման հատկական փոխառությունները, հայերենի բժշկագիտական տերմինները, բառապաշարի շերտերի ոճական կիրառությունները: Դիտարկվել են իմաստային առանձնահատկությունները «հագուստ» թեմատիկ խմբում: Կատարվում է նաև չբառարանագրված բառերի հավաքման աշխատանք: Ուսումնասիրվել են իմաստային նորաբանությունները գրական արևմտահայերենում: Շարունակվում են մշակվել արևմտահայերենի կանոնարկման և հատուկ անունների տառադարձման սկզբունքները: Ուսումնասիրվել են նորաբանություններն ու օտարաբանությունները արևմտահայ գրական լեզվում:

Հետազոտությունների արդյունքները ամփոփվել են մեկ մենագրության մեջ և մոտ երկու տասնյակ գիտական հոդվածներում:

Գ. ԹԵՄԱՏԻԿ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՍՏԱՅՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

«Շիրակի մարզի բարբառային համապատկեր» թեմատիկ ծրագրով (ղեկ. բ.գ.դ. Վ. Կատվայան) հրապարակված գրականությունից, արխիվային նյութերից Շիրակի մարզի բնակավայրերի և բնակչության վերաբերյալ հավաքվել են անհրաժեշտ տեղեկություններ: Ուսումնասիրվել է մարզում գործածվող բարբառների վերաբերող հրապարակված գիտական գրականություն, կատարվել են արտերկրում կատարված համանման աշխատանքների հետազոտում, աշխատանքի մեթոդների ճշգրտում, հարցարանների և անհրաժեշտ այլ նյութերի նախապատրաստում: Իրականացվել են դաշտային աշխատանքներ Շիրակի մարզի 30 գյուղերում, հավաքվել է ուսումնասիրության համար անհրաժեշտ բավականաչափ հարուստ նյութ, որի գրանցման և մշակման աշխատանքներն ընթացքում են: Դիտարկվել են դերանվանական, ածանցման միջարք իրողություններ Շիրակի մարզի որոշ բնակավայրերի խոսվածքներում, կատարվել է անդրադարձ Կարնո բարբառի պատմական շերտերին: Հետազոտության որոշ արդյունքներ ներկա-

յացվել են «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. Հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովում, գիտական հանդեսներում:

«Հայերենի դերը և ուսուցման խնդիրները բազմալեզու միջավայրում» թեմայով՝ (դեկ.՝ ք.գ.թ. Մ. Սարգսյան) դիտարկվել են բազմալեզու միջավայրում՝ մասնավորապես Լեհաստանի և Փարիզի հայկական համայնքների օրինակով, հայերենի լեզվավիճակը, զարգացման միտումները, ինչպես նաև հայերենը որպես երկրորդ լեզու կամ օտար լեզու դասավանդելու խնդիրները՝ որպես կիրառական լեզվաբանության ուսումնասիրության առարկա: Բազմալեզու միջավայրում հայերենի դերը և ուսուցման խնդիրները հետազոտելու նպատակով Լեհաստան և Ֆրանսիա գործուղումների ժամանակ հավաքվել են անհրաժեշտ տեղեկություններ Կրակովում և Փարիզում ապրող լեզվական հանրույթի և գործառող լեզուների վերաբերյալ: Կատարվել է արխիվային նյութերի ուսումնասիրություն՝ օտարերկրյա գործընկերոջ աջակցությամբ, ինչպես նաև տարբեր համայնքների լեզվակիրների խոսքի հանրալեզվաբանական քննություն:

«Հայերենի բառապաշարի ձևային նկարագրություն և համապատասխան էլեկտրոնային շտեմարանի ստեղծում» թեմատիկ ծրագրով՝ (դեկ.՝ ք.գ.թ. Մ. Սարգսյան) բարեփոխվել է հայերենի բառակազմության էլեկտրոնային շտեմարանը, որը գործում է համացանցային առանձին երկլեզու կայքում՝ www.formlang.am հետևյալ հասցեի ներքո՝ <https://formlang.am/hy>: Վերամշակվել և թարմացվել են առաջին փուլում մշակված տվյալների շտեմարանը և համապատասխան ծրագրաշարը, ավելացվել են նկարագրության նոր դաշտեր, մուտքագրվել են նոր տվյալներ, շտեմարանը համալրվել է նոր բառամիավորներով (շուրջ 30 %), վերջնական տեսքի է բերվել համացանցային կայքը:

Դ. ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Ավարտվել են «Արդի հայերենի ուղղագրական բառարան»-ի, «Նոր բառեր»-ի Է պրակի կազմման և խմբագրման աշխատանքները, կատարվում է «Հայերենի բարբառագիտական բառարան»-ի շարունակական համալրում նոր բառահոդվածներով, հրապարակվել են լեզվի ինստիտուտի բաժինների աշխատակիցների կոլեկտիվ մենագրություններ, գրական լեզվի կանոնարկման ու ուսուցման խնդիրներին առնչվող ձեռնարկներ:

Հայերենի բառապաշարի ձևային նկարագրություն էլեկտրոնային շտեմարանում շարունակվել է բառերի դասական ուղղագրությամբ տարբերակների մուտքագրումը, որը թույլ է տալիս օգտատերերին նոր որոնումներ կատարել նաև դասական ուղղագրությամբ: Պատրաստվել է կայքից և համակարգից օգտվելու ուղեցույց, որի տեսագրված տարբերակը տեղ է գտել նաև յուրօրյան ալիքում՝ <https://youtu.be/bEbCjR4JGSc>:

Հրապարակվել է «ՀՀ ԳԱԱ ԼԻ Տեղեկագիրք 2021» գիրքը, որը ներկայացնում է 2021թ. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական աշխատանքները, աշխատակիցների հրապարակումների հիմնական բովանդակությունը՝ երեք լեզուներով և ձեռք բերված արդյունքները՝ ըստ հաստատության հիմնարար գիտական հետազոտությունների ուղղությունների:

Ե. ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ, ԲԱՌԱՐԱՆՆԵՐ

1. Լեզու և լեզվաբանություն, 1(26), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 126 էջ:
2. Համբարձումյան Վ.Գ., Հայերենի բառաքնություն և ստուգաբանություն, Պրակ 1, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, 192 էջ:

3. Հովհաննիսյան Ն.Գ., Նույնանիշների՝ XVIII դարի ավանդված ձեռագիր բառարանների քննություն, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 264 էջ:
4. Նոր բառեր, Պրակ Է (Կազմողներ՝ Գալստյան Ա.Ս., Գալստյան Ա.Ս., Հովսեփյան Գ.Կ., Մարգարյան Ի.Ա., Մկրտումյան Ա.Ա., Սարգսյան Ն.Ս.), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 260 էջ:
5. Ջահուկյանական ընթերցումներ, 1-2 (17-18), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 240 էջ:
6. Վարդանյան Ա.Վ., Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 64 էջ:
7. ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի Տեղեկագիրք 2021, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 192 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

1. Արդի հայերենի հետազոտություններ, Պրակ Ա, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 240 էջ:
http://language.sci.am/sites/default/files/ardi_hayereni_hetazotowtyowner.pdf
2. Բարբառագիտական հետազոտություններ, Պրակ Ա, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 179 էջ:
http://language.sci.am/sites/default/files/barbarhagitakan_hetazotowtyowner_0.pdf
3. Լեզու և խոսք: Բազմալեզու գիտական հանդես, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 75 էջ: <http://las.sci.am>
4. Կիրառական լեզվաբանության հարցեր, Պրակ Ա, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 102 էջ:
http://language.sci.am/sites/default/files/kirarhakan_lezvabanowtyan_hartser.pdf
5. Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր, Պրակ Ա, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 118 էջ:

- http://language.sci.am/sites/default/files/hayereni_patmakan_owsowmnasirowtyan_hartser_0.pdf
6. «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 316 էջ:
- <http://language.sci.am/sites/default/files/gharabagh-shamakhi.pdf>
7. Միմոնյան Ն. Մ., Բառաքնական և ստուգաբանական դիտարկումներ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 77 էջ:
- http://language.sci.am/sites/default/files/book/stowgabanakan_ev_barhakknnakan_ditarkowmnersh.pdf

ԴԱՍՍԱԳՐՔԵՐ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Գևորգյան Գ.Գ., Արևելահայերենի նորմեր և շեղումներ (տեսագործնական ձեռնարկ), Ե., «Զանգակ» հրատ., 2022, 240 էջ:

ԳՐԱԽՈՍՎՈՂ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ ՈՒ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԳՐԱԽՈՍՎՈՂ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐՈՒՄ ՏՊԱԳՐՎԱԾ ՀՈՐՎԱԾՆԵՐ

1. Առաքելյան Կ.Լ., Բառապաշարի տարբեր շերտերի ոճական-երգիծական կիրառությունները Նշան Պեշիկթաշլեանի «Հիւանդտես» կատակերգութեան մէջ, «Էջմիածին», Բ, 2022, էջ 129-134:
2. Առաքելյան Կ.Լ., Երգիծանքի ոճական միջոցները Նշան Պեշիկթաշլեանի «Գրպանի բառարանում», Ե., «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2 (665), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 163-172:
3. Առաքելյան Կ.Լ., Գիտնականը, մանկավարժը, մարդը (Աշոտ Սուքիասյան - 100), Ե., «Գիտության աշխարհում», № 3, «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, էջ 14-17:

4. Առաքելյան Կ.Լ., Միսաք Մեծարենցի՝ անզլերենից կատարած չափածո թարգմանությունների լեզուն, Ե., «Բանբեր հայագիտության», միջազգային գիտական հանդես, № 3 (30), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 204-218:
5. Ասոյան Թ.Ա., «Մշակ» թերթի անդրադարձը Վենետիկի Մխիթարյաններին, Գավառ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 13, «Քոփի Փրինթ» հրատ., 2022, էջ 377-389:
6. Ավետյան Ս.Ռ., Մրցակից լեզվական միտումների լույսի ներքո հայերենի որոշ ձևաչարահյուսական երևույթների բացատրման փորձ, Ե., «Հայագիտության հարցեր», № 2 (26), ԵՊՀ հրատ., 2022, էջ 191-203:
7. Ավետյան Ս.Ռ., Արդի հայերենի *կ(ը)- ապառնիի* և *-ու ապառնիի* իմաստագործառության փոխհարաբերության հարցի շուրջ, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», №2 (38), ԵՊՀ հրատ., 2022, էջ 22-35:
8. Ավետյան Ս.Ռ., Դասական հայերենում ապառնիությունն արտահայտող ձևերի իմաստագործառության քննություն, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 3 (39), ԵՊՀ հրատ., 2022, էջ 66-81:
9. Ավետյան Ս.Ռ., Աստվածաշնչում հայերենի *-ոց* ապառնիի կիրառությունների քննություն հունարեն բնագրի համեմատությամբ, Ե., «Էջմիածին», Թ, 2022, էջ 38-56:
10. Ավետյան Ս.Ռ., Աստվածաշնչում հին հայերենի ստորադասական եղանակի կիրառությունների քննություն հունարեն բնագրի համեմատությամբ, Ե., «Վէմ» թիվ 4 (80), հոկտեմբեր - դեկտեմբեր, «Վէմ հանդես» հրատ., 2022, էջ 120-149:
11. Ավետյան Ս.Ռ., Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի իմաստագործառության փոխհարաբերության հարցի շուրջ, Ե., «Պատմություն և մշակույթ», № 2, ԵՊՀ հրատ., 2022, էջ 161-176:

12. Բառնասյան Ջ.Ա., Ածանցումը Շիրակի մարզի գյուղերի խոսվածքներում, Ե., «Լեզու և խոսք», № 1(2), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 5-12:
13. Գալստյան Ա.Ս., Արդի հայերենի նորակազմ բառերի իմաստային-կառուցվածքային վերլուծության հարցեր, Ե., «Լեզու և լեզվաբանություն», №1 (26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 48-55:
14. Գևորգյան Գ.Գ., Անահիտ Տոնապետյան (ծննդյան 60-ամյակի առթիվ), Ե., «Պատմաբանասիրական հանդես», № 1(219), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 318-322:
15. Գևորգյան Գ.Գ., Չմշկածագի բարբառը, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», թիւ 1-12, Մխիթարեան հրատ., 2022, էջ 181-194:
16. Gevorgyan G.G., Grammatical Polysemy in Armenian Dialects, Gori, "Philological researches", № 4, 2022, p. 82-88.
17. Գրիգորյան Գ.Գ., Չ ժխտական նախածանցով դիպվածային նորակազմություններ, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 166-177:
18. Գրիգորյան Գ.Գ., Բաղաձայնի ազդեցությունը ձայնավորի վրա բաղաձայն-ձայնավոր կապակցություններում (փորձառական հետազոտություն), Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 56-62:
19. Գրիգորյան Ս.Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի իրավական հասկացությունների իմաստային քննություն, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 102-107:
20. Grigoryan S.M., Semantic Examination of Legal Concepts Grigor Tatevatsi's "Book of Questions", Kutaisi, "Language and Culture", № 28, 2022, p. 97-99.
21. Dalalyan T.S., On Some Armenian-Georgian Lexical Isoglosses // The Caucasus on the Crossroads of International Trade and Cultural Exchanges: Proceedings of the International Scientific Conference, vol. 1, Yerevan, 2022, p. 93:
22. Далалян Т.С., Из истории одной армяно-осетинской изоглоссы ard- (<и.-е. *art-), Москва-Ереван, "Армянский гуманитарный

- вестник" (памяти В.А.Ефимова. Специальный выпуск), Российская академия наук, Институт языкознания, Институт археологии и этнографии ИАН РАН, № 8, Изд. ИАЭ, 2022, с. 41-52.
23. Թաղևոսյան Հ.Ս., Նոր բառիմաստներ 13-րդ դարի բժշկարաններում («Քննութիւն բնութեան մարդոյ եւ նորին ցաւոց», «Բժըշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»), Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 17-27:
24. Թելյան Լ.Գ., Շարահյուսական միավորների և կապակցության եղանակների հարաբերակցության շուրջ, Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 63-76:
25. Թորոսյան Հ.Վ., Կենդանանուններով կազմված դարձվածային միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները արդի հայերենում և պարսկերենում, Գյումրի, «Գիտական աշխատություններ», № 1(25), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2022, էջ 122-132:
26. Torosyan R.V., On the Ethnonym Gēl in Classical Persian Literature, Pažūhešhā-ye zabānī-adabī-ye Qafqāz va Kāspiyan, Markaz-e dāyeratolmaāref-e bozorg-e eslāmi, IRI, Tehran, s. 25-29:
27. Խաչատրյան Ա.Ս., Արևմտահայերենի նոր բառերի բաղադրիչների բառակազմական հարաբերությունների մասին, Ե., ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 5 (59), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 71-78:
28. Խաչատրյան Հ.Ռ., Խառատյան Մ.Հ., Բառաբարդումը որպես յուրահատուկ լեզվամտածողության արտահայտության միջոց Համշենի բարբառում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 28-40:
29. Խաչատրյան Հ.Ռ., *Տան հատակ (գետին)* հասկացության բառանունները բարբառային հայերենում», Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 237-240:

30. Խաչատրյան Հ.Ռ., «Գետին» հասկացության բառանունները և նրանց իմաստային զարգացումները բարբառային հայերենում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 82-94:
31. Խաչատրյան Վ.Մ., Ղազար Փարպեցու երկերի ձեռագրերի լեզվական տարբերությունների շուրջ, Ե., «Լրաբեր» գիտական հոդվածների ժողովածու, մաս II, «Ճարտարագետ» հրատ., 2022, էջ 685-694:
32. Խաչատրյան Վ.Մ., Ս. Սարգսյան, Լեզվաբանության տեսության հարցեր, «Տիր» հրատ., Ե., 2021, 166 էջ, (Գրախոսություն), Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 97-101:
33. Խաչիբաբյան Ն.Պ., Բառերի սխալ գործածություններն արդի հայերենում, Ե., ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 2 (56), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 43-51:
34. Կատվայան Վ.Լ., Հինհայերենյան մի քանի հնչյունական հատկանիշների արտացոլումը արդի հայ բարբառներում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 41-57:
35. Կատվայան Վ.Լ., Կարնո բարբառը 20-րդ դարի սկզբին գրաված հեքիաթներում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 95-117:
36. Կատվայան Վ.Լ., Բարբառային բառապաշարի՝ տղամարդկանց և կանանց բնութագրող շերտերի շուրջ (ըստ Բայազետի բարբառի ընձեռած նյութի), Գավառ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 13, «Քոփի Փրինթ» հրատ., 2022, էջ 363-378:
37. Կատվայան Վ.Լ., Կիլիկիայի հայերենի մասին, Ե., «Լեզու և խոսք», № 1(2), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 28-42:
38. Կատվայան Վ.Լ., Հաղորդի բարբառի մասին, «Պատմաբանասիրական հանդես», № 3 (221), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 144-154:
39. Կատվայան Վ.Լ., Վարդենիսի տարածաշրջանի արդի լեզվական պատկերը, Ե., «Սոթք. Հողի մշակութային հիշողությունը»

-
- գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 2022, էջ 58-67:
40. Կատվալյան Վ.Լ., Կարնո բարբառը հեքիաթներում, Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 240-241:
 41. Հակոբյան Ֆ.Ա., Գրաբարի էլեկտրոնային կորպուսի ստեղծման նպատակը և խնդիրները, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 58-66:
 42. Հովհաննիսյան Լ.Շ., Թվականների հնաբանությունները Ղարաբաղի (Արցախի) բարբառում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 67-73:
 43. Հովհաննիսյան Ն.Գ., Մեր լեզուն, մեր խոսքը և տրամաբանությունը, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 118 -129:
 44. Հովհաննիսյան Ս.Գ., Անհատական լեզվաշխարհի շերտային դրսևորումները (ըստ Էդ.Աթայանի՝ մարդկության կյանքի մակրոովուլերի տեսություն), Ե., «Լեզու և լեզվաբանություն», №1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 11-20:
 45. Հովսեփյան Գ.Կ., Լյուդվիգ Դուրյանի բառաշխարհը, Գավառ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 13, «Քոփի Փրինթ» հրատ., 2022, էջ 411-419:
 46. Ղամոյան Լ.Ա., «Հագուստ» հասկացության բառային դրսևորումները հայերենում, «Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ», գիտական հոդվածների ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, 2022, էջ 266-273:
 47. Ղամոյան Լ.Ա., Փոխաբերական իմաստը «հագուստ» իմաստային դաշտում, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., №2 (38), ԵՊՀ հրատ., 2022, էջ 79-88:

48. Ղամոյան Լ.Ա., Բնիկ հայերեն բառեր «հագուստ» իմաստային դաշտում, Ե., «Պատմաբանասիրական հանդես», № 2 (214), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 188-200:
49. Ղամոյան Լ.Ա., Բառիմաստի փոփոխություններ «հագուստ» իմաստային դաշտում, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», թիւ 1-12, Մխիթարեան հրատ., 2022, էջ 161-180:
50. Ղամոյան Լ.Ա., «Հագուստ» հասկացության նշող բառերի համանունության դրսևորումները հայերենում, Ե., «Հայագիտական հանդես», № 3-4 (57-58), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 48-57:
51. Մարաշյան Հ.Գ., Արևմտահայ նորաբանությունների իմաստաբանական քննություն, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 178-186:
52. Մեսրոպյան Հ.Հ., «Բարեգործություն» հասկացության անվանումները հայերենի տարածքային տարբերակներում, Բարեգործությունը հայոց մեջ «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» հիմնադրման 140-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (16 նոյեմբերի 2021 թ.), Ե.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստիտ., 2022, էջ 3-20:
53. Մեսրոպյան Հ.Հ., Շիրակի ժողովրդական երգերում գործածված բուսանունների իմաստային-գործառական յուրահատկությունները, Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 256-257:
54. Մեսրոպյան Հ.Հ., Գարեգին Ա. Քեսաբցի կաթողիկոսի քարոզխօսութեան լեզուական առանձնայատկութիւնները, «Էջմիածին», Ը, 2022, էջ 75-85:
55. Միքայելյան Ս.Ա., Արաբական փոխառությունների հայերեն բարբառային բառաշերտը, Ե., «Պատմաբանասիրական հանդես», № 1 (219), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 201-209:
56. Միքայելյան Ս.Ա., Հայերենի արաբական միջնորդավորված փոխառությունների շուրջ (բարբառային բառաշերտ. զուգադ-

-
- րական քննություն), Ե., «Բանբեր Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի. լեզվաբանություն և բանասիրություն», № 1 (62), ԲՊՀ «Լինգվա» հրատ., 2022, էջ 237-251:
57. Mkhitaryan G.M., Bible Translation as a Factor in the Preservation and Development of the Armenian Language, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 157-165:
58. Ներսիսյան Վ.Ա., Ածանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 130-145:
59. Պապիկյան Ս.Վ., Իրանական ծագման հատկական փոխառությունների քննություն, Ե., «Լեզու և լեզվաբանություն», №1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 77-84:
60. Սարգսյան Մ.Ա., Հայ լեզվափիլիսոփայության անվանի ներկայացուցիչը, Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 1 (26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 3-10:
61. Սարգսյան Մ.Ա., Էդուարդ Աթայան. ակադեմիկոսը և լեզվափիլիսոփան (Օննոյան 90-ամյակի առթիվ), Ե., «Գիտության աշխարհում», № 4, «Գիտություն» հրատ., 2022, էջ 3-8:
62. Sargsyan M.A., Gender Features of Male and Female Speech in Armenian Language, Yerevan, "Katchar", № 2, ISEC NAS RA pub., pp. 63-78:
63. Սարգսյան Ն.Ս., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները ըզձական եղանակի համակարգում, Ե., «Բանբեր Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի. Լեզվաբանություն և բանասիրություն», № 1(62), «Լինգվա» հրատ., 2022, էջ 284-298:
64. Սարգսյան Ն.Ս., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները սահմանական եղանակի համակարգում. անցյալ կատարյալ, Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Հասարակական գիտություններ», պրակ 2, «ԱրՊՀ հրատ.», 2022, էջ 82-97:

65. Սարգսյան Ն.Ս., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները հրամայական եղանակի համակարգում. արգելական հրամայական, Ե., «Հայագիտական հանդես», №2 (56), Խ. Արքայանի անվ. ԵՊՄՀ հրատ., 2022, էջ 52-61:
66. Սարգսյան Ն.Ս., Որոշ դիտարկումներ արևմտահայերենի «կոր» մասնիկի վերաբերյալ, Վանաձոր, «ՎՊՀ գիտական տեղեկագիր. Հումանիտար և հասարակական գիտություններ», № 1, Հ. Թումանյանի անվ. ՎՊՀ հրատ., 2022, էջ 102-107:
67. Սարգսյան Ն.Ս., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները պատճառական բայերի խոնարհման համակարգում (բուն հրամայական), Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Հասարակական գիտություններ», պրակ 1, «ԱրՊՀ հրատ.», 2022, էջ 39-47:
68. Սարգսյան Ն.Ս., Նորակազմ ածականների կազմության միջոցներն ու եղանակները, Վանաձոր, «ՎՊՀ գիտական տեղեկագիր. Հումանիտար և հասարակական գիտություններ», պրակ 2, Հ. Թումանյանի անվ. ՎՊՀ հրատ., 2022, էջ 44-53:
69. Սիրունյան Տ.Ղ., Ձեռագիր քերականության մի «լուծմունքի» ուսումնասիրություն (ԺԵ դար), Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 2 (27), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 38-48:
70. Սուքիասյան Հ.Վ., Քոշատաշյան Ս.Ս., Հայերենի ուսուցումը բժշկական բուհերում, Գավառ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 13, «Քոփի Փրինթ» հրատ., 2022, էջ 421-429:
71. Սուքիասյան Հ.Վ., Զաքարյան Հ., Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը, Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (Գյումրի, 23-24 սեպտեմբերի, 2022), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 267-268:
72. Վարդանյան Ա.Վ., *Արտակ* անձնանվան ստուգաբանությունը, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 74-81:

-
73. Վարդանյան Ա.Վ., Խառատյան Մ.Կ., Սահակյան Ն.Գ., Դիտարկումներ ճահուկ-Վայքի միջբարբառի որոշ բուսանունների վերաբերյալ, Ե., «Լեզու և խոսք», № 1(2), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 43-60:
 74. Վարդանյան Ա.Վ., Հինհայերենյան իրողություններ Նախիջեվանի տարածքի բարբառներում, Ե., «Լեզու և խոսք», № 1(2), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 61-73:
 75. Տիոյան Ս.Կ., Բառապաշարի զուգադիր քննություն. հոմանիշ բառերը գրական արևմտահայերենում (բազմանդամ հոմանշային շարքեր), Ե., «Հայագիտական հանդես», № 3-4 (57-58), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 39-47:
 76. Տիոյան Ս.Կ., Ֆիշենկճեան Ա.Ա., Հատուկ անունների գրադարձության մի քանի խնդիրներ, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 39-47:
 77. Տիոյան Ս.Կ., *Փոխ(w)*- նախածանցով նորաբանությունները ժամանակակից արևմտահայերենում, Ե., ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 5 (59), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 50-60:
 78. Քումունց Մ.Ս., Կրոնին և նախապաշարմունքին վերաբերող մի քանի բառերի քննություն (ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի տվյալների), Ե., «Բանբեր համալսարանի. Բանասիրություն», № 2 (38), ԵՊՀ հրատ., էջ 89-96:
 79. Քումունց Մ.Ս., Ոսկրի խորհրդապաշտությունը Ա. Բակունցի «Կարմրաքար» վեպում, Ե., «Գրականագիտական հանդես», ԻԴ, № 1, «Արմավ» հրատ., 2022, էջ 330-343:
 80. Քումունց Մ.Ս., Հոմանշության բառիմաստաբանական գործառույթները Սյունիք-Արցախ բարբառային տարածքում, Ե., Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1660-ամյակին նվիրված «Հայոց գրերը և հայ դպրոցը» միջազգային հայերենագիտական գիտաժողովի նյութեր, 2022, էջ 101-115:
 81. Քումունց Մ.Ս., Հին հայերենից Սյունիք-Արցախ բարբառախմբին անցած իրանական փոխառությունների ձևիմաստային

- նկարագիրը, Ստեփանակերտ, «Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրները. հնարավորություններ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, «Մերոպ Մաշտոց համալսարան», 2022, էջ 67-70:
82. Քումունց Մ.Ս., Ղուկաս Մերաստացու «Դավիթ Բեկ կամ պատմություն դավանցոց»-ի տեղանվանական համակարգը, Ե., «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի», № 2 (10), «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, էջ 93-106:
83. Քումունց Մ.Ս., Մովսես Խորենացին Ստեփանոս Օրբելյանի պատմության, Ղազար Փարպեցու «Թղթի» և ավանդագրույցներում, Ստեփանակերտ, «Գ. Նարեկացի» համալսարանի «Դըպրատուն» հանդես, №2, «Դիզակ պլյուս» հրատ., 2022, էջ 15-27:
84. Քումունց Մ.Ս., -ՏԻ||ԴԻ ածանցով բարբառային մի քանի բառերի քննություն, Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», Պրակ 2, ԱրՊՀ հրատ., 2022, էջ 31-40:
85. Քումունց Մ.Ս., Արևելյան լեզուներից անցած փոխառությունների որակական և քանակական հատկանիշները (ըստ Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի), Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 248-252:
86. Քումունց Մ.Ս., Հին Գորիսը, տեղադրութեան կեղծ թեզը եւ նորայայտ արձանագրութիւնները, Երուսաղէմ, «Սիոն», թիւ 8-12, տպարան Սրբոց Յակոբեանց, 2022, էջ 379-392:
87. Քումունց Մ.Ս., Բուրդուր: Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի բարբառը Արևմտյան Անատոլիայում, Ստեփանակերտ, «Հայրենագրկման և գոյաբանական պայքարի գաղափարն արևմտահայ գրականության մեջ» գիտաժողովի նյութեր, «Գ.Նարեկացի» համալսարան, «Դիզակ պլյուս» հրատ., 2022, էջ 57-70:

-
88. Քումունց Մ.Ս., Սյունիքի բնությունը տեղանվանական համակարգում, Ե., «Սյունիք. Մշակույթը և բնությունը» գիտաժողովի ամփոփագրեր, ՀԱԻ հրատ., էջ 60-61:
 89. Ֆելեքյան Մ.Հ., Իմաստային նորաբանություններ գրական արևմտահայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 146-156:
 90. Ֆիշենկճեան Ա.Ա., Տիոյեան Ս.Կ., Եղանակաւորիչ եզրոյթն ըստ արեւմտահայերէնի դասագիրքերու, «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 201-214:
 91. Ֆիշենկճեան Ա.Ա., «Շարահիւտութիւն» թեման արեւմտահայերէնի դասագիրքերու մէջ, Հայերենագիտական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 70-78:

ՄԱՍ II

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՈՑԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 2022 Թ. ԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ա. ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

2022 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ԲԱՌԱՐԱՆ

Նոր բառեր, Պրակ Է (Կազմողներ՝ Գալստյան Ա.Ս., Գալստյան
Մ.Ա., Հովսեփյան Գ.Կ., Մարգարյան Ի.Ա., Մկրտումյան Ա.Ա.,
Մարգարյան Ն.Մ.), Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 260 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Արդի հայերենի հետազոտություններ, Պրակ Ա, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ
հրատ., 2022, 240 էջ:

ՀՈՂՎԱԾՆԵՐ

1. Առաքելյան Կ.Լ., Բառապաշարի տարբեր շերտերի ոճական-
երգիծական կիրառությունները Նշան Պեշիկթաշլեանի «Հի-
ւանդտես» կատակերգութեան մէջ, «Էջմիածին», Բ, 2022, էջ 129-
134:
2. Առաքելյան Կ.Լ., Երգիծանքի ոճական միջոցները Նշան Պեշիկ-
թաշլեանի «Գրպանի բառարանում», Ե., «Լրաբեր հասարակա-

- կան գիտությունների», № 2 (665), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 163-172:
3. Առաքելյան Կ.Լ., Գիտնականը, մանկավարժը, մարդը (Աշոտ Սուքիասյան - 100), Ե., «Գիտության աշխարհում», № 3, «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, էջ 14-17:
 4. Առաքելյան Կ.Լ., Միսաք Մեծարենցի՝ անզլերենից կատարած չափածո թարգմանությունների լեզուն, Ե., «Բանբեր հայագիտության», միջազգային գիտական հանդես, № 3 (30), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 204-218:
 5. Ասոյան Թ.Ա., «Մշակ» թերթի անդրադարձը Վենետիկի Մխիթարյաններին, Գավառ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 13, «Քոփի Փրինթ» հրատ., 2022, էջ 377-389:
 6. Ասոյան Թ.Ա., Շարահյուսական հարցերի իշխանյանական մեկնաբանումներ, Հայերենագիտական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 3-13:
 7. Գալստյան Ա.Ս., Արդի հայերենի նորակազմ բառերի իմաստային-կառուցվածքային վերլուծության հարցեր, Ե., «Լեզու և լեզվաբանություն», №1 (26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 48-55:
 8. Թեյլան Լ.Գ., Շարահյուսական միավորների և կապակցության եղանակների հարաբերակցության շուրջ, Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 63-76:
 9. Խաչատրյան Ա.Ս., Արևմտահայերենի նոր բառերի բաղադրիչների բառակազմական հարաբերությունների մասին, Ե., ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 5 (59), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 71-78:
 10. Խաչիբաբյան Ն.Պ., Բառերի սխալ գործածություններն արդի հայերենում, Ե., ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 2 (56), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 43-51:
 11. Հովսեփյան Գ.Կ., Լյուդվիգ Դուրյանի բառաշխարհը, Գավառ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 13, «Քոփի Փրինթ» հրատ., 2022, էջ 411-419:

12. Ղամոյան Լ.Ա., «Հագուստ» հասկացության բառային դրսևորումները հայերենում, «Հիմնարար և կիրառական գիտական հետազոտություններ», գիտական հոդվածների ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոն, 2022, էջ 266-273:
13. Ղամոյան Լ.Ա., Փոխաբերական իմաստը «հագուստ» իմաստային դաշտում, Բանբեր Երևանի համալսարանի, Ե., №2 (38), ԵՊՀ հրատ., 2022, էջ 79-88:
14. Ղամոյան Լ.Ա., Բնիկ հայերեն բառեր «հագուստ» իմաստային դաշտում, Ե., «Պատմաբանասիրական հանդես», № 2 (214), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 188-200:
15. Ղամոյան Լ.Ա., Բառիմաստի փոփոխություններ «հագուստ» իմաստային դաշտում, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», թիւ 1-12, Մխիթարեան հրատ., 2022, էջ 161-180:
16. Ղամոյան Լ.Ա., «Հագուստ» հասկացության նշող բառերի համանունության դրսևորումները հայերենում, Ե., «Հայագիտական հանդես», № 3-4 (57-58), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 48-57:
17. Ղամոյան Լ.Ա., Ածանցումը «հագուստ» իմաստային դաշտում, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Պրակ Գ, Ե., Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիա, Copy Print LLC հրատ., 2022, էջ 49-56:
18. Մարաշլյան Հ.Գ., Արևմտահայ նորաբանությունների իմաստաբանական քննություն, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 178-186:
19. Ներսիսյան Վ.Ա., Ածանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 130-145:
20. Պապիկյան Ս.Վ., Իրանական ծագման հատկական փոխառությունների քննություն, Ե., «Լեզու և լեզվաբանություն», №1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 77-84:

21. Սարգսյան Ն.Մ., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները ըղձական եղանակի համակարգում, Ե., «Բանբեր Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի. Լեզվաբանություն և քանասիրություն», № 1(62), «Լինգվա» հրատ., 2022, էջ 284-298:
22. Սարգսյան Ն.Մ., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները սահմանական եղանակի համակարգում. անցյալ կատարյալ, Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Հասարակական գիտություններ», պրակ 2, «ԱրՊՀ հրատ.», 2022, էջ 82-97:
23. Սարգսյան Ն.Մ., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները հրամայական եղանակի համակարգում. արգելական հրամայական, Ե., «Հայագիտական հանդես», №2 (56), Խ. Աբովյանի անվ. ԵՊՄՀ հրատ., 2022, էջ 52-61:
24. Սարգսյան Ն.Մ., Որոշ դիտարկումներ արևմտահայերենի «կոր» մասնիկի վերաբերյալ, Վանաձոր, «ՎՊՀ գիտական տեղեկագիր. Հումանիտար և հասարակական գիտություններ», № 1, Հ. Թումանյանի անվ. ՎՊՀ հրատ., 2022, էջ 102-107:
25. Սարգսյան Ն.Մ., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները պատճառական բայերի խոնարհման համակարգում (բուն հրամայական), Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր. Հասարակական գիտություններ», պրակ 1, «ԱրՊՀ հրատ.», 2022, էջ 39-47:
26. Սարգսյան Ն.Մ., Նորակազմ ածականների կազմության միջոցներն ու եղանակները, Վանաձոր, «ՎՊՀ գիտական տեղեկագիր. Հումանիտար և հասարակական գիտություններ», պրակ 2, Հ. Թումանյանի անվ. ՎՊՀ հրատ., 2022, էջ 44-53:
27. Սուքիասյան Հ.Վ., Քոշատաշյան Ս.Ս., Հայերենի ուսուցումը բժշկական բուհերում, Գավառ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 13, «Քոփի Փրինթ» հրատ., 2022, էջ 421-429:
28. Սուքիասյան Հ.Վ., Լ.Մ. Խաչատրյանի «Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան»-ի կիրառական արժեքը, Խ.

- Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Պրակ Գ, Ե., Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիա, Copy Print LLC հրատ., 2022, էջ 167-174:
29. Սուքիասյան Հ.Վ., Ջաքարյան Հ., Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը, Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնախնդիրներ» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (Գյումրի, 23-24 սեպտեմբերի, 2022), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 267-268:
 30. Տիոյան Ս.Կ., Բառապաշարի զուգադիր քննություն. հոմանիշ բառերը գրական արևմտահայերենում (բազմանդամ հոմանշային շարքեր), Ե., «Հայագիտական հանդես», № 3-4 (57-58), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., էջ 39-47:
 31. Տիոյան Ս.Կ., *Փոխ(w)*- նախածանցով նորաբանությունները ժամանակակից արևմտահայերենում, Ե., ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», № 5 (59), Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ հրատ., 2022, էջ 50-60:
 32. Տիոյան Ս.Կ., Ֆիշենկճեան Ա.Ա., Հատուկ անունների գրադարձության մի քանի խնդիրներ, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 39-47:
 33. Տիոյեան Ս.Կ., Քիլերճեան Պ.Ս., Դարձուածային միաւորները Յ. Մնձուրիի «Արմտան» ստեղծագործութեան մէջ, Հայերենագիտական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 42-53:
 34. Ֆելեքյան Մ.Հ., Հարաբերական ածականների բացատրության եղանակները արևմտահայերենի բառարաններում, Հայերենագիտական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 54-69:
 35. Ֆելեքյան Մ.Հ., Իմաստային նորաբանություններ գրական արևմտահայերենում, «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 146-156:

36. Ֆիշենկճեան Ա.Ա., Տիոյեան Ս.Կ., Եղանակաւորիչ եզրոյթն ըստ արեւմտահայերէնի դասագիրքերու, «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 201-214:
37. Ֆիշենկճեան Ա.Ա., «Շարահիւսութիւն» թեման արեւմտահայերէնի դասագիրքերու մէջ, Հայերենագիտական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 70-78:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Առաքելյան Կ., Միսաք Մեծարենցի՝ անգլերենից կատարած չափածո թարգմանությունների լեզուն (հոդված)

Արևմտահայ վաղամեռիկ քնարերգու Միսաք Մեծարենցը թարգմանել սկսել է վաղ հասակից թարգմանելով ինչպես արձակ, այնպես էլ չափածո ստեղծագործություններ:

Հոդվածում քննվում են Մեծարենցի՝ անգլերենից թարգմանած չափածո ստեղծագործությունների լեզվական առանձնահատկությունները: Մեծարենցը անգլերենից թարգմանել է անվանի բանաստեղծներ Չոսերի, Ֆիլդի և Փիքոքի ստեղծագործություններից՝ դրսևորելով անգլերենի խոր իմացություն: Թարգմանելիս աշխատել է հարազատ մնալ բնագրին՝ խուսափելով բառացի թարգմանությունից և ցուցաբերելով ստեղծագործական մոտեցում: Ըստ հոդվածագրի՝ Մեծարենցը լիովին օգտվել է հայերենի ընձեռած անսպառ հնարավորություններից, ընտրել ճշգրիտ ու տեղին համարժեքներ, տեղ-տեղ ասելիքն ավելի խորացրել ու հարըստացրել հուզական լիցքերով՝ բանաստեղծի իր տաղանդն ամբողջությամբ ի սպաս դնելով թարգմանչի առաքելության հաջողությանը:

Առաքելյան Կ., Բառապաշարի տարբեր շերտերի ոճական-երգիծական կիրառությունները Նշան Պեշիկթաշյանի «Հիվանդոտես» կատակերգության մեջ (հաղորդում)

Հոդվածում նշվում է, որ Նշան Պեշիկթաշյանի «Հիվանդոտես» կատակերգությունը մի դրվագ է ֆրանսահայերի կյանքից: Ժանրային առանձնահատկություններով պայմանավորված՝ այս թատերախաղում, ըստ հոդվածագրի, բացակայում կամ գրեթե բացակայում է հեղինակային խոսքը, առկա են միայն գործող անձանց մենախոսություններ ու երկխոսություններ: Բնականաբար կերպարների խոսքը դառնում է ինքնաբերությագրական և կերպարային անհատականացման հիմնական ու միակ միջոցը: Այս տեսանկյունից քննվում են բառապաշարի գործուն և ոչ գործուն բառաշերտերը, դրանց ոճական-կիրառական հնարավորությունները: Ուշադրություն է դարձվում «Հիվանդոտես» կատակերգության մեջ գործածվող խոսուն երգիծական անուններին, համագործածական բառաշերտին պատկանող, բայց և փոխաբերորեն գործածվող բառերին, ձևախմբային բառախմբերին՝ հոմանիշներին և հականիշներին, հնաբանություններին, բարբառային բառերին, օտարաբանություններին և բառապաշարային այլ իրողություններին: Հոդվածագրի կարծիքով՝ նշված խմբերին պատկանող բառերը երբեմն կիրառվում են կողք կողքի՝ լրացուցիչ ոճական լիցքեր հաղորդելով շարադրանքին: Խոսքի ոճական արտահայտչականությանը նպաստում են դարձվածային միավորները, առած-ասացվածքները, թևավոր խոսքերը: Պեշիկթաշյանը երբեմն կիրառում է այնպիսի արտահայտություններ, որոնք կարելի է համարել դարձվածային միավորի դիպվածային տարբերակ:

Հոդվածագիրը եզրակացնում է, որ բառապաշարի տարբեր շերտերի պատկանող բառերի կիրառությունները նպաստել են ասելիքն արտահայտիչ և պատկերավոր դարձնելուն՝ ստեղծելով իրավիճակային և կերպարային երգիծական անկրկնելի միջավայր:

**Առաքելյան Կ., Երգիծանքի ոճական միջոցները Նշան
Պեշիկթաշյանի «Գրպանի բառարանում» (հոդված)**

Հոդվածում ներկայացվում և արժևորվում են երգիծական բառարանները որպես երգիծական գրականության անքակտելի մաս: Ըստ հոդվածագրի՝ այդպիսի բառարաններ գոյություն են ունեցել միշտ: Դրանք ստեղծողները հաճախ եղել են երգիծաբանության դասականները. մասնավորապես հայ իրականության մեջ նման բառարան ստեղծել է Երվանդ Օտյանը, որը կազմել է «Ընթացիկ բառարան»-ը: Այնուհետև հոդվածագիրը նշում է, որ երգիծական բառարան է հեղինակել նաև ֆրանսահայ երգիծաբան Նշան Պեշիկթաշյանը և այն անվանել «Գրպանի բառարան». այն ներառում է 126 գլխաբառ: Գրողը նպատակ է ունեցել պատկերավորման, արտահայտչական ամենատարբեր միջոցներով, բառերի հետաքրքիր ու անսպասելի ստուգաբանություններով և բացատրություններով ու զանազան ձևերով ծաղրել հասարակության մեջ առկա արատավոր տարբեր երևույթներ ու իրողություններ՝ փորձելով սթափեցնել ընթերցողին:

Ն. Պեշիկթաշյանը բառահոդվածը կազմելիս, ինչպես արձանագրում է հոդվածագիրը, հաճախ է դիմել ստուգաբանությանը: Երբեմն նա մեջբերում է բառի իրական ստուգաբանությունը և դրա հիման վրա կառուցում երգիծական բառահոդված: Երբեմն էլ մտացածին ծիծաղաշարժ ստուգաբանությամբ խոսքին հաղորդում է հումորային երանգ: Կան դեպքեր, երբ նա բառն ստուգաբանում է որպես «երկլեզվյան» բաղադրիչներ ունեցող միավոր, որ դարձյալ ծառայում է խոսքը հումորով համեմելուն, դրան անսպասելիություն հաղորդելուն և այլն: Հաճախ էլ բառին տալիս է իր փոխաբերական մեկնաբանությունը, և բառի բացատրությունը դառնում է սաստիքայի խիստ ինքնատիպ դրսևորում: Երբեմն բառը բացատրելիս Ն. Պեշիկթաշյանն օգտագործում է մի շարք փոխաբերություններ, որոնք մեկ ամբողջական շղթա են կազմում և

առարկան կամ երևույթը համակողմանի բնութագրում, վերհանում տարբեր մերժելի կողմեր և փորձում առաջարկել լուծումներ:

Հողվածագիրն անդրադառնում է նաև առանձին հետաքրքրություններ կայացնող օտար բառերի բացատրությունների, պատկերավորման լեզվական միջոցներից բառարանում առկա բազմաթիվ հակադրությունների, որոնք հիմնականում կառուցվում են լեզվական և խոսքային հականիշների կիրառությամբ: Սրանք մեծ մասամբ կազմվում են հականիշ զույգերով, սակայն կան նաև հականիշ եռյակներով կազմվածներ: Պեշիկթաշյանի բառարանում հանդիպում են օքսիմորոնի, բառախաղի, շրջասության, կրկնության, բաղաձայնայնի, համակուտակման օրինակներ: Կան բացատրություններ՝ արտահայտված մեկ նախադասությամբ, բառակապակցությամբ և նույնիսկ բառով: Նման դեպքերում ասելիքը դառնում է ավելի կտրուկ, ավելի դիպուկ:

Հողվածագիրը եզրակացնում է, որ Նշան Պեշիկթաշյանի «Գրպանի բառարան»-ը առանձնանում է ոչ միայն իմաստային խորքով ու ենթաշերտերով, այլև աննախադեպ ճոխ լեզվով, լեզվաոճական զանազան միջոցների հմուտ ու տեղին օգտագործմամբ, ինքնատիպ բացատրություններով, ձևի ու բովանդակության կատարյալ ներդաշնակությամբ:

Ասոյան Թ., Շարահյուսական հարցերի իշխանյանական մեկնաբանումներ (հողված)

Հողվածում ներկայացվում են լեզվաբան Ռաֆայել Իշխանյանի հայացքները հայերենի շարահյուսական կառուցվածքի տարբեր իրողությունների վերաբերյալ: Նշվում է, որ Ռաֆայել Իշխանյանը հայ մշակույթի և գիտության հայտնի դեմքերից է, հասարակական-քաղաքական ակտիվ դիրքորոշում ունեցող անհատ: Լայն է եղել նրա հետաքրքրությունների շրջանակը՝ պատմություն, մատենագիտություն, գրականություն, սակայն նրա ուշադրության կենտրոնում հայոց լեզուն է, լեզվի մաքրության ու պահպանության խնդիրները: Լեզվաբանական ուսումնասիրությ-

յուններից առանձնացվում է «Արդի հայերենի շարահյուսություն. պարզ նախադասություն» աշխատությունը. Ռ. Իշխանյանը յուրովի է մեկնաբանում հայերենի շարահյուսական համակարգի հանգուցային հարցերը: Հարազատ մնալով որոշ ավանդական մոտեցումների՝ շատ դեպքերում լեզվական փաստերը ներկայացնում է նորովի:

Հոդվածում հեղինակն անդրադարձել է նաև Ռ.Իշխանյանի՝ շարահյուսության ուսումնասիրությունն ուսուցման նպատակահարմարությանն առնչելու տեսակետներին:

Ասոյան Թ., «Մշակ» թերթի անդրադարձը Վենետիկի Մխիթարյաններին («Մշակ» թերթի հրատարակման 150-ամյակի առթիվ) (հոդված)

Հոդվածում ներկայացվում է Վենետիկի Մխիթարյան միաբանության գործունեության մասին «Մշակ» թերթում հրատարակված նյութը: Նշվում է, որ հայ պարբերական մամուլի պատմության մեջ կարևոր տեղ է գրավում «Մշակ» թերթը, որին աշխատակցել են ժամանակի առաջադիմական հայացքների տեր մարդիկ:

Հոդվածում կարևորվում է այն, որ «Մշակ» թերթը շատ է անդրադարձել հասարակությանը հուզող սոցիալական, մշակութային, ազգային հարցերի, գնահատել դրանք գաղափարական նոր մոտեցումներով, տեղեկատվություն ապահովել տարբեր տարածաշրջաններից: 1873 թ. 40-րդ համարում թերթն անդրադարձել է Վենետիկի Մխիթարյան միաբանության գործունեությանը՝ որոշ կրոնական կողմնորոշումներով պայմանավորված: «Մշակ»-ը բարձր է գնահատել Մխիթարյանների գործունեությունը, սակայն հակադրել է նրանց գործունեության սկզբնական և վերջին (19-րդ դարի 2-րդ կեսի) շրջանները՝ նկատի ունենալով միաբանության որոշ անդամների անթաքույց հակումը դեպի կաթոլիկ Եկեղեցի: Ըստ որոշ հայ մտավորականների՝ եթե կաթոլիկությունը սկզբում

դիմակ էր՝ հայ մշակույթը զարգացնելու նպատակով, ապա հետագայում այն դառնում է էություն: Մխիթարյանների գործունեությունը ներկայացվում է հասունյանական-հակահասունյանական իրադարձությունների համայնապատկերում:

Հոդվածում վերլուծվում են «Մշակ»-ի դիտարկումները Մխիթարյան միաբանության գործունեության մասին:

Գալստյան Ա., Արդի հայերենի նորակազմ բառերի իմաստային-կառուցվածքային վերլուծության հարցեր (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ նորակազմ բառերի բառակազմական կաղապարների, հիմքերի ու ածանցների կապակցության քննությունն ի հայտ է բերում իմաստակառուցվածքային որոշակի առանձնահատկություններ: Հոդվածում ներկայացվում են նոր բառերի ստեղծման և տարածման որոշակի միտումներ ու օրինաչափություններ:

Մի քանի իմաստային (թեմատիկ) խմբերի ուսումնասիրման միջոցով բացահայտվում է որոշակի ածանցների և ածանցակերպների գործունացման երևույթը: Դիտարկվում են մի շարք նորակերտ ժամանականիշ բառեր: Ուշադրության առարկա են հատկապես մասնագիտություն, զբաղմունք նշանակող նորակերտ բառերը: Անդրադարձ է կատարվում նաև նոր կազմությունների ստեղծման ժամանակ նկատվող որոշ անճիշտ ձևերի: Հոդվածում քննվող փաստական նյութը «Նոր բառեր» բառարանի պրակներից է:

Թեյյան Լ., Շարահյուսական միավորների և կապակցության եղանակների հարաբերակցության շուրջ (հոդված)

Արդի հայերենի շարահյուսությանը նվիրված մասնագիտական գրականության մեջ շարահյուսական կապակցության եղանակների (համաձայնություն, խնդրառություն, առդրություն, «կախում») հարաբերակցության, այսինքն՝ դրանց գործողության ո-

լորտների բաշխվածության հարցը միասնական մեկնաբանության չի արժանացել: Դա պայմանավորվում է կապակցվող միավորների բնույթի, դրանց միջև առկա քերականական հարաբերության տարբեր գնահատումներով: Հոդվածն այդ կարգի մի քանի կապակցությունների (ենթակա-ստորոգյալ, բացահայտիչ-բացահայտյալ, որոշիչ-որոշյալ, հատկացուցիչ-հատկացյալ, կապ, կապվող բառ) կապակցման եղանակների մեկնաբանության տարբերությունները ներկայացնելու և դրանք մասնագիտորեն գնահատելու մի փորձ է:

Խաչատրյան Ա., Արևմտահայերենի նոր բառերի բաղադրիչների հարաբերությունների մասին (հոդված)

Հոդվածագիրն անդրադառնում է 2018-2021 թթ. արևմտահայ մամուլում («Հորիզոն», «Հայրենիք», «Նոր Հառաջ») առկա նորաբանությունների բաղադրիչների մի շարք փոխհարաբերությունների: Նշվում է, որ արևմտահայերենի բարդ բառերի գերակշռող մասում հիմնական իմաստային կենտրոնը վերջին բաղադրիչն է, որն արտահայտում է առաջին բաղադրիչով որոշակիացող իմաստ: Ընդ որում՝ գերադաս բաղադրիչը կարող է լինել անվանական կամ բայական: Հոդվածագիրը նշում է, որ այն դեպքում, երբ բայարմատը հանդես է գալիս որպես սերող հիմք, դրսևորվում է հիմնականում բայահիմքով և դերբայական հիմքով: Բայարմատի՝ բաղադրող հիմքում լինելու համեմատությամբ սերող հիմքի պարագայում այն ավելի սակավադեպ է, քանի որ բայը հագվադեպ է այլ խոսքի մասերի լրացում դառնում: Արևմտահայերենի (նաև՝ արևելահայերենի) անկախ դերբայներից անորոշը, ենթակայականը բաղադրություններում (բարդ և ածանցավոր բառեր) բառակազմությանը մասնակցում են նաև առանց փոփոխության՝ պահպանելով ոչ միայն ներածանցները, այլև բայական բառակազմական ածանց-վերջավորությունները: Ըստ հոդվածագրի՝ բայահիմքը որպես սերող հիմք ավելի քիչ է մասնակցում բառակազ-

մությանը, քան որպես բաղադրող հիմք: Որպես սերող հիմքեր՝ ավելի հաճախ հանդիպում են անորոշ և ենթակայական դերբայական հիմքերը՝ երբեմն պահպանելով նաև բայական վերջավորությունները:

Խաչիբաբյան Ն., Բառերի սխալ գործածություններն արդի հայերենում (հոդված)

Հոդվածում նշվում է, որ հայերենում շատ են լեզվական սխալ գործածությունները, որոնք տարածելուն նպաստում են և՛ զանգվածային լրատվամիջոցները, և՛ համացանցը: Այդ սխալները հիմնականում հանդիպում են առօրյա-խոսակցական լեզվում, բայց երբեմն էլ ՋԼՄ-ների և համացանցի լեզվական սխալները ներթափանցում են առօրյա-խոսակցական լեզու:

Հոդվածագիրը ներկայացնում է այն հարանուն բառերը, որոնց իմաստները ոչ ճիշտ տարբերակելը հաճախ բառերը սխալ գործածելու պատճառ է դառնում: Առանձնացվում են նաև օտար բառերի կիրառություններ հայերեն ընդունելի և գործուն համարժեքների փոխարեն, չեզոք սեռի բայերի՝ *ւ/* բայական ածանցով սը-խալ կիրառություններ, բայերի եղանակաժամանակային ձևերի սխալ կազմություններ: Նշվում է, որ հաճախ էլ բառերը գործածվում են հակառակ իմաստներով: Հոդվածագիրը սխալ ձևերին զուգահեռ ներկայացնում է նաև դրանց ճիշտ և հանձնարարելի տարբերակները:

Հովսեփյան Գ., Լյուդվիգ Դուրյանի բառաշխարհը (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ նորաբանությունների, նորակազմ բառերի ստեղծումը մշտապես խթանում է հայոց լեզվի բառապաշարի համալրման գործընթացը:

Հոդվածում քննվում են Լ. Դուրյանի երկերում առկա նորակազմ բառերը: Նրա բանաստեղծական ժողովածուները՝ «Կյանք ի-

մացյալ», «Այսքանը իմ կյանքից», և «Մաշտոց» պոեմը նորաստեղծ բառերով, ինքնատիպ բառակերտումներով բացահայտում են գրողի լեզվամտածողության համակարգը: Նորակազմությունների դիպուկ և հմուտ կիրառություններով բանաստեղծը օգտվում է հայոց լեզվի բառակազմական հնարավորություններից, ստեղծում յուրահատուկ և տպավորիչ նորակազմ բառեր՝ համալրելով հայոց լեզվի բառապաշարը:

Հոդվածագիրն արձանագրում է, որ երկնային մարմինների անվանումներով նորակերտ բառերը հիմնականում հոդակապով բարդություններ են: *Գույն* արտահայտող նորակազմ բառերում առանձնացվում է երկու խումբ. բառեր, որոնցում չկան գունանուններ, և նորակազմություններ, որոնց բաղադրիչներից մեկը որևէ գունանուն է: Շատ են բայահիմք վերջնաբաղադրիչներով կազմված նոր բառերը: Վկայվում են նաև *-ություն*, *-ունք*, *-ք* վերջածանցներով բազմաթիվ նոր կազմություններ: Նորակազմ բառերի շարքում առկա են հայրենիքին, հայոց լեզվին վերաբերող բառեր ու արտահայտություններ (*հայսծուխ*, *ազգաշուք*):

Ղամոյան Լ., Ածանցումը «Հագուստ» իմաստային դաշտում (հոդված)

Ուսումնասիրելով «Հագուստ» իմաստային դաշտի ածանցավոր բառերը՝ հոդվածագիրը փորձում է բացահայտել այդ համակարգի բառակազմական օրինաչափություններն ու առավել կենսունակ կաղապարները: Հոդվածում առանձնացվում են ածանցավոր բաղադրությունները՝ ըստ ածանցների քանակային հատկանիշի (մենածանց և բազմածանց), ըստ ածանցների՝ հիմքի նկատմամբ ունեցած դիրքի (նախածանցավոր և վերջածանցավոր), ըստ ածանցների գործածության հաճախականության (կենսունակ և ոչ կենսունակ): Առանձին ներկայացվում են *հագուստի*՝ գոյականակերտ և ածականակերտ ածանցներով կազմված անվանումները,

ուշադրության են արժանանում ինչպես փոխառություններով կազմված, այնպես էլ նորակազմ ածանցավոր բառերը:

**Ղամոյան Լ., «Հագուստ» հասկացություն նշող բառերի
համանունության դրսևորումները հայերենում (հոդված)**

Հոդվածագիրը, ներկայացնելով «Հագուստ» իմաստային (թեմատիկ) խումբը, առանձնացնում է համանունական շարքեր՝ ըստ անդամների քանակի (երկանդամ, եռանդամ, քառանդամ և այլն), ըստ համանուն միավորների բնույթի (բառական և բառաքերականական), ըստ ընդգրկման ծավալի (լրիվ, մասնակի և խառը), ըստ ստեղծման եղանակի (համարմատ և տարարմատ): Դիտարկվում են նաև նույնահունչ և նույնագիր համանունները: Նման համանունների ոճական արժեքը հիմնականում դրսևորվում է խոսքային իրադրության մեջ, հատկապես գեղարվեստական խոսքում:

**Ղամոյան Լ., Փոխաբերական իմաստը «Հագուստ»
իմաստային դաշտում (հոդված)**

Հոդվածագիրն ուսումնասիրում և պարզաբանում է *հագուստ* հասկացություն նշող բառերի փոխաբերական իմաստ(ներ)ը: Սովորաբար փոխաբերական իմաստը դրսևորվում է ըստ ձևի, գույնի, չափի, առարկաների նմանության, գործողության և այլ գուգորդումներով: Հոդվածագիրը նկատում է, որ *հագուստ* հասկացություն նշող բառիմաստների (հատկապես՝ փոխաբերական) փոփոխությունները պայմանավորվում են նաև բառակազմական իրողություններով. որպես բառակազմական հիմք հանդես եկող բաղադրիչները (բառ, արմատ) պահպանում են իրենց հիմնական իմաստները, իսկ հիմք(եր)ի և հավելվող բաղադրիչների շնորհիվ ստանում են նոր իմաստներ (նաև փոխաբերական), և կազմվում են նոր բառեր:

Ղամոյան Լ., «Հագուստ» հասկացության բառային դրսևորումները հայերենում (հոդված)

Քննելով *հագուստ* թեմատիկ խմբի *հագուստ-հանդերձ-զգեստ-շոր* հոմանշային շարքի բառերի հնարավոր գործածությունները՝ հոդվածագիրը պարզում է, որ *հագուստ*, *զգեստ* բառերն ավելի շատ գործածվում են գրական հայերենում, *շոր*-ը՝ առօրյա-խոսակցականում, իսկ *հանդերձ*-ը գործածվում է հիմնականում գեղարվեստական խոսքում: Բառակազմական մեծ հաճախականություն ունեն *զգեստ* և *շոր*, նորակազմություններում՝ *հանդերձ* բառերը: Վերոնշյալ հոմանշային շարքի անդամներից բաղադրված բարդությունների միջոցով կազմվում են բազմաթիվ բառային տարբերակներ՝ *տարաբաղադրիչ համանիշներ*, որոնք ունեն իմաստային նույնություն և հնչյունական որոշ զանազանություն, և առկա են լեզվի զարգացման ներկա փուլում՝ անկախ գործածական, կանոնական լինելուց ու գործառական բնութագրից:

Ղամոյան Լ., Բնիկ հայերեն բառեր «Հագուստ» իմաստային դաշտում (հոդված)

Հոդվածագիրը, անդրադառնալով *Հագուստ* իմաստային դաշտում բնիկ հայերեն բառերի քննությանը, ներկայացնում է մոտ 3 տասնյակ բառ: Լեզվի զարգացման ընթացքում, ըստ հոդվածագրի, դրանք իմաստային զգալի փոփոխություններ են կրել. ա) կորցրել են իրենց առաջնային նշանակությունը, բ) բառի հիմնական, առաջնային իմաստը դարձել է ոչ հիմնական, գ) որոշ բառեր պահպանել են իրենց առաջնային իմաստները, երբեմն ավելացել են նոր (հաճախ՝ փոխաբերական) իմաստներ, դ) որոշ բառեր ունեն գործածության ոչ մեծ հաճախականություն (գործածվում են հիմնականում գեղարվեստական գրականության մեջ):

**Ղամոյան Լ., Բառիմաստի փոփոխություններ «Հագուստ»
իմաստային դաշտում (հոդված)**

Հոդվածագիրն անդրադառնում է *Հագուստ* իմաստային դաշտի բառերի իմաստափոխություններին՝ դրանք ևս դիտարկելով որպես հայերենի բառապաշարի պատմական զարգացման արդյունք, և նշելով, որ դրանք լավագույնս ցույց են տալիս բառապաշարում տեղի ունեցող իմաստային տեղաշարժերը:

**Մարաշյան Հ., Արևմտահայերենի նորաբանությունների
իմաստաբանական քննություն (հաղորդում)**

Հոդվածում քննվում են արևմտահայերենի նորաբանությունների իմաստաբանական առանձնահատկությունները՝ ըստ Գ. Ջահուկյանի ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանության տեսության: Նշվում է, որ արևմտահայերենի բառապաշարը (գոնե այս մասը) ամբողջությամբ կարելի է մեկնաբանել հիշյալ տեսության ընձեռած հնարավորություններով, որի շնորհիվ արևմտահայերենի բառերը ավելի ճշգրիտ են բնութագրվում ոչ միայն ըստ արտալեզվական կարգերի, այլև գործառական իմաստները բացատրելիս. նման վերլուծությունը կնպաստի արևմտահայերենի բառապաշարի ամբողջական ըմբռնմանը:

**Ներսիսյան Վ., Ածանցման հարցերի քննությունը Մանուկ
Աբեղյանի աշխատություններում (հոդված)**

Հոդվածագիրը, ներկայացնելով ածանցման հարցերի քննությունը Մանուկ Աբեղյանի աշխատություններում, ցույց է տալիս, թե ինչ սկզբունքով է գիտնականը դասակարգում ածանցներն ու ածանցավոր բառերը: Թեմայի արդիականությունը պայմանավորվում է արդի հայերենի բառակազմության մի շարք առկա խնդիրների լուծման ուղղությամբ աշխատանքներ կատարելու անհրաժեշտությամբ:

Մ. Աբեղյանը, ըստ հողվածագրի, երևույթը քննում է երկու տեսանկյուններից. նախ ներկայացնում է ածանցների առաջացման ուղիները, այնուհետև ածանցները բաժանում է *անվանական* և *դերբայական* տեսակների և հանգամանորեն քննում դրանցից յուրաքանչյուրը:

Նոր բառեր. պրակ է (բառարան)

«Նոր բառեր. է պրակ»-ը պարունակում է մամուլում, գեղարվեստական և գիտական գրականության մեջ շրջանառվող 2000 բառամիավոր, որոնք վկայված չեն հայոց լեզվի բացատրական և նորաբանությունների բառարաններում: Գլխաբառից հետո նշվում են խոսքիմասային պատկանելությունը, բառի բացատրությունը, բնագրային օրինակը, աղբյուրը: Առկա են նաև բառագիտական և ոճական նշումներ: Բառի բացատրությունը ըստ սովյալ տեքստում ունեցած նշանակության է:

Պապիկյան Ս., Իրանական ծագման հատկական փոխառությունների քննություն (հողված)

Հողվածագիրը տարբեր աղբյուրներից հավաքած նյութը՝ իրանական ծագման հատկական փոխառությունները (դրանք օտար իրույթների հատուկ, հիմնականում անթարգմանելի բառեր են), դասակարգում է հետևյալ իմաստային խմբերում՝ պետական-կառավարման, հագուստ-զարդարանք, զորք-զինվոր, բնակավայր-կացարան, ընդհանուր բառեր: Հետազոտությունից պարզվում է, որ այդ բառերը հիմնականում պատմաբառեր են, մի քանիսը իմաստափոխության են ենթարկվել, մի մասն էլ սահմանափակ գործածություն ունի:

Մարգարյան Ն., Նորակազմ ածականների կազմության միջոցներն ու եղանակները (հոդված)

Հոդվածում քննվում են արդի հայերենում ածականների կազմության առավել գործուն բառակազմական միջոցներն ու եղանակները: Դիտարկվում են շուրջ 1500 ածականներ «Նոր բառեր»-ի Ե և Զ պրակներից: Ուսումնասիրությամբ պարզվում է, որ ածականների կազմությանը մասնակցող հիմնական և երկրորդական բառակազմական ձևույթները հավելվում են ինչպես փոփոխվող, այնպես էլ չփոփոխվող հիմքերին: Ածականների կազմության ժամանակ գործուն են *գոյական+ածական*, *ածական+գոյական* կաղապարները, *հակա-*, *համա-*, *նախա-*, *գեր-* նախածանցները և *-ական*, *-ային*, *-ավոր*, *-ալուն*, *-ե* վերջածանցները: Ընդ որում՝ վերջածանցներն առավել ակտիվ են, քան նախածանցները:

Մարգարյան Ն., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները սահմանական եղանակի համակարգում. անցյալ կատարյալ (հոդված)

Հոդվածում քննվում են միջին հայերենի և արևմտահայերենի լեզվական համակարգերում անցյալ կատարյալ ժամանակաձևի խոնարհման ընդհանրությունները և փոփոխությունները: Ուսումնասիրությամբ բացահայտվում է, որ արևմտահայերենում առկա իրողությունները հիմնականում վկայվում են միջին հայերենում: Նշվում է, որ միջին հայերենը պահպանել, ապա արևմտահայերենին է փոխանցել անցյալ կատարյալի հիմքի կազմության գրաբարյան սկզբունքները:

Ինչպես հայտնի է, միջին հայերենում վերանում են ներգործաձև և կրավորաձև խոնարհումների տարբերակումները, կրավորական իմաստն արտահայտելու համար գործածվում է *ու/ի* մասնիկը: Անցյալ կատարյալ ժամանակաձևը գրաբարում, միջին հայերենում և արևմտահայերենում ունի իմաստային նույն դրսևորումները: Այն արտահայտում է առանց տևականության կատար-

ված, ավարտված գործողություն, որին պատմողը ականատես է եղել, և իմաստային այս հատկանիշներով հակադրվում է անկատար անցյալ և վաղակատար անցյալ ժամանակաձևերին:

Սարգսյան Ն., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները ըղձական եղանակի համակարգում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ միջին հայերենի և արևմտահայերենի լեզվական համակարգերի դիտարկումը ցույց է տալիս, որ արևմտահայերենը լեզվական իրողությունները մեծ մասամբ ժառանգել է միջին հայերենից: Ըղձական եղանակի ուսումնասիրությունը ևս փաստում է, որ միջին հայերենի ըղձական եղանակի ձևաիմաստային հատկանիշները ամբողջությամբ վկայվում են արևմտահայերենում: Միջին հայերենում փոփոխվում են նաև գրաբարի ըղձական եղանակի բայաձևերը կազմող վերջավորությունները: Դրանք նույնությամբ առկա են արևմտահայերենում:

Սարգսյան Ն., Միջին հայերեն-արևմտահայերեն փոխանցումները պատճառական բայերի խոնարհման համակարգում (բուն հրամայական) (հոդված)

Գրաբար-միջին հայերեն-արևմտահայերեն խոնարհման համակարգերը դիտարկելիս, ինչպես նշում է հոդվածագիրը, ակնհայտ է դառնում, որ արևմտահայերենը շատ իրողություններ ժառանգել է միջին հայերենից: Նշվում է նաև, որ արևմտահայերենում պատճառական բայերի բուն հրամայականը կազմող *-ուր* վերջավորությունը առաջացել և կիրառվել է դեռևս վաղ միջին հայերենի շրջանում. հայտնի է, որ գրաբարյան *-n* վերջավորությունը աստիճանաբար վերածվում էր հնաբանության: $\Omega > ու > ուր$ անցումը բայական համակարգի տրամաբանական զարգացման արտահայտությունն է, ընդ որում՝ հայտնի է նաև, որ *p* հնչյունի հավելումը կատարվել է արգելական հրամայականի *p*-ի համաբա-

նությամբ: Արևմտահայերենը ժառանգել և պահպանում է նաև հոգնակի թվի՝ անցյալ կատարյալի հիմքից կազմության սկզբունքը:

**Սարգսյան Ն., Միջին հայերեն-արևմտահայերեն
փոխանցումները հրամայական եղանակի համակարգում.
արգելական հրամայական (հոդված)**

Արևմտահայերենի բայի խոնարհման համակարգը դիտարկելիս, ըստ հոդվածագրի, նկատելի է, որ արևմտահայերենը շատ իրողություններ հիմնականում ժառանգել է միջին հայերենից՝ որոշ փոփոխություններով: Արևմտահայերենում արգելական հրամայականի եզակին կազմվում է՝ ժխտական դերբային հավելելով *մի* մասնիկը: Արգելական հրամայականի կազմության այս սկզբունքը, ինչպես հայտնի է, ստեղծվել է միջին հայերենում:

Միջին հայերենի երկրորդ ենթաշրջանում ձևավորվում և ամրակայվում են *մի* մասնիկով և *անորոշ դերբայով* կամ *անորոշ դերբայի լ>ր* փոփոխությամբ կառույցները, որոնք փոխանցվում արևմտահայերենին: Արևմտահայերենը պահպանում է նաև *ե, ի, ա* լծորդության բայերի *-եր, -իր, -ար, -էք, -իք, -աք* վերջավորությունները:

Արևմտահայերենի արգելական հրամայականի ձևերը ամբողջությամբ համընկնում են միջինհայերենյան ձևերին՝ մեկ անգամ ևս փաստելով լեզվի զարգացման երկու շրջափուլերի՝ միջին հայերենի և արևմտահայերենի լեզվական համակարգերի սերտ կապը:

**Սարգսյան Ն., Որոշ դիտարկումներ արևմտահայերենի
կոր մասնիկի վերաբերյալ (հոդված)**

Արդի արևմտահայերենում լայն կիրառություն ունի *կոր* մասնիկը, որի միջոցով կազմվում է շարունակական ներկան: Ներկայացնելով մասնիկի կիրառությունը միջին հայերենում՝

հողվածագիրը նշում է, որ այն արևմտահայերենին է փոխանցվել միջին հայերենից, և հավանական է՝ առաջացել է *կոյ* մասնիկից: Ինչպես հայտնի է, *կոյ* և *կոր* մասնիկների իմաստային սերտությունը համոզիչ է դառնում հայերենի մի շարք բարբառներում ընդհանրական ներկայի կազմության սկզբունքները դիտարկելիս:

Կոր մասնիկը գործածական է արդի արևմտահայերենի խոսակցական լեզվում, գրական բանավոր խոսքում: Գեղարվեստական գրականության մեջ այս մասնիկն ունի նաև ոճական դեր:

Մուքիսյան Հ., Քոշատաշյան Ս., Հայերենի ուսուցումը բժշկական բուհերում (հողված)

Հողվածում հեղինակները, հիմք ընդունելով բժշկական բուհերում հայերենի ուսուցման ուսումնասիրությունների տվյալները, փաստում են, որ անհրաժեշտ է բժշկական բուհերում կիրառել հայոց լեզվի դասավանդման առավել արդյունավետ եղանակներ. պետք է կարևորվեն հայոց լեզվի հեղինակությունը բարձրացնելու, որակյալ դասընթաց կիրառելու, խոսքի մշակույթը կատարելագործելու, հայերենին չտիրապետող ուսանողներին ոչ միայն հայերեն ուսուցանելու հիմնահարցերը, այլև ավելի ամրապնդվեն ազգային ինքնության պահպանման այն էական հատկանիշները, որոնք հատուկ են հայ ժողովրդին: Հեղինակների նպատակն է դպրոցում ձեռք բերած հանրակրթական լեզվական գիտելիքները ամրագրելը, հայոց լեզվի իմացության մասնագիտական ուղղվածությունը խորացնելը, հայերենի իմացության այն անհրաժեշտ հիմքը ձևավորելը, որոնցով հնարավոր լինի շարունակել բժշկագիտական լեզվի յուրացումը: Ըստ հեղինակների՝ առաջնահերթ խնդիրներն են ուսանողների նախնական իմացության մակարդակը հաշվի առնելը, նրանց իմացության մակարդակների տարբերությունները հաղթահարելը, մայրենի լեզվի անհրաժեշտ իմացության միանման մակարդակ ապահովելը:

Սուքիասյան Հ., Ջաքարյան Հ., Բժշկական եզրույթների հայերենացման անհրաժեշտությունը (հոդված)

Հոդվածը վերաբերում է լեզվական համակարգի համասեռության մի մասնավոր դրսևորման՝ բառապաշարի մաքրությանը (բժշկագիտության լեզվի օրինակով) և դա ապահովելու նպատակով փոխառությունների հետևողական հայերենացման անհրաժեշտության խնդրին: Բառակազմական հարացույցները տարբեր չափերով ու արդյունավետությամբ են իրականանում տարբեր լեզուներում: Բժշկության ոլորտից վերցված հայերեն, անգլերեն և ռուսերեն համարժեք բառակազմական հարացույցների զուգադրական քննությունը ցույց է տալիս, որ հայերենն իր լեզվական համասեռության շնորհիվ կատարյալ է, ամբողջական, ինքնաբավ և ապահովում է հասկացական ու լեզվական համակարգերի համաձևություն: Մինչդեռ ռուսերեն և անգլերեն հարացույցները իրենց անհամասեռության պատճառով թերի են (կան բաց վանդակներ), լի ոչ ճկուն, անմիօրինակ, երկիմաստություններով, համանուններով, կաղապարից շեղվող ձևերով, անհարկի հոմանիշներով ու տարբերակներով: Թերություններն առաջանում են հիմնականում փոխառությունների հետևանքով: Հոդվածագիրները եզրակացնում են, որ բժշկության, ինչպես և ցանկացած այլ բնագավառի եզրութաբանություն անհրաժեշտ է առավելագույնս հայերենացնել:

Տիտյան Ս., Փոխ(ս)- նախածանցով նորաբանությունները ժամանակակից արևմտահայերենում (հոդված)

Հայտնի է, որ ժամանակի ընթացքում լեզվի բառապաշարը, դրա առանձին միավորները ենթարկվում են այլևայլ փոփոխությունների: Հոդվածում *փոխ-* նախածանցի բառակազմական իմաստների քննությունից պարզ է դառնում, որ այն գործուն է դարձել՝ մեր օրերի աշխարհաքաղաքական զարգացումներին համահունչ, ինչպես, օրինակ՝ *փոխհանդուրժողականություն*,

փոխահարեկչություն, փոխանվստահություն, փոխբացառում, փոխընդունելի, փոխինտեգրացվել և այլն: Նաև իմաստային հստակեցում է կատարվել դրանով կազմված բառերի ցանկում. այսպես, «երկրորդը ըստ պաշտոնի, աստիճանի, կոչման՝ նախատիպի ցույց տվածի նկատմամբ» բառակազմական նշանակության օրինակներում՝ *փոխարքա, փոխգնդապետ, փոխծովակալ, փոխհյուպատոս, փոխնախագահ* և այլն, *փոխգնդապետ*-ի առկայությունը հիմնավորված չէ, քանի որ այն ինքնուրույն սպայական կոչում է՝ *մայոր* → *փոխգնդապետ* → *գնդապետ* → *գեներալ* → *գեներալ մայոր* → *գեներալ լեյտենանտ* → *գեներալ գնդապետ* շարքում, որի անդամներից ոչ մեկը հաջորդի ենթական չէ. այսինքն՝ զինվորական և ռազմական կոչումները պետք է ներկայացվեն այլ սանդղակով: Ուսումնասիրությամբ նաև բացահայտվում են բազմաբարդ ածանցյալներ. բազմանախաձանց՝ *փոխանվստահություն, փոխներարկում, փոխհամաձայնեցում*, բազմավերջաձանց՝ *փոխահարեկչություն, փոխընտրանքայնություն* և բազմանախաձանցավերջաձանցավոր կազմություններ՝ *փոխհանդուրժողականություն, փոխհամատեղելիություն*, որոնք անչափ ուշագրավ են կառուցվածքային և բառակազմական պատճառաբանվածության հայեցակետերից:

**Տիոյան Ս., Բառապաշարի զուգադիր քննություն.
հոմանիշ բառեր գրական արևմտահայերենում (հոդված)**

Հոդվածն անդրադառնում է արևմտահայերենի բառապաշարի իմաստային ուսումնասիրությանը, ի մասնավորի՝ հոմանշային հարաբերությանը՝ երկանդամ և բազմանդամ շարքերով: Արևմտահայերենում նման քննություն կատարվում է առաջին անգամ՝ հանգեցնելով այնպիսի արդյունքների, որոնցից են բազմանդամ շարքերի անդամների իմաստների հստակեցումը, նորանոր, հավելյալ իմաստների բացահայտումը, ապացուցելով, որ ժամանակակից գրական արևմտահայերենը ոչ միայն նահանջ չի

ապրում, այլ գործածվում, զարգանում և շարունակաբար հարըստացնում է իր բառապաշարը՝ այդպիսով հարստացնելով նաև արևելահայերենի բառապաշարը. այսպես՝ *համայնք* - *գաղութ* - *գաղթօջախ* - *գաղթավայր* - *հայօջախ* բազմանդամ շարքին բնորոշ «մարդկանց կազմակերպված խումբ, բազմություն» իմաստին հավելվեց ներկայումս համագործածական դարձած *սփյուռք* միավորը: Երկրորդ՝ *անձնանկար* - *ինքնանկար* - *դիմանկար* - *դիմապատկեր* - *անձնապատկեր-կենդանագիր* հոմանշային բազմանդամ շարքում ընդգրկվեց *դիմապատկերը*, իսկ երրորդ՝ *արվեստանոց*-*աշխատանոց* -*աշխատավայր* -*աշխատատեղ* - *գործատեղի* շարքում բացահայտվեց, որ դրանում միայն *արվեստանոց* միավորն է հանդես գալիս որպես «կերպարվեստի բնագավառի ստեղծագործողի՝ նկարչի, քանդակագործի, դեկորատիվ կիրառական արվեստի մասնագետի աշխատատեղ», մյուս հոմանիշները իմաստային ավելի լայն ընդգրկում ունեն:

Տիոյան Ա., Ֆիշենկճյան Ա., Հատուկ անունների գրադարձության մի քանի խնդիրներ (քննարկում)

Հոդվածն անդրադառնում է ֆրանսերեն-հայերեն (արևելահայերեն / արևմտահայերեն) հատուկ անունների, նաև տեղանունների գրադարձության հարցին, որը մեծ խնդիրների է հանգեցնում հատկապես վարչագործարարական տարբեր ոլորտներում: Փորձ է արվում խնդրի լուծումն սկսել մի փոքր ցանկից՝ անդրադառնալով Ֆրանսիայի 18 մարզերի, դրանց վարչատարածքային ենթակառուցվածքների և մարզկենտրոնների ֆրանսերեն անվանումներին՝ դրանց հնչարտասանական տարբերակներով՝ հնչագրերով (տրանսկրիպցիաներով), որպեսզի այս ցանկի միջոցով հնարավորինս պարզվեն ու պարզաբանվեն խնդիրները:

**Քիլերճեան Պ., Տիոյեան Ս., Դարձուածային միատրները
Յ. Մնձուրիի «Արմտան» ստեղծագործութեան մէջ (յօդուած)**

Յօդուածին մէջ արեւմտահայերէնի դարձուածքներու ուսումնասիրութիւնը կը կատարուի այն հիմնատրամբ, որ հայ ժողովուրդի երկու հատուածները կապին աշխարհագրական տարբեր տարածքներու ու միջավայրերու մէջ, ունին իրարմէ միանգամայն տարբեր կենսաձեւ, աշխարհընկալում, հասարակական համակարգեր, աստիճաններ ու սովորոյթներ, որոնք իրենց անմիջական արտացոլումը կը գտնեն դարձուածաբանութեան մէջ. նոյն, ընդհանուր դարձուածքը, գոնէ իմաստային նրբերանգներով, կը տարբերի արեւմտահայերէնի եւ արեւելահայերէնի մէջ:

Ուսումնասիրութեան արդիւնքով ի յայտ եկան մէկ տասնեակէն աւելի դարձուածքներ, որոնք վկայուած չեն ոչ գրական արեւմտահայերէնի, ոչ ալ գրական արեւելահայերէնի դարձուածքաբանական բառարաններուն մէջ:

**Տելեթյան Ս., Հարաբերական ածականների բացատրության
եղանակները արևմտահայերենի բառարաններում (հոդված)**

Հոդվածում քննվում են արևմտահայերենի ամենասովորածավալ «Հայոց լեզուի նոր բառարան»-ում ներկայացված մի սովոր բառախմբի, այն է՝ հարաբերական ածականների բացատրության սկզբունքները: Այդ բառարանի հեղինակների որդեգրած մոտեցումները համեմատվում են նաև արդի արեւելահայերէնի բառարաններում կիրառված բացատրության եղանակների հետ: Նշվում է, որ բառարանագրության համար կարևոր է բառապաշարի ձևաիմաստային, թեմատիկ և այլ խմբերի միօրինակ բացատրոյթյունների սկզբունքների մշակումը:

Ըստ հոդվածագրի՝ հարաբերական ածականների բառարանային բացատրոյթյուններում նկատելի է երեք մոտեցում. ա) առավելագույն ընդհանրացման միտում («նախատիպին վերաբե-

րող՝ հատուկ»), բ) վերացական, ընդհանրացված բացատրության հետագա մասնավորեցում (հղումային բացատրությունից հետո նկարագրական բացատրություն կամ հոմանիշներ), գ) ածականի նկարագրական-տրամաբանական բացատրություն (բացատրվում է բառով անվանվող հասկացությունը):

Ֆելեքյան Մ., Իմաստային նորաբանություններ գրական արևմտահայերենում (հոդված)

Հոդվածում համաժամանակյա մոտեցմամբ դիտարկվում են «Նոր բառեր արևմտահայերենի մէջ» բառարանի Ա և Բ գրքերի էլեկտրոնային տարբերակներում ներկայացված իմաստային նորաբանությունները. դրանք եղել և մնում են հայերենի բառապաշարի հարստացման գործուն միջոցներից, ստեղծվում են թե՛ օտար բառերի իմաստային պատճենմամբ և թե՛ հայերենի ներքին իմաստափոխական հիմունքներով:

Հոդվածագիրը նշում է, որ իմաստային պատճենման դեպքում կարևոր նախապայման է փոխատու և փոխառող լեզուներում այդ բառերի առարկայական (նյութական) իմաստների նույնականությունը: Արդի հայերենում այդ պատճենումները կատարվում են անմիջականորեն փոխատու լեզվից (հիմնականում անգլերենի ամերիկյան տարբերակից): Հոդվածում ընդգծվում է, որ եթե խորհրդային շրջանում իմաստային պատճենումներ առավելաբար արևմտահայերենից էին անցնում արևելահայերենին, ապա այսօր նորաբանությունների փոխադարձ ներթափանցումները երկկողմանի են:

Ֆիշենկճեան Ա., Տիոյեան Ս., Եղանակաւորիչ մակբայ եզրոյթն ըստ արևմտահայերենի դասագիրքերու (հաղորդում)

Յօդուածը կը վերաբերի արևմտահայերենի խիստ արդիական խնդիրի մը. քերականութեան դասագիրքերու մէջ խօսքի մասերու քանակի ու ատոնց անուանումներու տարրնթերցումներուն

կամ բազմազանութեան: Ուսումնասիրութեան մէջ հեղինակներն անդրադարձած են *եղանակաւորոյ ճակբային* և *եղանակաւորոյ բառերուն*:

Կը նշուի, որ անցեալ դարու առաջի կիսուն, յատկապէս Այտընեանէն ետք, Սփիւռքի մէջ պատրաստուած արեւմտահայերէնի քերականութեան դասագիրքերը մեծ մասամբ իրենց վրայ կրած են Այտընեանի ազդեցութիւնը: Այդ հեղինակներու դասագիրքերուն մէջ եղանակաւորողները որպէս առանձին խօսքի մաս չեն դիտուած, այլ նոյնացուած են ձեւի մակբայներուն հետ: Ճիշդ է, անոնք ունին որոշ արտաքին նմանութիւն, բայց էապէս կը տարբերին իրարմէ: Նոյն տեսակէտը պարզուած է վաթսունական-եօթանասունական թուականներու քերականութեան դասագիրքերու հեղինակներուն քով, գուցէ չնչին բարեփոխումներով: Սակայն նոյն դարու իննսունական թուականներուն հրապարակ կու գան երկու դասագիրք՝ Կ. Առաքելեանի «Արդի հայերէնի քերականութեան» Գ. հատորը, որու մէջ *եղանակաւորոյ բառերու* փոխարէն հեղինակը կը գործածէ *վերաբերական* եզրոյթը: Նոյն տեսակէտը կը յայտնէ Յ. Չոլաքեան իր «Անդաստան» Գ. գիրքին մէջ: Սակայն վերոնշեալ հեղինակներէն ոեւէ մէկը չի հիմնաւորեր իր տեսակէտը:

Յօդուածագիրներու կարծիքով, արեւմտահայերէնի հայերէնագիտութեան մէջ պէտք է ընդունիլ տասը խօսքի մաս (ինչպէս արեւելահայերէնի մէջ)՝ ընդգրկելով *եղանակաւորոյ բառերը* (*վերաբերականը*) նշուած անուանումով:

Տիշենկճեան Ա., «Շարահիւսութիւն» թեման արեւմտահայերէնի դասագիրքերու մէջ (յօդուած)

«Շարահիւսութիւն» թեման արեւմտահայերէնի դասագիրքերու մէջ բանասերներու եւ լեզուաբաններու կողմէ գիտականօրէն քիչ ուսումնասիրուած է: Յօդուածին մէջ ոչ միայն փորձ կը կ'ատարուի մանրամասն քննութեան ենթարկելու արեւմտահայե-

րենի /Սփիւոքի/ դասագիրքերու մէջ «Շարահիւսութիւն» թեմայի առկայութիւնն ու բացակայութիւնը, այլն ատոր ուսուցման ու մատուցման եղանակները:

Կը պարզուի, որ արեւմտահայերէնի դասագիրքերու մէջ որոշ հեղինակներու կողմէ ոչ միայն չեն հիմնաւորուած շարահիւսութեան քերականական որոշ իրողութիւններ, ատոնց քննարկումն ու շարադրումը, այլն այդ թեման կը բացակայի ի սպառ: Մոյն ուսումնասիրութեամբ փորձ կը կատարուի լրացնելու այդ բացը՝ ուղեցոյց դառնալով առաջին հերթին Սփիւոքի վարժարաններէն ներս դասաւանդող ուսուցիչին կամ լրագրողին:

Բ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

2022 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Համբարձույան Վ.Գ., Հայերենի բառաքնություն և ստուգաբանություն, Պրակ 1, Ե., «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, 192 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԵՎ ԺՈՂՈՎԱԾՈՒ

1. Կիրառական լեզվաբանության հարցեր, Պրակ Ա, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 102 էջ:
2. Սիմոնյան Ն. Մ., Բառաքնական և ստուգաբանական դիտարկումներ, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 77 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Ավետյան Ս.Ռ., Մրցակից լեզվական միտումների լույսի ներքո հայերենի որոշ ձևաշարահյուսական երևույթների բացատրման փորձ, Ե., «Հայագիտության հարցեր», № 2 (26), ԵՊՀ հրատ., 2022, էջ 191-203:
2. Ավետյան Ս.Ռ., Արդի հայերենի *կ(ը)- ապառնիի* և *-ու ապառնիի* իմաստագործառությային փոխհարաբերության հարցի շուրջ, Ե., «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», №2 (38), ԵՊՀ հրատ., 2022, էջ 22-35:
3. Ավետյան Ս.Ռ., Դասական հայերենում ապառնիություն արտահայտող ձևերի իմաստագործառությային քննություն, Ե.,

- «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», № 3 (39), ԵՊՀ հրատ., 2022, էջ 66-81:
4. Ավետյան Ս.Ռ., Աստվածաշնչում հայերենի *-ng* ապառնիի կիրառությունների քննություն հունարեն բնագրի համեմատությամբ, Ե., «Էջմիածին», Թ, 2022, էջ 38-56:
 5. Ավետյան Ս.Ռ., Աստվածաշնչում հին հայերենի ստորադասական եղանակի կիրառությունների քննություն հունարեն բնագրի համեմատությամբ, Ե., «Վէմ» թիվ 4 (80), հոկտեմբեր - դեկտեմբեր, «Վէմ հանդես» հրատ., 2022, էջ 120-149:
 6. Ավետյան Ս.Ռ., Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի իմաստագործառությային փոխհարաբերության հարցի շուրջ, Ե., «Պատմություն և մշակույթ», № 2, ԵՊՀ հրատ., 2022, էջ 161-176:
 7. Գրիգորյան Գ.Գ., Չ ժխտական նախածանցով դիպվածային նորակազմություններ, Ե., «Ձառուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 166-177:
 8. Գրիգորյան Գ.Գ., Բաղաձայնի ազդեցությունը ձայնավորի վրա բաղաձայն-ձայնավոր կապակցություններում (փորձառական հետազոտություն), Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 56-62:
 9. Dalalyan T.S., On Some Armenian-Georgian Lexical Isoglosses // The Caucasus on the Crossroads of International Trade and Cultural Exchanges: Proceedings of the International Scientific Conference, vol. 1, Yerevan, 2022, p. 93:
 10. Далалян Т.С., Из истории одной армяно-осетинской изоглоссы *ard-* (<и.-е. *art-), Москва-Ереван, "Армянский гуманитарный вестник" (памяти В.А.Ефимова. Специальный выпуск), Российская академия наук, Институт языкознания, Институт археологии и этнографии ИАН РА, № 8, Изд. ИАЭ, 2022, с. 41-52.
 11. Հակոբյան Ֆ.Ա., «Գրաբարի էլեկտրոնային կորպուսի ստեղծման նպատակը և խնդիրները, Ե., «Ձառուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 58-66:

12. Միքայելյան Ս.Ա., Արաբական փոխառությունների հայերեն բարբառային բառաշերտը, Ե., «Պատմաբանասիրական հանդես», № 1 (219), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 201-209:
13. Միքայելյան Ս.Ա., Հայերենի արաբական միջնորդավորված փոխառությունների շուրջ (բարբառային բառաշերտ. գուգադրական քննություն), Ե., «Բանբեր Վ. Բրյուսովի անվ. պետական համալսարանի. լեզվաբանություն և բանասիրություն», № 1 (62), ԲՊՀ «Լինգվա» հրատ., 2022, էջ 237-251:
14. Միքայելյան Ս.Ա., Հայերենի արաբական փոխառությունների ընդհանուր բնույթը, Հայերենագիտական հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 31-41:
15. Սարգսյան Մ.Ա., Հայ լեզվափիլիսոփայության անվանի ներկայացուցիչը, Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 1 (26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 3-10:
16. Սարգսյան Մ.Ա., Էդուարդ Աթայան. ակադեմիկոսը և լեզվափիլիսոփան (Ծննդյան 90-ամյակի առթիվ), Ե., «Գիտության աշխարհում», №4, «Գիտություն» հրատ., 2022, էջ 3-8:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Ավետյան Ս., Մրցակից լեզվական միտումների լույսի ներքո հայերենի որոշ ձևաշարահյուսական երևույթների բացատրման փորձ (հոդված)

Հոդվածում փաստարկվում է, որ հայերենի մի շարք ձևաշարահյուսական իրողություններ, որոնք դեռևս պատշաճ բացատրություն չեն ստացել ավանդական հայ լեզվաբանության մեջ, բացատրելի են ճանաչողականորեն պայմանավորված մրցակից լեզվական միտումների և որոշակի հոգեբանական դրդապատճառային գործոնների լույսի ներքո: Ինչպես հայտնի է, լեզվից

լեզու կարող են տարբեր լինել քերականության և լեզվագործածության մեջ մրցակից դրադապատճառային գործոնների առկայության շնորհիվ այս կամ այն կոնկրետ տարածամանակյա փոփոխության ուղղվածությունը և դրա արդյունքում ձևավորվող համաժամանակյա ձևաշարահյուսական օրինաչափության հնարավոր ընտրությունը: Ըստ այդմ՝ հայերենի համաժամանակյա և տարածամանակյա համապատասխան փաստերը թույլ են տալիս ավելի կամ պակաս չափով պարզելու, թե մրցակից լեզվական միտումներից (և/կամ դրադապատճառային գործոններից) ո՞րն է վճռորոշ դեր խաղացել ամեն մի կոնկրետ դեպքում: Իսկ երբեմն էլ տվյալ համաժամանակյա օրինաչափությունը ձևավորվել է մի շարք դրադապատճառային գործոնների համատեղ ազդեցությամբ, ինչպես, օրինակ, արդի արևելահայերենում որոշակի բայերի եզակի թվի արգելական հրամայականի գուգաձևությունների դեպքում:

**Ավետյան Ս., Դասական հայերենում ապառնիություն
արտահայտող ձևերի իմաստագործառության
քննություն (հոդված)**

Դասական հայերենում ապառնիություն արտահայտող երեք հիմնական ձևերի (ստորադասական եղանակի, սահմանական ներկայի և *-ոց դերբայ + եւ օժանդակ բայ* կառույցի) իմաստագործառության վերլուծությունը, ըստ Աստվածաշնչի տեքստի և հունարեն բնագրի համեմատությամբ, հոդվածագրին հանգեցնում է հետևյալ հիմնական եզրակացություններին. *ա)* դասական հայերենում սահմանական ներկայի գործածությունը ապառնիի իմաստով մասամբ բացատրվում է սահմանական ներկայի ընդհանուր տիպաբանական միտումով՝ երկրորդաբար արտահայտելու մոտալուտ և/կամ անխուսափելի ապառնիի իմաստ աշխարհի շատ լեզուներում, մասամբ էլ՝ հին հայերենի աճող ներհամակարգային միտումով, ըստ որի՝ սահմանական ներկան սկսում է փոխարինել ստորադասական եղանակին իր բոլոր գործառույթներով, ներառյալ սահմանական ապառնիի նշանակությամբ գործածություն-

նը, ք) այդուհանդերձ, ստորադասական եղանակը հին հայերենում դեռ շարունակում է գործառել որպես ապառնիություն արտահայտելու առավել հաճախագործածական միջոց, այնպես որ ոչ միայն հունարենի ապառնի ժամանակը, այլև սահմանական ներկան (երբ վերջինս գործածվում է մոտալուտ և/կամ անխուսափելի ապառնիի իմաստով) դասական հայերենում հաճախ արտահայտվում են ստորադասական եղանակի միջոցով, զ) ինչ վերաբերում է *-ոց դերբայ + եմ օժանդակ բայ* ապառնի վերլուծական կառույցի իմաստագործառությանին առանձնահատկություններին, համատեքստից կախված՝ այն արտահայտում է երեք հիմնական նրբիմաստներ. սպասելի ապառնի (կամ նախորոշված ապառնի), կատարվելիք գործողության/եղելության անհրաժեշտություն կամ անխուսափելիություն և ինչ-որ բան անելու մտադրություն:

Ավետյան Մ., Աստվածաշնչում հին հայերենի ստորադասական եղանակի կիրառությունների քննություն հունարեն բնագրի համեմատությամբ (հոդված)

Հոդվածագիրը փաստարկում է, որ դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի (ներկա ստորադասականի և ատրիստ ստորադասականի) իմաստային փոխհարաբերությունը որպես եղանակային կամ միաժամանակ որպես եղանակային և կերպային հակադրություն բնորոշելու փորձերը չեն հաստատվում հին հայերենի համաժամանակյա և տարաժամանակյա տվյալներով: Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի գրեթե նույնական գործառությունները և նրանց տարաժամանակյա ձևակազմական ընդհանրությունը (կա՛մ ներկայի հիմքին, կա՛մ ատրիստի հիմքին միևնույն *-ից* հիմքակազմ ածանցն ավելացնելու շնորհիվ) տիպաբանական տվյալների հետ անառարկելիորեն հաստատում են, որ այդ երկու ձևերն իրոք ստորադասականի եղանակային կարգավիճակ ունեն: Ըստ այդմ՝ թե՛ն դասական հայերենում սահմանական ապառնիի իմաստն առավել հաճախ դր-

սևորվում է ստորադասականի, հատկապես՝ 2-րդ ստորադասականի միջոցով, այդուհանդերձ, այն չի կարող դիտվել իբրև ապառնի ժամանակաձև: Նույնիսկ դասական հայերենում ներկա ստորադասականը և աորիստ ստորադասականը սկզբունքորեն կարող են միմյանց փոխարինել գրեթե բոլոր կիրառություններում: Ինչ վերաբերում է դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի կիրառահաճախականության տարբերությանը, դա պետք է բացատրել ներկա ստորադասականի գործառությային սահմանափակման և աորիստ ստորադասականի կողմից աստիճանաբար դուրս մղվելու տարածամանակյա ընդհանուր միտումով, նախքան այն պահը, երբ հին սահմանական ներկայից ծագող ստորադասականի նոր ձևը ի վերջո գործածությունից դուրս է մղել թե՛ ներկա ստորադասականը, թե՛ աորիստ ստորադասականը:

Աստվածաշնչում ներկա ստորադասականի և աորիստ ստորադասականի կիրառությունների համատեքստախմաստային քննությունը ակնհայտորեն վկայում է նրանց միջև սկզբնական կերպային հակադրության (*անկատար կերպ-կատարյալ կերպ*) մասին: Սակայն ակնհայտ է նաև, որ նույնիսկ դասական շրջանում ստորադասական եղանակի դեպքում կերպային հակադրությունն այլևս էր գիտակցվում որպես գործուն օրինաչափություն, ուստի չէր դրսևորվում հետևողականորեն. շատ հաճախ կերպային առումով նույնատիպ գործողությունները/եղելություններն արտահայտվում էին մի դեպքում ներկա ստորադասականով, մյուս դեպքում՝ աորիստ ստորադասականով: Դեռ ավելին. նրանք նույնիսկ կարող էին հանդես գալ կողք կողքի միևնույն նախադասության մեջ:

Ըստ հոդվածագրի՝ Աստվածաշնչի բնագրային որոշ օրինակներ կարծես թույլ են տալիս ենթադրելու, որ ժխտման դեպքում սկզբնապես նախապատվություն է տրվել ներկա ստորադասականին: Սակայն հանդիպում են նաև դեպքեր, երբ կերպային առումով նույնատիպ գործողությունները թե՛ դրական և թե՛ ժխտական նշանակությամբ արտահայտվում են կա՛մ ներկա

ստորադասականով, կա՛մ առփստ ստորադասականով՝ առանց որևէ օրինաչափության (որը, թերևս, սկզբնական օրինաչափության արդեն մթագնած լինելու հետևանք է):

Ավետյան Ս., Աստվածաշնչում հին հայերենի *-ng* ապառնիի կիրառությունների քննություն հունարեն բնագրի համեմատությամբ (հոդված)

Աստվածաշնչում հին հայերենի *-ng* ապառնիի (*-ng* դերբայ + եմ ապառնի վերլուծական կառույցի) կիրառությունների հանգամանալից վերլուծությունը՝ ստորադասական եղանակին զուգահեռ և հունարեն բնագրի համեմատությամբ, հոդվածագրին հանգեցնում է հետևյալ հիմնական եզրակացություններին. *-ng* ապառնին, համատեքստից կախված, հանդես է գալիս երեք հիմնական նրբիմաստով՝ ցույց տալով. *ա)* նախորոշված և/կամ սպասելի ապառնի գործողություն, *բ)* կատարվելիք գործողության անհրաժեշտություն, անխուսափելիություն, *գ)* որևէ բան անելու մտադրություն: Մինչդեռ ստորադասականը ապառնիի իմաստով կիրառություններում հիմնականում արտահայտում է կա՛մ պարզ (սովորական) ապառնիի, կա՛մ հարկադրական ապառնիի իմաստ: Ըստ այդմ՝ հին հայերենի *-ng* ապառնին, ստորադասականի հետ համընկնելով անհրաժեշտության («պետք է») և անխուսափելիության նրբիմաստներով, նրանից տարբերվում է սպասելիության և նախորոշվածության իմաստներով. վերջիններս, ակնհայտորեն բնորոշ լինելով *-ng* ապառնիին, որպես այդպիսին՝ սովորաբար չեն դրսևորվում ստորադասականի ապառնի ժամանակի նշանակությամբ կիրառություններում:

**Ավետյան Ս., Դասական հայերենում ստորադասականի երկու
ձևերի իմաստագործառնության փոխհարաբերության
հարցի շուրջ (հոդված)**

Հոդվածում նշվում է, որ հին հայերենում ստորադասականի երկու ձևերի (ներկա ստորադասականի և աորիստ ստորադասականի) իմաստային փոխհարաբերությունը որպես եղանակային կամ կերպաեղանակային հակադրություն բնորոշելու փորձերը չեն հաստատվում հին հայերենի համապատասխան համաժամանակյա և տարաժամանակյա լեզվական փաստերով: Դասական հայերենում ստորադասականի երկու ձևերի գրեթե նույնական շարահյուսական գործառնությունները նրանց տարաժամանակյա միանման (ներկայի կամ աորիստի հիմքին միևնույն **-ից* ածանցը ավելացնելու շնորհիվ) ձևաբանական կառուցվածքի հետ միասին կասկած չեն թողնում, որ դիտարկվող երկու ձևերն էլ ստորադասական եղանակի ձևեր են: Ինչ վերաբերում է դրանց կիրառահաճախականության տարբերությանը, դա պետք է բացատրել ներկա ստորադասականի գործածության սահմանափակման և աստիճանաբար աորիստ ստորադասականով փոխարինվելու տարաժամանակյա ընդհանուր միտումով: Մյուս կողմից՝ ներկա ստորադասականի և աորիստ ստորադասականի համատեքստաիմաստային հանգամանալից վերլուծությունը ակնհայտորեն վկայում է նրանց միջև սկզբնական կերպային (անկատար-կատարյալ) հակադրության մասին: Բայց ակնհայտ է նաև, որ կերպային հակադրությունը դասական հայերենում ստորադասական եղանակի դեպքում արդեն դադարել էր որպես գործուն քերականական երևույթ գիտակցվելուց, ուստի կանոնավոր չէր դրսևորվում. կերպային տեսանկյունից նույնատիպ գործողությունները/եղելությունները հաճախ արտահայտվում էին թե՛ ներկա ստորադասականով և թե՛ աորիստ ստորադասականով: Ընդ որում՝ դրանք կարող էին նույնիսկ հանդես գալ կողք կողքի միևնույն նախադասության մեջ:

**Ավետյան Ս., Արդի արևելահայերենի *կ(ը)*- ապառնիի և *-ու*
ապառնիի իմաստագործառութային փոխհարաբերության
հարցի շուրջ (հոդված)**

Հոդվածագիրը փաստարկում է, որ արդի արևելահայերենի *կ(ը)*- ապառնին (կգնամ, կխոսեմ) որպես, այսպես կոչված, ենթադրական եղանակի կամ պայմանական եղանակի ձև բնորոշելու փորձերը առարկություն են հարուցում ընդհանուրլեզվաբանական և տիպաբանական տեսանկյուններից: Հատկապես կարևոր են հետևյալ նկատառումները. 1) ինչպես ցույց են տվել մի շարք հետազոտողներ, ապառնի ժամանակը, ի տարբերություն ներկա և անցյալ ժամանակների, երբեք զուտ ժամանակային կարգ չէ. այն մասամբ ժամանակային է, մասամբ՝ եղանակային: Ապառնի ժամանակի ցուցիչները (նշորդները) պատմականորեն հաճախ առաջանում են այնպիսի միավորներից, որոնք սկզբնապես գործածվել են զանազան եղանակային իմաստներ արտահայտելու համար: Մյուս կողմից՝ ապառնի ժամանակի ձևերը սովորաբար նաև եղանակային գործառություններ են կատարում, 2) արդի արևելահայերենի *կ(ը)*- ապառնին իմաստագործառութային տեսանկյունից էապես չի տարբերվում այլ լեզուներում առկա սահմանական եղանակի ապառնիից, 3) *կ(ը)*- ապառնիի գործառությունը պայմանական կառույցներում նրա առաջնային (հիմնական) գործառությոթ չէ, ինչպես լինում է սովորաբար տիպիկ պայմանական եղանակի (Conditional mood) դեպքում: Ինչ վերաբերում է արդի արևելահայերենի *-ու* ապառնիի (գնալու եմ, խոսելու եմ) իմաստագործառութային բովանդակությանը, այն համապատասխանում է սպասելի ապառնիի (կամ նախորոշված ապառնիի) տիպաբանական բնութագրին, ուստի պետք է դիտարկվի վերջինիս հետևյալ հարթության վրա: Սյապիսով՝ արդի արևելահայերենի *կ(ը)*- ապառնիի և *-ու* ապառնիի իմաստագործառութային փոխհարաբերությունը համապատասխանաբար պետք է դիտել որպես

հակադրություն պարզ ապառնի ժամանակի և սպասելի ապառնի (կամ նախորոշված ապառնի) ժամանակի միջև:

Գրիգորյան Գ. Գ., Չ ժխտական նախաձանցով դիպվածային նորակազմություններ (հաղորդում)

Հաղորդման մեջ նշվում է, որ բառապաշարի փոփոխության ցայտուն օրինակ են նոր, այլև բառակազմորեն ձևափոխված բառերը: Դրանց մեջ առանձնանում են չ ժխտականով կազմվածները, որոնք գերակշիռ մասով դիպվածային են և տեղ չեն գտել բառարաններում: Ներկայացվում են խոսակցական լեզվում չ ժխտական նախաձանցով դիպվածային բառերը: Նպատակը վերջին տարիներին ստեղծված, թեկուզ և դիպվածային նորակազմությունները պարզաբանելն է:

Հաղորդման հեղինակն անդրադառնում է դասագրքերում և ուսումնական ձեռնարկներում չ ժխտական մասնիկի դիտարկմանը 2 բաժիններում՝ բառակազմության մեջ, որում չ-ն ածանց է՝ ժխտման իմաստով, և ձևաբանության մեջ՝ բայի ժխտական ձևերի կազմության ժամանակ: Եվ այս դեպքում հեղինակին հետաքրքրում է չ-ն՝ որպես ժխտական նախաձանց, որը, դրվելով անուն խոսքի մասերի վրա, ժխտում է նրա արտահայտած իմաստը կամ արտահայտում հակադիր, անարգական, ծաղրական իմաստներ: Ի դեպ, այս բառերը շատ չեն, ընդամենը մի քանի տասնյակ, որոնք ըստ բառարանների ներկայացվում են աղյուսակներում:

Առանձնացվում է 109 դիպվածային բառ. 87 տոկոսը՝ գոյականներ, 13 տոկոսը՝ ածականներ, օրինակներում կա չ ժխտականով կազմված մեկ մակբայ: Չ ժխտական մասնիկով կազմություններն ու գործածությունները հիմք են տալիս կարծելու, որ չ ժխտական մասնիկը բանավոր խոսքում դառնում է գործուն, քանի որ դրա գործածությունը դիպվածային կառույցներում ավելի է ընդգծում ժխտումը:

Գրիգորյան Գ., Բաղաձայնի ազդեցությունը ձայնավորի վրա բաղաձայն-ձայնավոր կապակցություններում (հոդված)

Հոդվածագիրը, անդրադառնալով հաղորդակցման ընթացքում խոսքի հնչյունների արտասանությանը, նշում է, որ դրանք արտաբերվում են ոչ թե առանձին-առանձին, այլ կապակցություններով, որոնցում բաղադրիչ հնչյունները փոխազդում են: Փորձառական հնչյունաբանական ուսումնասիրություններով պարզվում է, որ հայերենում բաղաձայնի և ձայնավորի կապակցությունն ավելի սերտ է, քան ձայնավորի և բաղաձայնինը, ուստի նախորդող բաղաձայնն ավելի ուժեղ է ազդում ձայնավորի վրա, քան հաջորդողը: Ըստ հոդվածագրի՝ հատկանշական է, որ ավելի քան 3 տասնամյակ առաջ կատարված նմանատիպ փորձառական ուսումնասիրությունը՝ այն ժամանակ առկա սարքերի օգտագործմամբ (օսցիլոգրաֆ, թվային վերլուծման սարք) և համակարգչային նոր ծրագրով (Praat) իրականացված կրկնակի փորձերը գրանցել են նույն արդյունքները:

Հոդվածագիրն ուսումնասիրել է ձայնավորների կրած ձայնաբանական փոփոխությունները՝ պայմանավորված ձայնեղություն-խլություն-շնչեղություն հատկանիշների ազդեցությամբ, մասնավորապես՝ տևողության և ուժգնության, քանի որ ձայնի առկայությունը և բացակայությունը բաղաձայն հնչյուններում կարևոր է՝ կից ձայնավորների ֆիզիկական բնութագրերի փոփոխվելու համար: Չայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայններին կից ձայնավորների տևողության համեմատությունից երևում է, որ ձայնավորն առավել տևական է ձայնեղ բաղաձայններին, պակաս տևական՝ շնչեղ խուլերին կից: Այս երկուսի համեմատությամբ՝ միջին դիրք է գրավում խուլ բաղաձայններին կից ձայնավորը:

Հոդվածագրի կարծիքով՝ բաց և փակ ձայնավորների փորձառական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բաց ձայնավորներն ավելի ուժգին են, քան փակերը: Ինչպես ձայնավորների տևողության պարագայում, ուժգնության վրա ևս որոշակիորեն

ագրում է այն, թե ըստ ձայնեղություն-խլություն-շնչեղություն հատկանիշների ինչպիսիք են կից բաղաձայնները. ձայնեղ բաղաձայնը հզորացնում է ձայնավորի ուժգնությունը:

Դալայան Տ., Հայ-օսական մի զուգաբանության պատմությունից. ard- (<հ.-ե. *art-) (հոդված/ռուսերեն)

Հոդվածը վերաբերում է հնդեվրոպական ծագման մի արմատի, որի ժառանգ ձևերը օսերենում և հայերենում դիտարկվում են որպես բացառիկ զուգաբանություն: Հոդվածագրի մինչ այժմ քննած հայ-օսական նմանատիպ հնարավոր 27 բացառիկ զուգաբանություններում երրորդ ձևերը կա՛մ բացակայում են, կա՛մ էլ իմաստով և հնչունապես բավական հեռու են: Դրանց շարքում դիտարկվող ard- (< *art-) արմատն առանձնահատուկ է այն առումով, որ վերաբերում է հնդեվրոպական կրոնադիցաբանական պատկերացումներում առանցքային դեր ունեցող մի հասկացության: Դրա շնորհիվ այդ արմատի ժառանգ ձևերը բավական լայն իմաստային դաշտ են ընդգրկում թե՛ գրաբարում ու նախագրային հայերենում, թե՛ օսերենում և նրա նախահայր համարվող ալաներենում: Բացի դրանից՝ հնդեվրոպական այս նախածեր կարևոր նշանակություն ունի ինչպես վեդայական, այնպես էլ հին իրանական կրոններում: Իսկ ամենահետաքրքրականն այն է, որ, ինչպես ներկայացվում է հոդվածում, այն նշանակալից տեղ ունի նաև Վանի թագավորության պետական դիցարանում:

Կիրառական լեզվաբանության հարցեր, Պրակ Ա
(Գիրք)

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ.ԱՃառյանի անվան լեզվի ինստիտուտի կիրառական լեզվաբանության բաժնի աշխատակիցների աշխատանքները, որոնք 2013-2015 թթ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են արդի փորձառական հնչյունաբանու-

թյան, հնչույթի տեսության, սխալ և ճիշտ արտաբերության, հայերենի այբուբենի տառերի հաճախության, Մամվել Անեցու կյանքի ու գրական գործունեության, գրաբարում ածականների բաղդատականության կարգի, հաղորդակցման տիպերի և կիրառական լեզվաբանության ուսումնասիրության այլ խնդիրներին:

Հակոբյան Ֆ., Գրաբարի էլեկտրոնային կորպուսի ստեղծման նպատակը և խնդիրները (հոդված)

Հոդվածում ներկայացվում են գրաբարագիր տեքստերի էլեկտրոնային կորպուսի կազմության սկզբունքները, կորպուս ստեղծելու նպատակները և խնդիրները:

Հոդվածագիրն անդրադառնում է գրաբարի էլեկտրոնային կորպուս ստեղծելու աշխատանքներին և նշում, որ դրանք սահմանափակվել են միայն էլեկտրոնային գրադարանների և համացանցային տարբեր աղբյուրներում եղած գրաբար տեքստերի հղումների կայքերի ստեղծումով: Լեզվական կորպուսները կազմության սկզբունքներով նկատելիորեն տարբերվում են առցանց գրադարաններից: Հետևաբար վերոնշյալ աղբյուրները կարող են միայն նպաստել էլեկտրոնային կորպուս ստեղծելուն, քանի որ ո՛չ հղումների կայքը, ո՛չ էլեկտրոնային գրադարանը չեն կարող համարվել լեզվական կորպուս: Կորպուսներն ունեն մի շարք տարբերակիչ հատկանիշներ:

Ներկայացնելով նոր ստեղծվելիք կորպուսի կազմության սկզբունքները՝ հոդվածագիրը նշում է, որ կորպուսը հնարավորություն կտա ոչ միայն կատարելու լեզվական միավորների ամբողջական ուսումնասիրություն բոլոր գրաբարագիր տեքստերում, այլև արդիականացնելու և մեքենայացնելու լեզվի կիրառական տարբեր բնագավառներում կատարվող աշխատանքները:

Համբարձույան Վ., Հայերենի բառաքնություն և ստուգաբանություն (հոդված)

Աշխատությունը բառաքնական և ստուգաբանական ուսումնասիրություն է. առաջարկվում են ճշգրտումներ և լրացումներ՝ հայերենի ապագա ստուգաբանական բառարանի համար: Հատկապես վերջին տասնամյակներին ստեղծվել են բառի (արմատի) ստուգաբանությանը վերաբերող շատ աշխատանքներ, և հայերենի տվյալները համեմատաբար լայն ուշադրության առարկա են: Մեզանում նույնպես գրվում են նմանօրինակ աշխատանքներ: Աշխատությունը բաղկացած է մի քանի մասից.

1) քննվում է հնդեվրոպական արմատի զրո աստիճանի ձայնավորման հնարավոր արտացոլումների հարցը, բերվում են ստուգաբանական զուգադիպումներ, այլև հայերեն բնագրերի որոշ բառերի մեկնություններ,

2) ստուգաբանական մակարդակում քննվում են *այգի*, *անակ* և *առած*, *արտորալ* և *արտոյտ*, *եղեռն*, *երկինք* և *երկիր*, *հարկ* (*անեմ*), *հերկ*- բառերը (արմատները), որոնք բնիկ են (ունեն հնդեվրոպական ծագում). միայն *մարգարիտ* բառն է, որ փոխառություն է ոչ հնդեվրոպական լեզվից,

3) կատարվում է շուրջ մեկուկես տասնյակ բառերի ավելի մասնամասն համեմատական-ստուգաբանական քննություն:

Բուն նյութը վերաբերում է հայերենի բառապաշարի համեմատական-ստուգաբանական քննությանը՝ ընդ որում ոչ միայն ավանդականի, այլև վերջին տարիների ձեռքբերումների նկատառումով: Կան չստուգաբանված («անհայտ ծագման») բառերի, այլև նոր տվյալների հիման վրա կատարված ստուգաբանություններ:

**Հովհաննիսյան Ս., Անհատական լեզվաշխարհի շերտային
դրսևորումները (ըստ Էդ. Աթայանի՝ մարդկության կյանքի
մակրոփուլերի տեսության) (հոդված)**

Հիմք ընդունելով Էդ. Աթայանի «Մարդկության կյանքի մակրոփուլեր»-ի տեսությունը՝ հոդվածում առաջարկվում է տեսակետ այն մասին, որ լեզվական աշխարհի զարգացման մեջ կարելի է առանձնացնել 3 փուլ: Դրանցից առաջինը պարզապես լեզվական նշանների կուտակման փուլն է, որին զուգահեռ տեղի է ունենում մարդու իրականությունը ճանաչելը: Երկրորդ փուլը գիտելիքի ամրակայումն է: Երրորդը՝ կուտակված գիտելիքի վերլուծությունը և փոխանցումը, որի շնորհիվ իրականանում է մարդու հոգեկան և լեզվական աշխարհների կատարելագործումը՝ կուտակված գիտելիքը վերածելով մշակութային արժեքի:

**Միքայելյան Ս., Հայերենի արաբական փոխառությունների
բարբառային բառաշերտը (հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ լեզվի բառապաշարի անբաժանելի մաս է փոխառյալ բառաշերտը. այն ձևավորվում է լեզվի պատմական զարգացման տարբեր փուլերում՝ պայմանավորված արտալեզվական և լեզվական տարբեր գործոններով: Տարածամանակյա և համաժամանակյա մոտեցումներով փոխառությունների ուսումնասիրության նպատակն է բացահայտել լեզուների և դրանց լեզվակիրների պատմական, մշակութային-քաղաքակրթական փոխհարաբերությունները:

Ըստ Ստ. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարան»-ի արաբական ծագում ունեցող բարբառային բառերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանց մեծ մասը գործածվում է փոխատու լեզվում առկա նույն կամ մոտ իմաստներով: Մի շարք բառերում, սակայն, տեղի են ունեցել իմաստային փոփոխություններ, որոնք դրսևորվում են փոխատու լեզվի համադրությամբ:

Բառիմաստային փոփոխությունները հիմնականում միջնորդ լեզվի ազդեցության հետևանք են, կամ տվյալ բառը նոր իմաստ է ձեռք բերել փոխառու լեզվում (բարբառում):

Միքայելյան Ս., Հայերենի արաբական միջնորդավորված փոխառությունների շուրջ (հոդված)

Հոդվածը վերաբերում է հայերենի արաբական փոխառյալ բարբառային բառաշերտին: Առանձնացվում են արաբական անմիջական և միջնորդավորված բարբառային փոխառությունները, նշվում դրանց ներթափանցման ուղիները, ժամանակաշրջանները և հիմնական փոփոխությունները: Հայերենի արաբական փոխառությունների միջնորդ լեզուներն են թուրքերենը (օսմաներենը) և պարսկերենը: Դա պայմանավորվում է պատմական հանգամանքներով, այդ լեզուների փոխազդեցություններով:

Զուգադրական-համեմատական մեթոդի կիրառմամբ ներկայացվում են հայերեն բարբառային բառաշերտի արաբական փոխառությունների հնչյունական և իմաստային այնպիսի փոփոխություններ, որոնք պայմանավորված են միջնորդ լեզուների ազդեցություններով:

Միքայելյան Ս., Հայերենի արաբական փոխառությունների ընդհանուր բնույթը (հոդված)

Հոդվածում ներկայացվում են հայերենի արաբական փոխառությունների ժամանակագրական փուլերը, դրանց առանձնահատկությունները: Հոդվածագիրն անդրադառնում է նաև արաբական փոխառությունների կենսունակությանը, այսինքն՝ դրանք ինչքան են կիրառվում արդի գրական հայերենում և բարբառներում:

Հայերենի արաբական փոխառությունների ավանդաբար ընդունված ժամանակագրական փուլերին՝ հոդվածագիրն առաջարկում է հավելել նաև XX դարը՝ որպես նոր փուլ: Այս շրջանի փո-

խառություններն ունեն միջնորդավորված բնույթ, կիրառվում են հատկապես արդի գրական և ժողովրդախոսակցական լեզուներում:

Մարգարյան Մ., Տղամարդկանց և կանանց խոսքի գենդերային առանձնահատկությունները հայերենում (հոդված/անգլերեն)

Հոդվածագիրը ներկայացնում է տղամարդկանց և կանանց գրավոր և բանավոր հաղորդակցական վարքագծի և խոսքի առանձնահատկությունները: Հետազոտության շրջանակում հարցումներ են իրականացվել Հայաստանի Հանրապետության վարչատարածքային տարբեր միավորներում ապրող մարդկանց շրջանում: Ընդգրկվել են տարբեր տարիքային խմբերի տարբեր սեռի մարդիկ՝ թե՛ մայրաքաղաք Երևանից, թե՛ Հայաստանի տարբեր մարզերից: Հոդվածագիրը ներկայացնում է մայրաքաղաք Երևանից հարցմանը մասնակցած լեզվական հանրույթի (60 լեզվակիր) հանրալեզվաբանական քննության արդյունքները: Մեռային բաշխումը կատարվել է համաչափ. 60 լեզվակրից 30-ը արական սեռի ներկայացուցիչ է, 30-ը՝ իգական: Հետազոտությունն իրականացնելու համար հեղինակը կիրառել է դիտարկման և հարցումների մեթոդները: Քանի որ հետազոտության շրջանակում առավել հետաքրքրական են խոսքի գենդերային տարբերությունները, նմանությունները, առանձնահատկությունները, կարիք չկար տեսաձայնագրությունների և ամբողջական խոսքի գրանցման: Հետևաբար գրի են առնվել խոսքի՝ հետազոտության համար առավել կարևոր հատվածները, ինչպես նաև հարցվողները լրացրել են անանուն հարցաթերթիկները: Հավաքված տվյալները ներկայացվել են աղյուսակների տեսքով և խմբավորել: Ըստ այդմ՝ մաթեմատիկական վիճակագրության մեթոդով կատարվել է հավաքված նյութի գնահատում, որի հիման վրա էլ հնարավոր է դարձել արձանագրելու կանանց և տղամարդկանց խոսքի գենդերային առանձնահատկությունները հայերենում: Հարցումները հնարավոր

րություն են տվել պարզելու տղամարդկանց և կանանց խոսքի գենդերային ընդհանուր առանձնահատկությունները, ինչպես, օրինակ՝ արտասանական, հնչերանգային տարբերությունները, խոսքի հուզականությունը, նախընտրելի քերականական կառույցները, բառերը և այլն:

Մարգարյան Մ., Հայ լեզվափիլիսոփայության անվանի ներկայացուցիչը (հոդված)

Հոդվածում ներկայացվում է հայ նշանագիտության հիմնադիրներից մեկի՝ ականավոր լեզվաբան, փիլիսոփա, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Աթայանի գիտական ժառանգությունը՝ զուգակցված կենսագրական իրադարձություններով: Նշվում է, որ Էդ. Աթայանի նշանագիտական դիտարկումները գերազանցապես տարբերվում են նշանագիտական ընդհանուր դիտարկումներից ու պատկերացումներից: Նրա գիտական ժառանգությունը հիմնարար նշանակություն ունի գիտության տարբեր բնագավառների համար՝ բուն լեզվաբանության և փիլիսոփայության, ինչպես նաև լեզվափիլիսոփայության և լեզվանշանագիտության:

Միմոնյան Ն., Բառաքնական և ստուգաբանական դիտարկումներ (մենագրություն)

Գրքում զետեղվել են հայերեն բառերի ծագումնաբանական քննությանը վերաբերող հոդվածներ, որոնցում կատարվում են ստուգաբանական ճշգրտումներ, առաջարկվում նոր ստուգաբանություններ: Քննվում են կրկնությամբ կազմված այնպիսի բայեր, որոնք կա՛մ համարվել են անհայտ ծագման, կա՛մ դրանց ծագման վերաբերյալ հայտնվել են տարբեր կարծիքներ: Քննվում են նաև *ամամ-լնում, աձեմ-բերեմ, յ և զ* նախամասնիկներ ունեցող բայերը, գրաբարի «միտք և մտածողություն» և «զգայական ընկալումներ»

թեմատիկ (իմաստային) խմբերի բայեր: Փորձ է արվում ճշգրտելու գուղձն բառի ստուգաբանությունը:

Միմոնյան Ն., Ստուգաբանական դիտարկումներ (հոդված/ռուսերեն)

Հոդվածը վերաբերում է հայերեն *քիստ* «հացազգի բույսերի հասկերի ամեն մի հատիկի գլխին աճող բարակ փշանման կարծր մազիկ» և *խաղ* «լաց» բառերի ստուգաբանությանը: Հոդվածագիրը, նշելով, որ *քիստ*-ը և *խաղ*-ը համարվել են անստույգ ծագման, այդ բառերի համար բերում է իմաստային և հնչյունական զուգահեռներ հնդեվրոպական այլ լեզուներից և առաջարկում դրանք համարել բնիկ՝ հնդեվրոպական ծագման բառ:

Սուվարյան Ա., Ժամանակակից գրական արևելահայերենի և գերմաներենի ենթակայական ու հարակատար դերբայների քերականական տիպաբանություն (հոդված)

Հայտնի է, որ ենթակայական և հարակատար դերբայները հայերենում կազմվում են կատարյալի ու անկատարի հիմքից, գերմաներենում՝ անորոշի հիմքից, ածանցմամբ՝ պայմանավորված բայի խոնարհման ձևերով (Ա, Ե / «ուժեղ», «թույլ»): Հոդվածագիրը նշում է, որ գերմաներենում բուն անորոշի և անցյալի անորոշի հիման վրա ստեղծվել են ենթակայական դերբայի երկու ժամանակային ձևերը, ընդ որում՝ անցյալի անորոշ ենթակայականը կազմվում է հարակատար դերբայով և օժանդակ բայի ենթակայականով, այսինքն՝ արտահայտում է անցյալի իմաստ: Գերմաներենում ենթակայական դերբայով արտահայտված ձևի պարագային հայերենում համապատասխանում է անորոշ դերբայի գործիական հոլովը: Հայերենում ենթակայականը՝ որպես անկախ դերբայ, ի տարբերություն գերմաներենի, ժամանակային ձև չի կազմում: Գերմաներենում հարակատար դերբայն ունի բարդ և տարբերակված կազմություն՝ արմատական ձայնավորի հընչյունավորություն, ածանցում՝ պայմանավորված բայի խոնարհման տե-

սակով: Առհասարակ գրաբարի անցյալ ժամանակը համարժեք է դիտվում վաղակատար կամ հարակատար դերբայներով կազմված ժամանակաձևերին: Քանի որ ժամանակակից գրական արևելահայերենում հարակատարով դիմավոր ձևերը չեն գործածվում, ուստի հարակատար դերբային փոխարինում է վաղակատարը: Գերմաներենում հարակատար դիմավոր ձևերը, ի տարբերություն ժամանակակից արևելահայ գրական լեզվի ձևերի, ավելի մոտ են գրաբարին:

Քննվող լեզուներում ներգործական սեռի բայերի հարակատար ժամանակաձևերի կազմության սահմանափակությունը ու կրավորականի լայն գործածությունը բացատրվում է բայի սեռի դրսևորած գործողության բնույթով: Կրավորական սեռի իմաստով գործածվող բայերն արտահայտած իմաստով ավելի մոտ են հարակատարի իմաստին:

Այսպիսով՝ զուգադրական քննությամբ բացահայտվում են ցեղակից լեզուների՝ լեզվավիճակների ընդհանրությունները և պատմական զարգացման ընթացքում ձևավորված առանձնահատկությունները:

Գ. ՀԱՅ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վարդանյան Ա.Վ., «Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսասունները», Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 64 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Բարբառագիտական հետազոտություններ, Պրակ Ա, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 179 էջ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ

Գևորգյան Գ.Գ., Արևելահայերենի նորմեր և շեղումներ (տեսագործնական ձեռնարկ), Ե., «Զանգակ» հրատ., 2022, 240 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Բառնասյան Ջ.Ա., Ածանցումը Շիրակի մարզի գյուղերի խոսվածքներում, Ե., «Լեզու և խոսք», № 1(2), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 5-12:
2. Բառնասյան Ջ.Ա., Բառանվանողական և ձևաբանական հետաքրքիր որոշ ձևեր Արցախի խոսվածքներում, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 305-311:

3. Գևորգյան Գ.Գ., Նկատառումներ Արցախի բարբառային միավորների եղանակաժամանակային կառուցատիպերի ձևակազմական և գործառական առանձնահատկությունների վերաբերյալ, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 37-45:
4. Գևորգյան Գ.Գ., Անահիտ Տոնապետյան (ծննդյան 60-ամյակի առթիվ), Ե., «Պատմաբանասիրական հանդես», № 1(219), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 318-322:
5. Գևորգյան Գ.Գ., Չմշկածագի բարբառը, Վիեննա, «Հանդես ամսօրեայ», թիւ 1-12, Մխիթարեան հրատ., 2022, էջ 181-194:
6. Gevorgyan G.G., Grammatical Polysemy in Armenian Dialects, Gori, "Philological researches", № 4, 2022, p. 82-88.
7. Խաչատրյան Հ.Ռ., Խառատյան Մ.Հ., Բառաբարդումը որպես յուրահատուկ լեզվամտածողության արտահայտության միջոց Համշենի բարբառում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 28-40:
8. Խաչատրյան Հ.Ռ., *Տան հատակ (գետին)* հասկացության բառանունները բարբառային հայերենում», Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 237-240:
9. Խաչատրյան Հ.Ռ., «Գետին» հասկացության բառանունները և նրանց իմաստային զարգացումները բարբառային հայերենում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 82-94:
10. Խաչատրյան Հ.Ռ., Կոզենի բարբառի առանձնահատկությունները, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 82-94:

11. Կատվայան Վ.Լ., Մկրտումյան Ա.Ս., Խառատյան Մ.Գ., Սահակյան Ն.Գ., Շամախիի բարբառի մասին, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 90-102:
12. Կատվայան Վ.Լ., Հինհայերենյան մի քանի հնչյունական հատկանիշների արտացոլումը արդի հայ բարբառներում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 41-57:
13. Կատվայան Վ.Լ., Կարևո բարբառը 20-րդ դարի սկզբին գրաված հեքիաթներում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 95-117:
14. Կատվայան Վ.Լ., Բարբառային բառապաշարի՝ տղամարդկանց և կանանց բնութագրող շերտերի շուրջ (ըստ Բայազետի բարբառի ընձեռած նյութի), Գավառ, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, № 13, «Քոփի Փրինթ» հրատ., 2022, էջ 363-378:
15. Կատվայան Վ.Լ., Կիլիկիայի հայերենի մասին, Ե., «Լեզու և խոսք», № 1(2), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 28-42:
16. Կատվայան Վ.Լ., Հաղորթի բարբառի մասին, «Պատմաբանասիրական հանդես», № 3 (221), Ե., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 144-154:
17. Կատվայան Վ.Լ., Վարդենիսի տարածաշրջանի արդի լեզվական պատկերը, Ե., «Սոթք. Հողի մշակութային հիշողությունը» գիտական հոդվածների ժողովածու, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հրատ., 2022, էջ 58-67:
18. Կատվայան Վ.Լ., Կարևո բարբառը հեքիաթներում, Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 240-241:

19. Մեսրոպյան Հ.Հ., «Մահ» հասկացության բարբառային բառաշերտի ընդհանուր բնութագիրը, Ե., «Լեզու և լեզվաբանություն», №1 (26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., էջ 21-32:
20. Մեսրոպյան Հ.Հ., «Բարեգործություն» հասկացության անվանումները հայերենի տարածքային տարբերակներում, Բարեգործությունը հայոց մեջ «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» հիմնադրման 140-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու (16 նոյեմբերի 2021 թ.), Ե.: ՀՀ ԳԱԱ պատմ. ինստիտ., 2022, էջ 3-20:
21. Մեսրոպյան Հ.Հ., Շիրակի ժողովրդական երգերում գործածված բուսանունների իմաստային-գործառական յուրահատկությունները, Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 256-257:
22. Մեսրոպյան Հ.Հ., Գարեգին Ա. Քեսաբցի կաթողիկոսի քարոզխօսութեան լեզուական առանձնայատկությունները, «Էջմիածին», Ը, 2022, էջ 75-85:
23. Վարդանյան Ա.Վ., *Արտակ* անձնանվան ստուգաբանությունը, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 74-81:
24. Վարդանյան Ա.Վ., Խառատյան Մ.Կ., Սահակյան Ն.Գ., Դիտարկումներ Ճահուկ-Վայքի միջբարբառի որոշ բուսանունների վերաբերյալ, Ե., «Լեզու և խոսք», № 1(2), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 43-60:
25. Վարդանյան Ա.Վ., Հինհայերենյան իրողություններ Նախիջևանի տարածքի բարբառներում, Ե., «Լեզու և խոսք», № 1(2), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 61-73:
26. Վարդանյան Ա.Վ., Արցախ-Սյունիք խոսվածքներ Նախիջևանի տարածքում, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 236-252:

27. Քումունց Մ.Ս., Գորիսի բարբառը հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգման համատեքստում, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 253-269:
28. Քումունց Մ.Ս., Մեհտիշենի բարբառը, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 270-287:
29. Քումունց Մ.Ս., Կրկնավոր բարդությունների կազմման եղանակները Սյունիք-Արցախի բարբառային տարածքում, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 288-304:
30. Քումունց Մ.Ս., Բարբառագիտական մի քանի եզրույթների և ըմբռնումների շուրջ, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Պրակ Գ, Ե., Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիա, Copy Print LLC հրատ., 2022, էջ 186- 195:
31. Քումունց Մ.Ս., Կրոնի և նախապաշարմունքին վերաբերող մի քանի բառերի քննություն (ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի տվյալների), Ե., «Բանբեր համալսարանի. Բանասիրություն», № 2 (38), ԵՊՀ հրատ., էջ 89-96:
32. Քումունց Մ.Ս., Ոսկրի խորհրդապաշտությունը Ա. Բակունցի «Կարմրաքար» վեպում, Ե., «Գրականագիտական հանդես», ԻԴ, № 1, «Արմավ» հրատ., 2022, էջ 330-343:
33. Քումունց Մ.Ս., Հումանշության բառիմաստաբանական գործառույթները Սյունիք-Արցախ բարբառային տարածքում, Ե., Սուրբ Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1660-ամյակին նվիրված

- «Հայոց գրերը և հայ դպրոցը» միջազգային հայերենագիտական գիտաժողովի նյութեր, 2022, էջ 101-115:
34. Քումունց Մ.Ս., Հին հայերենից Սյունիք-Արցախ բարբառախմբին անցած իրանական փոխառությունների ձևմաստային նկարագիրը, Ստեփանակերտ, «Կովկասյան տարածաշրջանի արդի հիմնախնդիրները. հնարավորություններ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, «Մեսրոպ Մաշտոց համալսարան», 2022, էջ 67-70:
 35. Քումունց Մ.Ս., Ղուկաս Սեբաստացու «Դավիթ Բեկ կամ պատմություն դափանցոց»-ի տեղանվանական համակարգը, Ե., «Աշխատություններ Հայաստանի պատմության թանգարանի», № 2 (10), «Էդիթ Պրինտ» հրատ., 2022, էջ 93-106:
 36. Քումունց Մ.Ս., Մովսես Խորենացին Ստեփանոս Օրբելյանի պատմության, Ղազար Փարպեցու «Թղթի» և ավանդազրույցներում, Ստեփանակերտ, «Գ. Նարեկացի» համալսարանի «Դըպրատուն» հանդես, №2, «Դիզակ պլյուս» հրատ., 2022, էջ 15-27:
 37. Քումունց Մ.Ս., -ՏԻ||ԴԻ ածանցով բարբառային մի քանի բառերի քննություն, Ստեփանակերտ, «Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր», Պրակ 2, ԱրՊՀ հրատ., 2022, էջ 31-40:
 38. Քումունց Մ.Ս., Արևելյան լեզուներից անցած փոխառությունների որակական և քանակական հատկանիշները (ըստ Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի), Երևան-Գյումրի, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտության արդի հիմնահարցեր» 11-րդ միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2022, էջ 248-252:
 39. Քումունց Մ.Ս., Հին Գորիսը, տեղադրութեան կեղծ թեզը և նորայայտ արձանագրութիւնները, Երուսաղէմ, «Սիոն», թիւ 8-12, տպարան Սրբոց Յակոբեանց, էջ 379-392:
 40. Քումունց Մ.Ս., Բուրդուր: Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի բարբառը Արևմտյան Անատոլիայում, Ստեփանակերտ, «Հայրենագրկման և գոյաբանական պայքարի գաղափարն արև-

մտահայ գրականության մեջ» գիտաժողովի նյութեր, «Գ.Նարեկացի» համալսարան, «Դիզակ պլյուս» հրատ., 2022, էջ 57-70:

41. Քումունց Մ.Ս., Սյունիքի բնությունը տեղանվանական համակարգում, Ե., «Սյունիք. Մշակույթը և բնությունը» գիտաժողովի ամփոփագրեր, ՀԱԻ հրատ., էջ 60-61:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳՐԵՐ

Բառնապյան Ջ., Ածանցումը Շիրակի մարզի գյուղերի խոսվածքներում (հոդված)

Ընդհանուր հայերենյան իրողություն է վերջածանցների քանակական գերակշռությունը նախածանցների համեմատությամբ: Երևույթը հոդվածագիրն արձանագրում է նաև Շիրակի մարզի խոսվածքներում գործածվող բաղադրությունների դիտարկմամբ: Նա նշում է, որ հատուկ ծրագրով ՀՀ Շիրակի մարզի մի շարք գյուղերում հավաքչական աշխատանքներ կատարելիս տեղեկություններ է քաղել նաև բառակազմական տարաբնույթ իրողությունների վերաբերյալ (բառաբարդում, բառածանցում և այլն):

Հոդվածում հեղինակը կարևորում է ածանցման հատկապես ինքնատիպ դրսևորումները: Նրան հետաքրքրում է, թե գործառական ի՛նչ արժեք են դրսևորում նշյալ տարածքի խոսվածքներում առկա բառակազմական ձևերն ու միջոցները: Ներկայացում են տարբեր խոսվածքներում առկա փոխառյալ ածանցները, որոնք բառին նաև իմաստային նրբերանգներ են հաղորդում: Անդրադարձ է կատարվում նաև փոխառյալ արմատական ձևերով և հայերենի ածանցներով կազմված բաղադրություններին, որոնք ունեն հայաբանության արժեք:

Բառնասյան Ջ., Բառանվանողական և ձևաբանական հետաքրքիր որոշ ձևեր Արցախի խոսվածքներում (հոդված)

Հոդվածագրի վկայությամբ՝ ճանաչված բարբառագետ Ա.Ղարիբյանը «Հայ բարբառագիտություն» աշխատության մեջ անդրադարձել է Ղարաբաղի տարածքում գործածվող երկու բարբառներին՝ հյուսիսային Ղարաբաղի, և հարավային Հաղրութի՝ քննելով Արցախում գործածվող 2 տարբեր բարբառներում առկա բառանվանական և ձևաբանական (դերանվանական) որոշ հետաքրքիր իրողություններ, որոնք դիտվում են բարբառագիտությանը, ազգագրությանը վերաբերող մենագրություններում և ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնում առկա խոսվածքային միավորների գրառումներում:

Բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով արված գրանցումներում առկա են Հովհաննես Թումանյանի «Սուտասանը» հեքիաթի գրառումներ համապատասխան խոսվածքներով: Հոդվածագիրը հետաքրքիր տարբերություններ և նմանություններ է արձանագրում Ղարաբաղի և Հաղրութի բարբառներով թումանյանական հեքիաթի գրառումները համեմատելիս: Լեզվի ինստիտուտում պահվող նյութերից նա ընտրել է Արցախի Հարությունագուներ և Հաղրութի շրջանի Մեծ Թաղեր (Թաղլար) գյուղերի խոսվածքների գրառումները՝ քննելով բառանվանողական և ձևաբանական իրողություններ: Ջուգաղրական քննությամբ ներկայացվում են Հաղրութի և Ղարաբաղի բարբառների առանձին խոսվածքների նմանություններն ու տարբերությունները դերանվանական և բայական համակարգերում:

Բարբառագիտական հետազոտություններ. Պրակ Ա. (գիրք)

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցների աշխատանքները, որոնք 2013 թ. հրապարակվել են տարբեր հանդես-

ներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են բարբառների ուսումնասիրության ընդհանուր ու մասնավոր խնդիրների, ներկայացնում են բարբառային լեզվի հնչյունաբանության, բառապաշարի ու ձևաբանության ոլորտներում կատարված հետազոտությունների արդյունքներ, գուգադրահամեմատական բարբառագիտության առնչվող հարցեր:

Գևորգյան Գ., Արևելահայերենի նորմեր և շեղումներ (տեսագործնական ձեռնարկ)

Լեզվական նորմերն ապահովում են գրական տարբերակի անթերի իմացությունը, ճիշտ և գեղեցիկ խոսելն ու գրելը, գրագետ հաղորդակցվելը: Լեզվի գրական նորմերից կատարվող ամեն մի շեղում համարվում է սխալ և անընդունելի: Տեսագործնական ձեռնարկում ներկայացվում են արևելահայերեն խոսքի գործածության նորմերը և շեղումները: Նախ տրվում են լեզվական նորմերը, բացատրվում կանոնական ձևերի գործածությունը, այնուհետև՝ շեղումները: Ձեռնարկում առկա ուղղագրական, կետադրական, քերականական առաջադրանքները գործնական աշխատանքով տեսական գիտելիքները յուրացնելու և ամրապնդելու համար են:

Գևորգյան Գ., Չմշկածագի բարբառը (հոդված)

Չմշկածագի բարբառային հատկանիշներին, ինչպես նշում է հոդվածագիրը, հակիրճ անդրադարձել է Ռ. Բադրամյանը «Դեր-սիմի բարբառային քարտեզը» ուսումնասիրության մեջ զետեղված «Չմշկածագի ենթաբարբառը» աշխատանքում: Սակայն նրա ներկայացրած բարբառային իրողությունները, ըստ հոդվածագրի, նոր տվյալներով լրացման և ճշգրտման կարիք ունեն: Նա ներկայացնում է Չմշկածագ քաղաքի լեզվական բնութագիրը համաժամանակյա քննությամբ՝ ըստ Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով գրանցված «Չմշկածագ» աշխատանքի: Առանձ-

նացվում են Չմշկածագի խոսվածքում առկա հնչյունական և ձևաբանական իրողությունները: Չմշկածագ քաղաքի հնչյունաբերականական և բառապաշարային հատկանիշների քննությունը կարևորվում է արևմտահայ խմբակցության՝ կորստյան վտանգի առջև կանգնած բարբառային միավորի պահպանված վիճակի ամրագրմամբ և բարբառային նյութը անդառնալի կորստից փրկելու նպատակադրումով:

**Գևորգյան Գ., Նկատառումներ Արցախի բարբառային
միավորների եղանակաժամանակային կառուցատիպերի
ձևակազմական և գործառական առանձնահատկությունների
վերաբերյալ (հոդված)**

Հոդվածում համաժամանակյա և տարժամանակյա հետազոտության եղանակների կիրառմամբ քննվում են Արցախի բարբառային միավորների եղանակաժամանակային կառուցատիպերի ձևակազմական և գործառական յուրահատկություններին առնչվող որոշ հարցեր: Հայ բարբառագիտության մեջ ընդունված է շարունակական ժամանակներ կազմելու հատկությամբ առանձնացնել բարբառների դերբայակազմ խումբը: Դրանցում շարունակական ժամանակների բաղադրիչ համարվում է անորոշ դերբայի գործիական հոլովաձևը, որը, օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակաձևերի հետ զուգորդվելով, ցույց է տալիս տևական գործողության հարաբերությունը ներկա կամ անցյալ ժամանակակետի հետ: Լեզվաբանական գրականության մեջ նման կիրառություն է նշվում Ղարաբաղի և Հավարիկի բարբառներում: Հոդվածագրի կարծիքով՝ գիտականորեն հիմնավորված չէ վերոնշյալ կառուցատիպերը շարունակականի ձևեր համարելը, քանի որ դրանցում բացակայում է շարունակականի մասնիկակազմ ձևերին բնորոշ իմաստը: Բացի դրանից՝ հիշյալ կազմությամբ շարունակական ժամանակաձևեր չեն նշվում Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագրով լրացված այն նյութերում, որոնք

գրանցվել են Արցախի տարածքում: Ծայրիյուսիսարևելյան միջ-բարբառախմբի Ղարաբաղի բարբառի խոսվածքային որոշ միավորներ (Շաղախ, Մարտակերտ /Ջանյաթաղ/, Խծաբերդ, Խանագահ) հատկանշվում են անցյալ կատարյալի բաղադրյալ ժամանակաձևերի կազմությամբ, որոնց գործածությունը, ըստ հոդվածագրի, պայմանավորվում է մի շարք գործոններով և պատմական երկարատև գործընթացի արդյունք է:

Գևորգյան Գ., Քերականական բազմիմաստության դրսևորումները հայերենի բարբառներում (հոդված)

Հայոց լեզվի բայական համակարգի ամբողջական նկարագրության տեսանկյունից կարևորվում է հայերենի բարբառների եղանակաժամանակային կառուցատիպերի քննությունը, որոնք պատմական զարգացման ընթացքում զգալի փոփոխություններ են կրել: Ճիշտ է, հայերենի բարբառների բայական համակարգերին նվիրված ուսումնասիրություններում լեզվաբանները անդրադարձել են քերականական մեկ ձևով տարբեր իմաստներ արտահայտելու դեպքերին, սակայն դրանք չեն դիտարկվել որպես առանձնահատուկ երևույթ և համակարգված չեն ուսումնասիրվել: Հոդվածում հետազոտվում են հայոց լեզվի տարածքային տարբերակների եղանակաժամանակային համակարգերում առկա բազմիմաստության դրսևորումները:

Խաչատրյան Հ., *Գետին* հասկացության բառանունները և նրանց իմաստային զարգացումները բարբառային հայերենում (հոդված)

Հոդվածագիրը «տուն և տնտեսություն» իմաստային դաշտի շրջանակում դիտարկում է նաև *գետին* բառանունը, քանի որ բարբառային հայերենում այն գործածվում է նաև որպես *տան հողե հատակ* հասկացության նշանակելի: *Գետին* հասկացություն-

նը «տան հողե հատակ» իմաստով հայերենի բարբառներում դրսև-վորված է հիմնականում *գետին, տափ, տախտ* բառանուններով: Բարբառային հայերենում «*հատակ*» հասկացության *գետին* բառանունը տարածքային ամենամեծ ընդգրկումն ունի և դրսևորվում է բազմաթիվ հնչատարբերակներով: Ըստ հողվածագրի՝ հայերենի բարբառներում *գետին* հասկացության նշանակելի է նաև *տախտ* պահլավական փոխառությունը, որը հին մատենագրության մեջ կիրառվում է «գահ, աթոռ, թագավորական գահույք, ինչպես նաև մահճակալ» իմաստներով: Հողվածագիրը փաստում է, որ այն բարբառային հայերենում (Երևան, Ղարաբաղ, Մուշ, Թիֆլիս ևն) *թախտ* հնչատարբերակով ավելի հաճախ հանդես է գալիս որպես *տախտակե բազմոց* հասկացության նշանակելի՝ նաև նկատելով, որ Մուշի, Վանի, Մոկսի, Ալաշկերտի, Սասունի որոշ խոսվածքներում *տախտ* բառանունը բառիմաստի ընդլայնմամբ ձեռք է բերել «սենյակի փայտամած կամ հողե հատակ» նշանակությունը: Հողվածում անդրադարձ է կատարվում *հատակ* բառանվանը, որը բարբառային հայերենում բառիմաստային տարբեր ճյուղավորումներով դրսևորվում է «գերեզմանի փոս, դժոխք, տան հիմք» նշանակություններով: Հողվածագիրը նկատում է, որ ըստ ՀՖԱ ծրագրով հավաքած նյութերի՝ «սենյակի կամ տան հատակ» իմաստով *հատակ* բառանունը բարբառային հայերենում գրեթե չի գործածվում: Հողվածագիրն արձանագրում է, որ հայերենի բարբառների հարուստ բառապաշարում *գետին* հասկացության բառանուններից հնդեվրոպական արմատներ դիտարկվող *գետին*-ը, *յատակ*-ը, *տափ*-ը, *ցած*-ը և *հող*-ը դրսևորվում են իմաստային յուրահատուկ զարգացումներով:

**Խաչատրյան Հ., Խառատյան Մ., Բառաբարդումը որպես
յուրահատուկ լեզամտածողության արտահայտության միջոց
Համշենի բարբառում (հողված)**

Հողվածագիրներն անդրադառնում է Համշենի բարբառի բառապաշարի բաղադրյալ որոշ բառերի, որոնք յուրահատուկ լեզ-

վամտածողության դրսևորումներ են: Քննվում են անվանական ինքնատիպ որոշ հարադրություններ: Անվանական կայուն բառակապակցությունների յուրօրինակ նմուշներ են արձանագրվում կրոնափոխ համշենահայերի բառապաշարում: Որպես համշենահայերի պատկերավոր լեզվամտածողության վկայություն՝ հեղինակները դիտարկել են *ձվածեղ* հասկացությունն արտահայտող *հալաձ հավզիտ* հարադրությունը, որը հումանիշային այլ տարբերակներով արձանագրվում է նաև արևմտյան մի շարք բարբառներում: Առանձնացվում են նաև *բամբասանք, կրիա* հասկացությանն առնչվող՝ Համշենի բարբառի մի շարք ուշագրավ անվանական հարադրություններ (ասած-ասած, գալատով լոյդու): Համշենի բարբառի բառապաշարի համադրական կազմություններից հողվածագիրներն առանձնացնում են «*հսց, բոքոն*» (փուռնիտ), «*քամած մածուն*» (թօնքօւ) և «*այգալաց*» (էկլաց) նշանակություններով բարդությունները՝ ներկայացնելով դրանց բարբառային հնչաձևերը և քննելով բառիմաստային դրսևորումները:

Հողվածագիրների կարծիքով՝ լինելով կղզիացած ու մեկուսացած՝ համշենահայերենը ներկայանում է միայն այդ բարբառին բնորոշ բազմաթիվ ինքնատիպ բառաբարդումներով:

Խաչատրյան Հ., Կոզենի բարբառի առանձնահատկությունները (հողված)

Հեղինակի վկայությամբ՝ Կոզենը Արցախի հյուսիսային բնակավայրերից է՝ Կուր գետի աջ ափին, և ներկայումս ընդգրկված է Ադրբեջանի Թովուզի շրջանի կազմում: Հողվածագրի նպատակն է բացահայտել Ռ. Բադրամյանի ուսումնասիրությունից (1961 թ.) հետո բարբառի կրած փոփոխությունները, մասնավորապես 1990 թ. կոզենցիները ստիպված են եղել բռնագաղթել հայրենի գյուղից: Հետաքրքրական է՝ բռնագաղթած կոզենցիները արդյոք պահպանել են իրենց բարբառը, և արդյոք այն գործածվում է ներկայումս: Ըստ հեղինակի՝ Արարատի մարզի Միս գյուղում

բնակվող կողեցիների ավագ և միջին սերունդները այժմ էլ խոսում են Կոզենի բարբառով, և նա հնարավորություն է ունեցել համեմատելու բարբառի ժամակագրական տարբեր վիճակները: Նշվում են Ռ. Բաղրամյանի և հեղինակի տվյալների համեմատությամբ նկատված բարբառային տարբերությունները և առանձնահատկությունները:

Ըստ հոդվածագրի՝ բարբառում անաղարտորեն պահպանվել են հինհայերենյան բազմաթիվ հնչյունական, քերականական հատկանիշներ, որոնց քննությունը կարևորվում է նաև ծայրիդասիսարևելյան միջբարբառախմբի՝ կորստյան վտանգի առջև կանգնած բարբառային միավորի պահպանված վիճակի, առկա նյութի ամրագրման անհրաժեշտությամբ:

Կատվայան Վ., Բարբառային բառապաշարի՝ տղամարդկանց և կանանց բնութագրող շերտերի շուրջ (ըստ Բայազետի բարբառի քննածեսծ նյութի) (հոդված)

Նոդվածում Բայազետի բարբառի օրինակով դիտարկվում են գենդերային տարբերությունները հայերենի բարբառայինի բառապաշարում: Հեղինակի նպատակն է բացահայտել և ներկայացնել տղամարդկանց և կանանց արտաքին ու ներքին հատկանիշների, դիրքի ու կարգավիճակի, ամուսնական հարաբերությունների, զբաղմունքի և վարքի վերաբերյալ պատկերացումները ավանդական հայկական միջավայրում: Ուսումնասիրության նյութը հավաքվել է ՀՀ Գեղաքունիքի մարզում՝ Բայազետի բարբառով խոսող հանրության միջավայրում անմիջական շփումներով, ինչպես նաև բարբառին վերաբերող աշխատություններից: Հավաքված նյութը դասակարգվում է ըստ իմաստային խմբերի, կանանց ու տղամարդկանց վերաբերող բառախմբերի, դրական ու բացասական վերաբերմունքի արտահայտությունների: Դիտարկվում են իմաստային այնպիսի խմբեր, ինչպիսիք են՝ մարդկանց արտաքին հատկանիշներ, հոգեկան, բարոյական հատկանիշներ, ունակություններ, դիրք, կարգավիճակ, ամուսնական կյանք և հարաբերու-

թյուններ, զբաղմունք, կենցաղ, կեցվածք, վարմունք, հարաբերություններ, հագուստ և հարդարանք, իրեր և այլն: Դիտարկումները ցույց են տալիս, որ լեզուն հանդես է բերում համակարգային տարբերություններ ինչպես սեռերին վերաբերող իրողությունները, այնպես էլ դրանց նկատմամբ գնահատողական վերաբերմունքը արտացոլելիս: Եթե գրական լեզուն սեռերի տարբերությունը, բառային տարբերություններից բացի (տղա- աղջիկ), երբեմն արտահայտում է նաև ածանցմամբ (ընկեր-ընկերուհի), ապա Բայազետի բարբառում այդ տարբերությունը ածանցմամբ չի արտահայտվում: Սեռերին վերաբերող բառաշերտերում դրսևորվում են բարբառային հայերենի բառապաշարին բնորոշ բառակազմական ու իմաստաբանական գրեթե բոլոր իրողություններն էլ:

Հետազոտության մեջ դիտարկվող նյութը, ինչպես նաև ստացվող արդյունքները իրենց համակարգայնությամբ փաստում են, որ իրողությունը այլ բարբառներում, նաև ընդհանրապես բարբառային հայերենում դիտարկվելու հեռանկարներ ունի:

Կատվայան Վ., Հինհայերենյան մի քանի հնչյունական հատկանիշների արտացոլումը արդի հայ բարբառներում (հոդված)

Հեղինակի հետազոտության առարկան աշխարհաբարյան շրջանի բարբառային հայերենի հնչյունական այն հատկանիշներն են, որոնց արմատները ունեն բավականին հնություն, և որոնց դրսևորումները հավանական են համարվում հինհայերենյան, նաև ավելի վաղ շրջաններում: Աշխատանքում դիտարկվում են Գ. Ջահուկյանի կազմած՝ 5-րդ դարի բարբառների հիմնական հատկանիշների ցանկից մի քանիսը, որոնք բխեցվել են բարբառային արդի հատկանիշներից: Ներկայացվում են այդ հատկանիշների բաշխման և դրսևորման յուրահատկությունները: Նշվում է, որ արդի բարբառներում արտացոլվող հինհայերենյան բաղաձայնական հատկանիշները նախ և առաջ վերաբերում են բառակազմում պայթականների ու հպաշփականների դրսևորումներին,

ապա նաև առանձին հնչյունական իրողությունների ու հնչյունների: Փաստվում է, որ հինհայերենյան ձայնավորական հատկանիշները վերաբերում են ձայնավորների երկբարբառային արտասանության, ձայնավորների քմայնացման ու շրթնայնացման երևույթներին: Արձանագրվում է, որ հինհայերենյան շրջանին բնորոշ և արդի ողջ բարբառային հայերենն ընդգրկող առավել կարևոր հնչյունական իրողությունը բառասկզբում պայթականների ու հպաշփականների տարբերակային արտահայտությունն է, որն ունի տիպաբանական արժեք: Տարբերակային այդ դրսևորումները, վերաբերելով միայն բնիկ հայերեն բառերին ու հին փոխառություններին, հայերենի զարգացման նախորդ փուլերի առնչությամբ նույնպես փաստում են բարբառային տարբերությունների առկայություն, այլև հնարավորություն են ընձեռում պարզաբանելու լեզվի զարգացման և՛ հին ու հնագույն, և՛ հետագա շրջաններին առնչվող էական հարցեր: Դիտարկված հնչյունական հատկանիշները հանդես են բերում գործառական զանազանություններ: Հինհայերենյան շրջանին վերաբերող բարբառային հատկանիշների քննությունը կարևոր է թե՛ պատմական բարբառագիտության, թե՛ համեմատական բարբառագիտության տեսանկյուններից:

**Վ. Կատվայան, Ա. Մկրտումյան, Մ. Խառատյան, Ն. Սահակյան,
Շամախիի բարբառի մասին (հոդված)**

Շեղինակների վկայությամբ՝ Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախմբի մեջ ընդգրկված Շամախիի բարբառով խոսել են համանուն քաղաքում և շրջակա մի շարք գյուղերում: Հայերը Շամախիում բնակվել են վաղ ժամանակներից՝ 10-11-րդ դարերից, գուցե և ավելի վաղ ժամանակներից: Տեղեկություններ կան, որ հնաբնակ հայերից բացի՝ Շամախիում հայեր հաստատվել են նաև սելջուկ-թուրքերի և մոնղոլ-թաթարների արշավանքների ժամանակ՝ գաղթելով Անիից, Հայաստանի այլ գավառներից: Հայահալած քաղաքականությունը

աստիճանաբար նվազեցրել է հայերի ներկայությունը: 1989 թ. վերջին տասնյակ դարեր հայերով բնակեցված շրջանը գրկվել է իր հայ բնակիչներից, իսկ թուրք-թաթարական բռնություններին զոհ է դարձել հայ բարբառներից ևս մեկը: Հեղինակները ներկայացնում են Հ. Աճառյանի, Ա. Ղարիբյանի, Ռ. Բաղրամյանի՝ Շամախիի բարբառին վերաբերող տեղեկություններ՝ նշելով, որ բարբառի մասին կարևոր տեղեկություններ են պարունակում Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով լրացված թիվ 148 և թիվ 417 տետրերը: Հոդվածագիրները ներկայացնում են Շամախիի բարբառի հնչյունական, քերականական համակարգերի և բառապաշարի հետաքրքրական մի շարք իրողություններ, ինչպես նաև՝ որոշ դիտարկումներ դրանց վերաբերյալ:

Հեղինակների հավաստմամբ՝ Շամախիի բարբառը թե՛ հնին վերաբերող իր յուրահատկություններով, թե՛ ժամանակի ընթացքում ձեռք բերած հատկանիշներով հայոց լեզվի մի ուրույն դրսևորում է, լեզվական յուրօրինակ համակարգ, որը և՛ բարբառային հայերենի, և ընդհանրապես հայոց լեզվի ուսումնասիրության համար գիտական մեծ արժեք ունի:

Կատվայան Վ., Կիլիկիայի հայերենը հայ լեզվաբանության մեկնաբանությամբ (հոդված)

Հոդվածագիրը փաստում է, որ հետազոտողները Կիլիկիայի հայերենին անդրադառնալիս հանդես են բերել տարբեր մոտեցումներ, տրվել են տարբեր բնորոշումներ: Տարբերակվել են կիլիկյան հայերեն և Կիլիկիայի բարբառ իրողությունները, և այդ առումով գիտական հետաքրքրություն են ներկայացնում այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ կիլիկյան հայերենի և միջին հայերենի, ապա նաև Կիլիկիայի բարբառի աղերսները, վերջինիս խոսվածքների յուրահատկությունները և դրանց ծագման հավանական աղբյուրները, այլ բարբառների հետ կապը և այլն: Հոդվածում դի-

տարկվում են հայկական Կիլիկիայի լեզվին վերաբերող տեսակետներն ու բնութագրումները, ինչպես նաև քննվում լեզվական որոշ խնդիրներ: Հետազոտությունը կատարելիս օգտագործվել են պատմական և համեմատական մեթոդներ: Քանի որ Կիլիկիայի հայերենը ունեցել է տարածաժամանակային ու գործառական տարբեր դրսևորումներ, ըստ այդմ էլ ստացել է տարբեր բնութագրումներ ու մեկնաբանություններ: 12-16-րդ դդ. լեզուն անվանվել է կիլիկյան հայերեն կամ կիլիկյան գրական հայերեն, որը դիտվել է իբրև միջին հայերենի՝ պետական լեզվի աստիճանի հասած և գրականությամբ ներկայացված հիմնական տարբերակ, և այդ պատճառով էլ միջին հայերեն և կիլիկյան հայերեն հասկացությունները հաճախ նույնացվել են: Կիլիկյան հայերենին իբրև հոմանիշ օգտագործվել է նաև կիլիկյան բարբառ եզրույթը, երբ նպատակը եղել է Կիլիկիայի լեզուն որպես միջին հայերենի խոսակցական տարբերակներից մեկը ներկայացնելը: Արձանագրվել է, որ Կիլիկիայի հայ բնակչության՝ Հայաստանի ու այլ վայրերի տարբեր բարբառների կրողներ լինելու հանգամանքը պայմանավորել է կիլիկյան հայերենի անմիօրինակությունը: Աշխարհաբարի շրջանում Կիլիկիայի հայերենը, արդեն իբրև բարբառային հայոց լեզվի տարատեսակ, անվանվել է Կիլիկիո բարբառ կամ Կիլիկիայի բարբառ: Նախ այդ անվանումը վերագրվել է ավելի ընդարձակ տարածքի բարբառային խոսքի, ապա՝ միայն Ձեյթունի, Հաջընի և Մարաշի տարածքների հայության լեզվին: Ձևաբանական դասակարգման դարիբյանական տարբերակով տարբերակվել են Ձեյթունի, Մարաշի (Կա ճյուղ) և Հաջընի (Կը ճյուղ) բարբառներ, բազմահատկանիշ դասակարգմամբ առանձնացվել է Կիլիկիայի կամ հարավարևմտյան միջբարբառախումբ, որի մեջ ընդգրկվել են 2 բարբառներ՝ Հաջընի և Մարաշ-Ձեյթունի: Կիլիկյան միջին հայերենի և աշխարհաբարյան շրջանի կիլիկյան բարբառների միջև լեզվական սերտ առնչություններ չեն արձանագրվել: Լեզվական փաստերից ելնելով՝ կարծիք է հայտնվել, որ կիլիկյան հայերենի ձևավորման մեջ կարևոր դեր են ունեցել հյուսիսային Ադանիքի կամ Մանասունի խոսվածքները: Աշխարհա-

բարի շրջանի կիլիկյան բարբառների լեզվական փաստերը իրենց հերթին վկայում են այլ, մասնավորապես Ագուլիսի և Համշենի բարբառների ազդեցությունների մասին:

Կատվայան Վ., Հաղրութի բարբառի մասին (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ նախքան Ադրբեջանի կողմից գավթվելը Հաղրութի շրջանն ուներ քաղաքային 1 և գյուղական 28 համայնք՝ 41 գյուղական բնակավայրերով: 2005 թ. տվյալներով շրջանն ուներ 12300 բնակիչ: Փախստական դարձած հաղրութցիները ներկայում ապաստան են գտել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության տարբեր բնակավայրերում, այլ վայրերում: Բարբառային այս միավորը հայերենի ուսումնասիրված բարբառներից է. բարբառին անդրադարձել են Հ. Աճառյանը, Ա. Ղարիբյանը: Ներկայացնելով Արցախի բարբառային ամբողջական պատկերը՝ Կ. Դավթյանը նկատում է, որ Ղարաբաղի և Հաղրութի բարբառները վաղ անցյալից ունեցել են փոխադարձ ազդեցություններ: Բարբառի ամբողջական ուսումնասիրության հեղինակ Ա. Պողոսյանը ևս փաստում է պատմական Սյունիքի տարածքում երկու հիմնական բարբառների առկայությունը՝ հյուսիսում՝ Ղարաբաղի, հարավում՝ Հաղրութի: Հոդվածագիրը նշում է, որ ըստ ձևաբանական դասակարգման՝ Հաղրութի բարբառը պատկանում է հայ բարբառների Ս ճյուղին, ըստ հնչյունաբանական դասակարգման՝ երկաստիճան ձայնեղագուրկ խմբին, ըստ բազմահատկանիշ դասակարգման՝ Գ.Ջահուկյանը բարբառային այս միավորն ընդգրկել է Ղարաբաղի բարբառի կազմում: Հաղրութի բարբառը հոդվածագիրը քննում է՝ օգտագործելով ոչ միայն առկա հետազոտությունները, այլ նաև Հայերենի բարբառագիտական աստիճանի նյութերի հավաքման ծրագրով անցյալ դարի վերջերին և ներկա դարի առաջին երկու տասնամյակներում լրացված մի շարք տետրերի նյութը: Բարբառի իրողությունները դիտարկվում են Ղարաբաղի և Մեղրու բարբառների հետ համե-

մատույթամբ: Հողվածագրի կարծիքով՝ Մ ճյուղին պատկանող Հաղորութի, Մեղրու և Ում ճյուղին պատկանող Ղարաբաղի բարբառների ունեցած ընդհանուր հատկանիշների առատությունը կարող է վկայել, որ այդ բարբառները ի սկզբանե և շարունակաբար գործածվել են իրենց բնօրրանում, իսկ բնակչության տեղաշարժերը այնպիսի բնույթ չեն կրել, որ կարողանային էականորեն խախտել բարբառային իրողությունների աստիճանական անցումները: Այդ առումով շատ կարևոր է այն հանգամանքը, որ հատկապես այս բարբառներն ընդգրկող տարածքում է պահպանվել հինհայերենյան հատկանիշների մի փունջ. սա նշանակում է, որ դիտարկվող բարբառային միավորների արմատները ձգվում են դարերի խորքը՝ 5-րդ դար և դրանից առաջ ընկած ժամանակներ: Մյուս կողմից՝ բարբառային հիշյալ միավորները, ընդհանուրիայերենյան հատկանիշների հետ միասին, ունեն հինհայերենյան շրջանին վերաբերող հատկանիշների՝ բարբառային հայերենի մյուս դրսևորումներից տարբերակող փունջ, որը վկայում է այդ միավորների դարավոր հարևանության և զարգացման միասնական ընթացքի մասին: Ինչ վերաբերում է մասնավոր ընդհանրություններին ու տարբերություններին, ապա այդպիսիք բարբառային խոսքի շղթայի աստիճանական անցումների բնական արտահայտություններ են: Հաղորութի բարբառը, չնայած Մեղրու բարբառի հետ նույն ճյուղին պատկանելուն, ավելի շատ ընդհանրություններ ունի Ղարաբաղի բարբառի հետ: Սակայն Ղարաբաղի բարբառից տարբերությունը ներկայի կազմության առումով, ինչպես նաև էական մի շարք այլ տարբերություններ, հողվածագրի կարծիքով, թույլ չեն տալիս Հաղորութի բարբառը համարել Ղարաբաղի բարբառի տարբերակ:

Կատվայան Վ., Կարևո բարբառը 20-րդ դարի սկզբին գրառված հեքիաթներում (հողված)

Ըստ հողվածագրի՝ անցյալում գրանցված բարբառային նմուշների հետազոտությունը թույլ է տալիս վեր հանել լեզվի

գարգացման տարբեր շրջանների վերաբերող իրողություններ, համակարգային ու մասնակի բնույթի տեղաշարժեր: Հոդվածում Կարնո բարբառի դրսևորումները դիտարկվում են «Հայ ժողովրդական հեքիաթներ» գիտական հրատարակության 4-րդ հատորի ընձեռած նյութի շրջանակում: Հատորում ընդգրկված են հիմնականում 1911-1916 թթ. Երվանդ Լալայանի խմբարշավի հավաքած հեքիաթները, որոնք գրառվել են Շիրակի (Գյումրի, Ադինի, Արթիկի, Ախուրյանի շրջաններ), Բասենի, Ջավախքի (Էրզրում, Ախալքալաք, Ախալցխա) տարածաշրջանների խոսվածքներով: Կարնո բարբառի իրողությունները ներկայացվում են այդ երեք խումբ հեքիաթների լեզվական տվյալների համեմատական դիտարկմամբ՝ պայմանականորեն գործածելով *Շիրակի խոսվածք*, *Բասենի խոսվածք* և *Ջավախքի խոսվածք* եզրույթները: Ձեռք բերված փաստերը քննվում են Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով 20-րդ դարի վերջին քառորդի գրանցումների, ինչպես նաև Շիրակի մարզում հեղինակի՝ դաշտային աշխատանքների ընթացքում ձեռք բերված նյութերի համեմատությամբ: 20-րդ դարի սկզբներին գրառված հեքիաթներում հիմնականում հարազատորեն են արտացոլված Կարնո բարբառի՝ այդ ժամանակվա դրսևորումների յուրահատկությունները: Երեք տարածքների հեքիաթների լեզուն հավասարապես Կարնո բարբառն է՝ առանձին տարբերակային իրողություններով: Հնչյունական առումով առանձնանում է Ջավախքի խոսվածքը, քերականական իրողություններում նկատելի են Բասենի առանձնահատկությունները, չնայած քիչ չեն Ջավախքի յուրօրինակությունները ևս: Ըստ հեղինակի՝ Կարնո բարբառի գիտական ուսումնասիրությունները, հատկանիշների արձանագրումները և դաշտային աշխատանքների արդյունքները վկայում են, որ բարբառի՝ Շիրակի մարզում գործածվող տարբերակները էականորեն չեն տարբերվում հարյուր և ավելի տարիներ առաջ գրանցված լեզվավիճակից: Նկատելի են միայն որոշ տեղաշարժեր: Հոդվածագիրը կարծում է, որ ժամանակային տարբերությունների մի մասի

արձանագրումը կարող է պայմանավորված լինել սուբյեկտիվ գործոններով (հեքիաթների գրառման հանգամանքներ, ուսումնասիրողների ունեցած նյութի սակավություն և այլն), սակայն այլ դեպքերում տեղաշարժերը պայմանավորվում են կամ գրական լեզվի ու այլ բարբառների ազդեցությամբ, կամ բարբառային խոսքի զարգացման յուրահատկություններով:

Վատվայան Վ., Վարդենիսի տարածաշրջանի արդի լեզվական պատկերը (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ 2013-2015 թթ. Վարդենիսում և շրջակա գյուղերում կատարած հետազոտությունները ցույց են տվել, որ տարածաշրջանի մոտ մեկ տասնյակ բնակավայրերում գործածական է Մշո բարբառը՝ իր տարբեր դրսևորումներով: Վարդենիս քաղաքում հաղորդակցվում են Դիաղինի բարբառով, Ակունք գյուղում՝ Բայազետի և Դիաղինի բարբառների հատկանիշներ զուգորդող խառը տիպի խոսվածքով: Տարածաշրջանի բազմաթիվ բնակավայրերում հաղորդակցվում են Ղարաբաղի բարբառի խառը խոսվածքներով, ընդ որում՝ Ադրբեջանից տեղահանված հայերով բնակեցված այդ բնակավայրերը, որպես կանոն, առայժմ լեզվականորեն անհամասեռ, խառը պատկեր են ներկայացնում, և շատ հաճախ դժվար է խոսել տվյալ բնակավայրում Ղարաբաղի բարբառի այս կամ այն խոսվածքի ընդհանուր կիրառության մասին: Վարդենիսի տարածաշրջանի՝ Մշո բարբառը ներկայացնող խոսվածքները հիմնականում ունեն նաև հարևան Մարտունու տարածաշրջանի բոլոր խոսվածքների համար ընդհանուր բարբառային հատկանիշները: Խոսվածքները հանդես են բերում նաև ներքին զանազանություններ: Ըստ հոդվածագրի՝ Վարդենիսի տարածաշրջանը բարբառագիտական առումով հետաքրքրական է Դիաղինի բարբառի գործածությամբ: Ներկայացվում են այդ բարբառին վերաբերող դիտարկումներն ու տեսակետները: Հոդվածագիրը փաստում է, որ իր այժմյան բնօրրանում՝ Վարդենիս քաղաքում, Դիաղինի բարբառը ներկայանում է բավա-

կանին հստակորեն պահպանված բարբառային հատկանիշներով և դրանց յուրահատուկ փնջով:

Մեսրոպյան Հ., *Բարեգործություն* հասկացության անվանումները հայերենի տարածքային տարբերակներում (հոդված)

Հոդվածագրի վկայությամբ՝ Հայկազյան, նաև Ստ. Մալխասյանցի բառարաններում *բարեգործ* և *բարեգործություն* հասկացությունները բնորոշվում են *երախտագործ, մարդասեր* և *հասարակօգուտ գործ, մարդասիրական գործ* բառանուններով, իսկ «Հայոց լեզվի հոմանիշների բառարան»-ում թվարկվում են *բարերարություն, երախտագործություն, երախտավորություն, երախտարարություն, վարձք* հոմանիշները: Նշված հասկացությունների հիմքում ընկած է կամավոր տուրքի գաղափարը: Հայերենի տարածքային տարբերակներում բարեգործությանը վերաբերող բառապաշարը հոդվածում ներկայացվում է իմաստագործառական մի քանի խմբերով, ինչպես՝ *կրոնական հավատալիքով կամ նախապաշարումներով պայմանավորված բարեգործություն հատկանշող լեզվական միավորները* (հոդվածագրին առանձնացնում է հանուն եկեղեցու պայծառության կատարվող բարեգործությունը նշող բարբառաբանություններ) և *տուրք հատկանշող բառանունները* (նշվում են հայերենի բարբառներում *տուրք*-ը և *ծածուկ կատարվող բարեգործություն*-ը բնորոշող մի շարք հոմանիշներ): Առանձնացվում են նաև՝ *հանրության համար կատարվող բարեգործության տեսակների* և *պսակադրության հանդեսին կամ տոնական օրերին կատարվող բարեգործությունների անվանումները*:

Ուսումնասիրությամբ պարզվում է, որ բարեգործությանը վերաբերող բառապաշարի գերակշիռ մասը պայմանավորվում է քրիստոնեական դավանանքով և կրոնաեկեղեցական բնույթ ունի: Գրեթե բացակայում է հանուն պետական կառույցի, հայրենաշինության, արքունիքի, զիտության, ազնվականական և զինվորա-

կան դասերի համար կատարվող բարեգործությունը հատկանշող բառաշերտը:

**Մեսրոպեան Հ., Գարեգին Քեսաբցի կաթողիկոսի
քարոզխօսութեան լեզուական առանձնայատկութիւնները
(հոդված)**

Յօդուածագիրը նշում է, որ քարոզխօսութիւնը հովուական աստուածաբանութեան բաղկացուցիչ մասերից է, որի ընթացքում եկեղեցու հայրերը հանրութեանը հասու են դարձնում աստուածաշնչական դրոյթներին: Այդ հաղորդակցութիւնը բնորոշում է որպէս «գեղեցիկ, պատկերաւոր ու արտայայտիչ խօսելու արուեստ և գիտութիւն», որը «բարձր ծաղկման է հասել Հին Յունաստանում»:

Հայոց հայրապետների դասում ճարտասանական խօսքի հմտութիւններով առանձնանում է երանաշնորհ կաթողիկոս Գարեգին Առաջին Քեսաբցին, որի քարոզներն աչքի են ընկնում համոզումով, քրիստոնէական հաւատքի ջատագովմամբ, յստակ և անմիջական խօսոյթով: Յօդուածում ներկայացւում են Սբ. Գրիգոր Տաթևացու՝ քարոզի ժանրի սահմանած կառուցուածքը՝ *բնաբան, բնաբանի մեկնութիւն՝ համապատասխան մթնոլորտի ստեղծումով, բուն նիւթի ներկայացում և պարզաբանում, պատգամառնչում հաւատացեալների ներկայ կեանքին՝ դրանից բխեցնելով կոչը, հրաւերը, ներշնչումը, ներգոր ուժը*:

Յօդուածագիրը նշում է, որ Գարեգին Ա-ն հիմնականում առաջնորդում է քարոզխօսութեան նշուած հանգրուաններով: Բարեյիշատակ հայրապետի քարոզների բնաբանները հիմնականում աստուածաշնչեան են, որոնցից արտածւում է քրիստոնէական հաւատքի վրայ հիմնուած խօսք: Բուն քարոզի մասում՝ բովանդակային պլանում, շեշտը դրւում է քրիստոնէութեան զօրութեան, հայրենասիրութեան և մարդկային արժանապատուութեան վրայ: Բոլոր քարոզների մղիչ ուժը լուսատեսութիւնն է՝ արդիականացուող աւարտով: Քարոզների վերջաբանին առանձնայատուկ

են յորդորակն ու հայրական օրհնութիւնը, պահպանիչ աղօթքն ու մաղթանքները: Վեհափառի քարոզխօսութեան բառապաշարը յօդուածագիրը դասակարգում է ըստ մի քանի հիմնական խմբերի՝ *գրաբարբանութիւններ, հնաբանութիւններ, բանաստեղծական կամ հազուադէպ գործածութիւն ունեցող բառեր, տերմիններ և ոչ գրական բառեր, փոխառութիւններ, հեղինակային նորաբանութիւններ:*

Յօդուածագիրը համոզում է հայտնում, որ Գարեգին Առաջին Քեսաբցի կաթողիկոսը քարոզչի դասական օրինակ է: Նրա հարուստ և պատկերաւոր բառապաշարը կամրջում է արդի արեւելահայերէնն ու արեւմտահայերէնը՝ նպաստելով գրական հայերէնի երկու ճիւղերի փոխհարստացմանը:

Մեսրոպյան Հ., Շիրակի ժողովրդական երգերում գործածված բուսանունների իմաստային գործառական առանձնահատկությունները (հոդված)

Շիրակի ժողովրդական երգերում և պարերգերում՝ յայլիներում, գործածված բուսանունները, ըստ հոդվածագրի, տարբերակելի են երեք իմաստային խմբերով՝ *որոշակի բույս, ծառատեսակ կամ ծաղկատեսակ նշող անուններ, բույսից ածանցյալ, բույսի արդյունք նշող բառանվանումներ, բույս հասկացությանն առնչվող, բույսով պայմանավորվող իրողություն նշող բառեր:* Արձանագրվում են ընտանի կամ մշակելի և վայրի տարբեր բույսեր նշող խոտազգիների անուններ, ոչ կոնկրետ, կոնկրետ պըտղանուններ և պտղանուն բուսանուններ:

Ուսումնասիրությամբ պարզվում է, որ հայերէնի բարբառային բառազանձի բազմաթիվ բուսանուններից Շիրակի ազգագրական երգերում ընդգրկված են հիմնականում ընդհանուր բուսատեսակ նշող *ծաղիկ, ծառ* բառերը, *վարդ* ծաղկանունը, *շամալ, նուռ* պտղանունները, *գյուլ*, ինչպէս նաև հարակից բառապաշարի մաս կազմող *բաղ* փոխառությունները: Չնայած Հայկական լեռ-

նաշխարհը շատ հարուստ է բազմազան բույսերով, իսկ բարբառները՝ բնիկ հայերեն և փոխառյալ բուսասուններով, սակայն դրանց ոչ մեծ մասն է արտացոլվում Շիրակի ժողովրդական խաղիկներում:

Մեսրոպյան Հ., *Մահ* հասկացությանը վերաբերող բարբառային բառաշերտի ընդհանուր բնութագիրը (հոդված)

Կյանքի և մահվան հակադրությունն ազդել է մարդու մտածելակերպի վրա՝ պատճառ դառնալով համապատասխան բառաշերտի ստեղծման, բառերի տերմինացման, իմաստափոխության և ոճավորման: Հոդվածագրի վկայությամբ՝ հայերենի բարբառային բառապաշարը հարուստ է մարդու վախճանը հատկանշող *մահ* և հարակից հասկացություններ բնորոշող բառաշերտով, դարձվածքներով, նկարագրական արտահայտություններով, առած-ասացվածքներով և լեզվական այլ միավորներով: Հոդվածագիրն առանձնացնում և ներկայացնում է *մահ* հասկացությանը վերաբերող բառերի բարբառային հնչատարբերակները: Ըստ նրա՝ բավականին ընդարձակ է հանգուցյալի երկրային ներկայությանը հաջորդող իրողությանն առնչվող բառաշերտը: Մեծաթիվ են նաև այս թեմայով կերտված առած-ասացվածքները, երդման, օրհնության, բարեմաղթանքի բանաձևերը, նաև անեծքները:

Ուսումնասիրությամբ պարզվում է, որ մարդկային կյանքի անխուսափելի ավարտը նշող *մահ* և վերջինիս առնչակից հասկացությունները նշող բառերն ու արտահայտությունները բավականին մեծաթիվ են և գործուն բառապաշարի մաս են կազմում: Հայերենի տարածքային տարբերակներում կան *մահ*-ը հատկանշող բազմաթիվ բառեր, հնչյունական և բառային զուգաբանություններ, հոմանիշներ, դարձվածքներ, նկարագրական կառույցներ, որոնք արտահայտվում են հայերենի բառակազմական հայտնի միջոցներով:

Վարդանյան Ա., Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները (մենագրություն)

Ճահուկ-Վայքի միջբարբառը, ըստ հոդվածագրի, կիրառվում է Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի, Աղավնաձոր, Արփի, Գնդեվազ, Գնիշիկ, Խաչիկ, Կեչուտ, Հորս, Չիվա, Ռինդ, Վերին Ազնաբերդ գյուղերում, մինչև 1988 թ.՝ նաև Նախիջևանի Ազնաբերդ (պատմական Նախճավան գավառ) և Օծուփ (պատմական Ճահուկ գավառ) գյուղերում, անցյալում ընդգրկել է պատմական Վայոց ձոր, Ճահուկ գավառները և Նախճավան գավառի հյուսիսային հատվածը:

Հոդվածագիրը նշում է, որ հայերիս կենցաղում և արժեհամակարգում հնագույն ժամանակներից լայնորեն կիրառված, նաև պաշտամունքի առարկա դարձած բույսերի անունները հայերենի բարբառների բառապաշարի ամենակիրառական շերտերից են, որոնք բացահայտում են ոչ միայն կրողների ավանդույթներն ու ազգագրական առանձնահատկությունները, այլև տարբեր ժամանակաշրջաններում այլ ժողովուրդների հետ շրփումները: Կարևորելով ամեն մի բարբառային միավորի բուսանունների առանձին ամբողջական ուսումնասիրությունը՝ հոդվածում բազմակողմանիորեն քննվում է միջբարբառի բառապաշարի այս շերտը:

Հոդվածում Ճահուկ-Վայքի միջբարբառի բուսանունները բաժանվում են հետևյալ հիմնական իմաստային խմբերի՝ *վայրի խոտաբույսեր, վայրի ուտելի և օգտակար խոտաբույսեր, մշակովի և բանջարանոցային բույսեր, ծաղկանուններ, հատապղտ-դանուններ, պտղատու ծառեր և թփեր, ոչ պտղատու ծառեր և թփեր*: Ըստ ծագման՝ դասակարգվում *հին հայերենից ավանդված բառեր, հին հայերենից չավանդված բառեր, հայերենի բառաստեղծման կանոններով կազմած բարբառային բառեր, ուշ շրջանի փոխառություններ* խմբերում:

Վարդանյան Ա, Հինհայերենյան իրողություններ Նախիջևանի տարածքի բարբառներում (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ մինչև անցյալ դարի 80-ական թվականները Նախիջևանի տարածքում գործածված 8 բարբառները, որոնցից 6-ը՝ տեղաբնիկ (Ագուլիսի, Ջուղայի, Արարատյան, Արցախ-Սյունիքի բարբառներ, Ճահուկ-Վայքի և Հյուսիսային Գողթնի միջբարբառներ), 2-ը՝ ներգաղթյալ (Խոյի և Մարաղայի բարբառներ), պահպանել էին հինհայերենյան յուրօրինակ իրողություններ: Հոդվածում ուսումնասիրվում են Նախիջևանի տարածքի տեղաբնիկ բարբառներում պահպանված հին հայերենին բնորոշ *հնչյունաբանական, ձևաբանական և բառապաշարային* հետաքրքիր իրողություններ:

Ըստ հոդվածագրի՝ հատկանշական է, որ Նախիջևանի բարբառներում պահպանվել են հին հայերենի բառապաշարի բառերի հետաքրքիր անխաթար ձևով ամփոփված ձևեր, որոնք առավելապես նկատվում են կրոնակեղեցական բառապաշարում. եկեղեցու, սրբավայրերին առնչվող ամփոփված ձևեր հաճախ են հանդիպում տարածքի բարբառներում:

Վարդանյան Ա., Արցախի բարբառի խոսվածքներ Նախիջևանի տարածքում (հոդված)

Նախիջևանի տարածքը, ընդգրկելով պատմական Հայաստանի Վասպուրական, Այրարատ և Սյունիք աշխարհների խաչմերուկը, բազմիցս ենթարկվելով բնակչության զանգվածային տեղաշարժերի, ունեցել է բարբառային բազմազանություն: 1918-1920թ. իրադարձությունների նախօրյակին, երբ բնակչության բացարձակ մեծամասնությունը հայեր էին, Նախիջևանի տարածքն ընդգրկում էր շուրջ յոթ տասնյակ հայաբնակ բնակավայրեր, որոնց ճնշող մեծամասնությունը խոսում էր Խոյի, ինչպես նաև Մարաղայի բարբառներով: Պահպանվել էին նաև տեղաբնիկ բարբառներ՝ Ագուլիսի բարբառը, Ջուղայի բարբառը, Ճա-

հուկ-Վայքի միջբարբառը, Հյուսիսային Գողթնի միջբարբառը, Արարատյան բարբառի, ինչպես նաև Արցախի բարբառի խոսվածքներ: Արցախի բարբառով էր խոսում 6 բնակավայր՝ պատմական Երնջակ գավառի *Աբրակունիս*, *Գյաղ*, *Նորաշեն*, *Շահկերտ* (*Ղազանչի*), *Շոռոթ* և *Փորադաշտ* (*Փարադաշտ*) գյուղերը:

Խորհրդային Ադրբեջանի կողմից անցյալ դարում իրականացված հայատյաց քաղաքականության հետևանքով ոչ միայն իսպառ հայաթափվեց ողջ երկրամասը, ոչ միայն ամբողջովին ոչնչացվեցին տարածքի հայ մշակույթի բազմահազար հուշարձանները, այլև բնօրրանից արմատախիլ լինելով՝ ոչնչացան հայերենի ամբողջ խումբ բարբառներ: Արցախի բարբառը կրող 6 բնակավայրերից համեմատաբար ավելի ուշ՝ անցյալ դարի 70-ական թվականներին են հայաթափվել Փարադաշտը, Գյաղը և Շահկերտը, իսկ Աբրակունիսը, Շոռոթը և Նորաշենը՝ ավելի վաղ:

Հողվածում նախ ստուգաբանվում են Արցախի բարբառը կրող 6 գյուղերի անունները, ապա հողվածագիրն անդրադառնում է այդ բնակավայրերի խոսվածքներում առկա բարբառային հատկանիշներին: Նշվում է, որ խոսվածքներում ընդհանուր առմամբ պահպանվել են Արցախի բարբառին խիստ բնորոշ հնչյունափոխական օրենքները: Այնուամենայնիվ, կան հնչյունական հատկանիշների որոշակի առանձնահատկություններ: Հնչյունական, ձևաբանական և բառապաշարային որոշ տարբերություններով հանդերձ՝ Նախիջևանի տարածքում հիմնականում պահպանվել էին Արցախի բարբառի խոսվածքները:

**Վարդանյան Ա., Խառատյան Մ., Սահակյան Ն., Դիտարկումներ
Ճահուկ-Վայքի միջբարբառի որոշ բուսանունների վերաբերյալ
(հողված)**

Հողվածագիրները դիտարկում են Ճահուկ-Վայքի միջբարբառի՝ լեզվաբանության տեսանկյունից հետաքրքիր մի շարք բուսանուններ՝ կարևորելով, որ բուսանունները բարբառների

բառապաշարի ամենակիրառական շերտերից են, որոնք բացահայտում են ոչ միայն կրողների ավանդույթներն ու ազգագրական առանձնահատկությունները, այլև տարբեր ժամանակաշրջաններում այլ ժողովուրդների հետ ունեցած շփումները:

Միջբարբառում առկա բուսանունները ներկայացվում են հետևյալ հիմնական իմաստային խմբերով՝ *վայրի խոտաբույսեր, վայրի ուտելի և օգտակար խոտաբույսեր, մշակովի և քանջարանոցային բույսեր, ծաղկանուններ, հատապտղանուններ, պտղատու ծառեր և թփեր, ոչ պտղատու ծառեր և թփեր*: Իսկ ըստ ծագման՝ դասակարգվում *հին հայերենում ավանդված բառեր, հին հայերենում չավանդված բառեր, հայերենի բառաստեղծման կանոններով կազմած բարբառային բառեր, ուշ շրջանի փոխառություններ* խմբերում:

Հոդվածագիրը ստուգաբանում է առավել հետաքրքրական բուսանուններից մի քանիսը:

Վարդանյան Ա., *Արտակ* անձնանվան ստուգաբանությունը (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ ուսումնասիրողներն *Արտակ* անձնանվանը պահլավական ծագում են վերագրել և ստուգաբանել «սրընթաց» նշանակությամբ կամ մեկնել որպես «փաղաքշական ձև Արտաւագր, Արտաւան անուններու»: Հոդվածագրի հավաստմամբ՝ իրանական *Արթա* 𐎠𐎼𐎷 արական-իգական անձնանունը գրադաշտական կրոնի ամենահզոր ոգիներից մեկի՝ գրադաշտականության գլխավոր աստված Ահուրամազդայի (հայկական գուգահեռը՝ Արամազդ) վեց անմահ սրբություն-ոգիներից երկրորդի՝ կրակը խորհրդանշող Արտա-ճշմարտության անունից է ծագում:

Հայկական լեռնաշխարհը և հին Հայաստանը նույնպես բնապաշտական հավատալիքների, մասնավորապես՝ գրադաշտականության տարածման սահմաններում են գտնվել և ընդհանուր-արիական աշխարհայացքի ու արժեհամակարգի կրողնե-

րից եղել, ուստի, հեղինակը հնարավոր է համարում *Արտակ* անձնանվան առնչությունը ոչ միայն իրանական արական-իգական *Արտա* անվանը, այլև հնդեվրոպական նախալեզվի միևնույն *art* («ձև, կարգ, կարգավորություն») արմատից բխող հնդարիական իգական *Ռիտա* անվանը:

Քումունց Մ., Կրոնին և նախապաշարմունքին վերաբերող մի քանի բառերի քննություն (ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի տվյալների) (հոդված)

Հոդվածում ներկայացվում են Սյունիք-Արցախ բարբառային տարածքում հնդեվրոպական աղերս ունեցող «կրոն և նախապաշարմունք» բառիմաստային խմբի մի շարք բառեր: Ըստ հոդվածագրի՝ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում կրոնական բնույթի բառերը հայերենի համեմատությամբ կազմում են 58%-ը, իսկ Կ. Բաքի կազմած ցուցակի համեմատությամբ՝ 66%-ը: Նախորդների կազմած թեմատիկ խմբում, ըստ Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարի տվյալների, ավելացվել է երեք բառ, որոնք ունեն հնդեվրոպական ծագում: Մասնավոր քննության է ենթարկվում *քաշ-կ// քաշ-ք // քաշ-ք* բառը, որ արտաքին հնչյունական կազմով, մասամբ նաև իմաստային նրբերանգներով («ինչ-որ անսովոր բան»), նմանվում է հայերենի անհայտ ծագման *քաջ*-ին:

Քումունց Մ., Ոսկրի խորհրդապաշտությունը Ա. Բակունցի «Կարմրաքար» վեպում (հոդված)

Ա. Բակունցի «Կարմրաքար» վեպում խորհրդապաշտական բնույթ ունեն ոչ միայն գյուղը՝ Կարմաքարը, ու նրա բնակիչները, այլև ոսկորը, որի խորհրդի և «գործության» մասին բազմիցս խոսվում է վեպի տարբեր մասերում: Ըստ հոդվածագրի՝ հոդվածի գիտական նորույթն այն է, որ Սյունիք-Արցախ բարբառախմբի բառապաշարում առկա *ոսկոր* բառի իմաստների ու կազմություն-

ների ամբողջական քննությամբ հնարավոր է լինում բացահայտել Ա. Բակունցի ստեղծագործական նպատակադրումները: Դրանցից կարևոր է անցյալի արժեքների կորստի գաղափարի արտահայտությունը, որը հեղինակը ամբողջացրել է ոսկորի և նրա ունեցած հոգևոր և ֆիզիկական նշանակության մեջ: Լեզվական և ազգագրական նյութի, գրական գուգահեռների միջոցով բացահայտվում է ոսկրի խորհրդապաշտությունը, որը նույնպես համալրում է «Կարմրաքար» վեպի արժեքների շարքը:

Հոդվածագիրը նշում է, որ հնդեվրոպական լեզվաընտանիքի ժառանգորդ լեզուներում ձևիմաստային ընդհանրություններ կան ոչ միայն *ոսկր*, այլև նրա նշանակության հետ կապված հավատալիքների շուրջ: Նման երևույթները խորթ չեն նաև այլ ժողովուրդների կենցաղին, ինչպես ոսկորներից հուռույթ-հմայիլներ պատրաստելը և գործածելը, նրանց «կախարդական» հնարավորությունների միջոցով բնության ուժերը վերահսկելու սովորույթները: Ոսկրին տրվող մոգական ուժը, նրան առնչվող հավատալիքները հանդիպում են նաև ժողովրդական բանահյուսության տարբեր ժանրերում: Սյունիք-Արցախում կան անեծքներ, առած-ասացվածքներ, որոնք, ենթադրվում է, հին սովորույթների արտահայտության մնացուկ են:

Քումունց Մ., Բարբառագիտական մի քանի եզրույթների և ըմբռնումների շուրջ (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժինը նախաձեռնել է «Հայերենի բարբառագիտական բառարան»-ի կազմումը: Այդ առիթով քննվում են բարբառագիտական մի քանի եզրույթներ և հասկացություններ, որոնք տարբեր աշխատանքներում տարընթերցման տեղիք են տալիս կամ ունեն արդիականացման պահանջ: Հոդվածագիրն անդրադառնում է *Բարբառախումբ // բարբառային խումբ, Սյունիք-Արցախի բարբառներ (Սյունիքի և Արցախի բարբառների խումբ), Գորիսի բարբառ* եզրույթներին ու հասկացություններին:

**Քումունց Մ., Հումանշության բառիմաստաբանական
գործառույթները Սյունիք-Արցախի բարբառային տարածքում
(հոդված)**

Հոդվածագրի վկայությամբ՝ Սյունիք-Արցախի բարբառային տարածքում կան բազմաթիվ բառեր և բառախմբեր, որոնք միննույն նշանակությունն ունեն, բայց ըստ էության տարբեր իրադրություններում են գործածվում՝ դրսևորելով ոճական զանազան առանձնահատկություններ: Նշված իրողությունները հոդվածում քննվում են ոճաբանական դիտանկյունով՝ նպատակ ունենալով պարզելու՝

1. Սյունիք-Արցախի բարբառային տարածքի բառապաշարում ձևավորվող հումանիշ խմբերը պատմական զարգացման ինչ ընթացքում են ձևավորվել՝ գործածական բառեր, անգործածական կամ սակավ գործածություն ունեցող միավորներ:

2. Ներկա վիճակում՝ ըստ իմաստային առնչությունների՝ նույնանշության և համանշության ձևավորման սկզբունքները՝ ոճական տարբեր ընդհանրացումներով:

Հումանշային շարքի ուսումնասիրությունը տարածամանակյա կտրվածքով ենթադրում է բառային և կապակցային միավորների իմաստային կողմի ընդհանրական դիտարկում բարբառային պլանում՝ ելակետ ընդունելով բառիմաստը:

**Քումունց Մ., Հին հայերենից Սյունիք-Արցախի բարբառախմբին
անցած իրանական փոխառությունների ձևիմաստային նկարագիրը
(հոդված)**

Ըստ հոդվածագրի՝ բարբառագիտական աշխատանքներում նվազ ուշադրության են արժանացել հին շրջանի իրանական փոխառությունները: Հոդվածագրի քննության առարկան հենց նման բառերն են: Ընդհանուր հայերենյան շերտի իրանական ծագման բառերի բառակազմական, ձևաիմաստային հատկանիշների և

բարբառային բառապաշարի զարգացման ընթացքում դրանց դերը բացահայտելը կարող է օգտակար լինել հայոց լեզվի պատմության, բարբառագիտության և համեմատական բառագիտության համար:

Իրանական ծագման որոշ բառեր բարբառներին անցել են ոչ թե գրաբարի միջնորդությամբ, այլ տարածաշրջանի լեզուների հետ ուշ շրջանում ունեցած փոխշփումների, միջին հայերենի կամ աշխարհաբարի միջոցով: Մի քանիսն էլ հին են ու նշված ձևախմաստով հանդիպում են միայն Սյունիք-Արցախում: Հոդվածում քննվում են *խաշփուշ* (Գորիսում՝ *խաշփուշ* || *խասփուշ* «թեթևաբարո, վատ բանի ընդունակ, անզգամ»), *թայթ* («բնավորություն, բռնկուն բնավորություն»), *խըրեզ* («քիչ, սակավ») *գայրդան* («վիզ»), *գուձաձկ* («սոխի կամ սխտորի ցողուն») բառերը:

Քումունց Մ., Ղուկաս Մեբաստացու «Դավիթ Բեկ կամ պատմություն դավանցոց»-ի տեղանվանական համակարգը (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ պատմալեզվաբանական առումով ուշագրավ տեղեկություններ է պարունակում Ղուկաս Մեբաստացու «Դավիթ Բեկ կամ պատմություն դավանցոց» աշխատությունը: Այս հիմունքով ծագում է պատմական շրջանի բնակավայրերի տեղադրական և տեղանվանական քննության խնդիր: Հոդվածում առանձնացվում են «Դավիթ Բեկ կամ պատմություն դավանցոց» աշխատության մեջ վկայվող բոլոր տեղանունները, կատարվում են որոշ բնակավայրերի տեղադրություն և ճշգրտում, ստուգաբանական և բառաքննական փորձեր, բերվում մի քանի կարևոր դիտարկումներ:

Ըստ հոդվածագրի՝ 18-րդ դարում հիշատակված տեղանունների հիմնական մասը, որ վկայվում է հայերենի հին շրջանի արձանագրություններում, գրեթե նույնությամբ հասել է մեր օրեր: Կան տեղանուններ, որոնք ձևափոխվել են բարբառային ազդեցությունների և մասնավորապես տարածաշրջանում իսլամադավան

ցեղերի ներթափանցման հետևանքով: Դրանք հողվածում ներկայացվում են *պատճենամբ առաջացած* և *աղավաղամբ ձևավորված* դասակարգումներով:

Քումունց Մ., Մովսես Խորենացին Ստեփանոս Օրբելյանի պատմության, Ղազար Փարպեցու «Թղթի» մեջ և ավանդագրույցներում (հողված)

Հողվածագիրը նախ անդրադառնում է Մ. Օրբելյանի պատմագիտական գործունեությանը, ապա նշում, որ ինչպես Խորենացին, այնպես էլ Մ. Օրբելյանը հետևողական են եղել պատմության աղբյուրների ընտրության ու դրանց հավաստիության ճշգրտման առումով, ուստի չեն բավարարվել հայ հեղինակների վկայություններով, տեղեկություններով ու մեկնաբանություններով: Հողվածում քննվում են Մ. Խորենացու՝ Սյունիքում ծնված կամ ապրած լինելու, մինչ օրս խնդրահարույց՝ Մ. Խորենացու՝ 6-րդ դարի Սյունյաց եպիսկոպոս Մովսեսին ուսուցչություն անելու, Սյունյաց քերթողական դպրոց ստեղծելու, Մ. Խորենացու կյանքին և գործին վերաբերող մի շարք հարցեր:

Քումունց Մ., -ՏԻ|| -ՂԻ ածանցով բարբառային մի քանի բառերի քննություն (հողված)

Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարը բավականին հարուստ է և հիմնականում արտացոլում է ընդհանուր հայերենի բառային կազմը: Ըստ հողվածագրի, սակայն, կան բառեր, որոնք ծագմամբ հին են և հանդիպում են այս տարածքի բարբառներում, խոսվածքներում: Քննվում են *բուլղի, շըլղի, դըլղի* բառերը, որոնցում, ենթադրվում է, *-ղի*-ն ածանց է: Հողվածագրի կարծիքով՝ *-ղի* ածանցը առաջ է եկել բարբառախմբում տարածում գտած *-օտի||-ուտ+ի* ածանցից՝ *-օտի||-ուտի> -տի || -ղի*՝ «մի

բան կրելու, մի բանով օժտված լինելու» իմաստներով, որ պահպանվել է բարբառային հնաբանություններում:

Քումունց Մ., Արևելյան լեզուներից անցած փոխառությունների որակական և քանակական հատկանիշները (ըստ Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի) (հոդված)

Հայերենի փոխառություններին վերաբերող ուսումնասիրությունների հիմնական մասը, ինչպես նշում է հոդվածագիրը, վերաբերում է գրական տարբերակներում տեղ գտած բառերին: Քիչ են ուսումնասիրված բարբառների փոխառությունները: Բարբառագիտական աշխատանքներում փոխառյալ բառերի տվյալները հիմնականում ամփոփվում են բառացանկերով: Իսկ բարբառային բառապաշարի քննությունը ենթադրում է նաև անդրադարձ օտար բառերին կամ փոխառություններին: Որքան տարատեսակ են գրական և բարբառային փոխառությունները, նույնքան էլ տարբեր են նրանց քննության եղանակներն ու արդյունքները: Բարբառային փոխառությունները, ըստ հոդվածագրի, կարելի է քննել մի քանի տեսանկյունից՝ ըստ թեմատիկ խմբերի, ըստ ծագման, խոսքիմասային պատկանելության և այլն: Նպատակահարմար է համարվում Սյունիք-Արցախի բարբառային բառապաշարի փոխառյալ կազմը քննել ըստ որակական և քանակական հատկանիշների: Այն կարևոր տեղեկություններ կարող է հաղորդել ոչ միայն բարբառակիր հանրության տարաբնույթ շփումների, այլև փոխառյալ բառերի իմաստային, բառակազմական, քերականական յուրացման եղանակների վերաբերյալ:

Սյունիք-Արցախ բարբառային բառապաշարում առկա արևելյան լեզուներից՝ հիմնականում արաբական, պարսկական և թյուրքական փոխառությունները ներկայացվում և քննվում են ըստ ծագման, փոխառության ճանապարհի և ըստ խոսքիմասային պատկանելության:

**Քումունց Մ., Գորիսի բարբառը հայերենի բարբառների
բազմահատկանիշ դասակարգման համատեքստում (հոդված)**

Հայ բարբառագիտության մեջ Գորիսի բարբառային միավորը ընդունվում է որպես խոսվածք՝ ըստ Գ. Ջահուկյանի կազմած հայ բարբառների բազմահատկանիշ դասակարգման: Հոդվածագիրը քննում է Գորիսի բարբառը համաժամանակյա և տարածամանակյա լեզվավիճակներով, համեմատում բազմահատկանիշ դասակարգմամբ տրվող հնչյունական և քերականական զուգաբանությունները: Ըստ դիտարկումների՝ տարբերություն է առաջանում Գորիսի բարբառային միավորին վերագրվող գնահատականում (տարածամանակյա լեզվավիճակով): Գորիսի բարբառի տարբերակիչ հատկանիշների թիվը, ըստ մակարդակային ցուցչի, գերազանցում է 20-ը (38 ընդհանուր հատկանիշ, 62 տարբեր՝ ըստ Գ. Ջահուկյանի դասակարգման մեջ ընդգրկված 100 հատկանիշների): Բարբառախմբերի, բարբառների, խոսվածքների ընտրությունը, ըստ բարբառային հատկանիշների, կատարվում է առանց բարբառների բառային հիմնական տարբերությունների, այսինքն՝ համեմատվում են արդեն որոշված, կարգավիճակ ստացած միավորների բառային հիմնական տարբերությունները: Եզրակացությունն այն է, որ Գորիսի խոսակցական տարբերակը բարբառ է Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի կազմում:

Քումունց Մ., Մեհտիշենի բարբառը (հոդված)

Հոդվածագիրը նշում է, որ Մեհտիշենի կենդանի բարբառը մինչ օրս հանգամանորեն ուսումնասիրված չէ: Տրվում են մատենագրական տեղեկություններ, ներկայացվում են բարբառի հնչյունական համակարգի, բառապաշարի և քերականության առանձնահատկությունները: Հոդվածն ամփոփվում է եզրակացությամբ, ըստ որի՝ համաժամանակյա լեզվավիճակով Մեհտիշենը շարունակում է ներկայանալ որպես բարբառային յուրահատկություններ-

րով միավոր Արցախի բարբառների և գրական հայերենի ազդեցությունների ներքո:

**Քումունց Մ., Կրկնավոր բարդությունների կազմման եղանակները
Սյունիք-Արցախի բարբառային տարածքում (հոդված)**

Հոդվածագիրը նշում է, որ Սյունիք-Արցախ բարբառային տարածքի բառապաշարի հարստացման միջոցներից առաջնայինը բառակազմական եղանակն է: Բարբառային տարածքում աչքի են ընկնում կրկնավոր հարադրությունները, որոնք հիմնականում լինում են հնչյունափոխ և անհնչյունափոխ: Անհնչյունափոխ բաղադրիչների կապակցությամբ կրկնավոր հարադրությունները քանակապես շատ են հնչյունափոխներից (հնչյունափոխ՝ 44%, անհնչյունափոխ՝ 52%, այլ միջոցներով կազմություններ՝ 4%): Արձանագրվում է, որ կրկնավոր բարդության ձևավորման համար կարևոր նշանակություն ունի իմաստային հատկանիշը: Կրկնավորներ բարդությունների մոտ $\frac{1}{4}$ -ի իմաստը ուղղակիորեն չի բխում կրկնվող բաղադրիչի իմաստից: Նոր իմաստներով է ձևավորվում *հա* «անընդհատ» մակբայով և տարբեր արմատներով կրկնավորների երկու տեսակ:

**Քումունց Մ., Հին Գորիսը, տեղադրութան կեղծ թեզը և նորայայտ
արձանագրութիւնները (հոդված)**

Հոդվածում ներկայացվում են *Հին Գորիսի* (բարբառային՝ *Կյօրէս*) կամ ինչպես տեղացիներն են ներկայումս անվանում *Գորիս գյուղի* պատմաաշխարհագրական նկարագիրը և Գորիս տեղանվան ստուգաբանությունը: Հոդվածագրի վկայությամբ քանի որ ավելի վաղ մեկ այլ աշխատանքում անդրադարձել է խնդրին, հոդվածում կատարում է որոշ լրացումներ՝ պնդելով Գորիս տեղանվան ծագման իր տեսակետը, մասնավորեցնելով և ենթադրությունից կայուն համուզմունքի բերելով առանցքային

թեզեր, որոնք կարևոր են պատմական նշանակությամբ բնակավայրի ստուգաբանության համար:

Ներկայացվում են նաև ներկայիս Գորիս գյուղի վիմագիր այն արձանագրությունները, որոնք մինչև այժմ ուշադրության չեն արժանացել:

Քումունց Ս., Բուրդուր (հոդված)

Հոդվածում նախ տրվում է Բուրդուրի պատմաաշխարհագրական նկարագրությունը, ապա ներկայացվում են բարբառի հնչյունական, քերականական առանձնահատկությունները: Հոդվածագիրը, փորձելով պարզել, թե Ղարաբաղ-Շամախիի միջբարբառախմբի ո՛ր բարբառին կամ խոսվածքին է ավելի մոտ Բուրդուրի բարբառը, և պատմաաշխարհագրական ո՛ր տարածքից ու ի՛նչ հանգամանքների բերումով են գաղթել բուրդուրցիները, դիմում է վիճակագրական բարբառագիտությանը՝ օգտվելով հայերենի բարբառների բազմահատկանիշ դասակարգան մեթոդից: Նա համեմատում է Բուրդուրի բարբառը և Գորիսի, Հաղրութի, Շամախիի, Մարաղայի, Բոլնիս-Խաչենի, Կապանի խոսվածքները՝ ըստ քանակական և որակական կշռի՝ որոշելու, թե որին է մոտ կամ որից է հեռու: Արձանագրվում է, որ Բուրդուրից ամենաշատ տարբերություններն ունի Շամախին՝ 31,5 հատկանիշով: Այսկերպ պարզ է դառնում բարբառներում առկա հնչյունական և ձևաբանական տարբերությունների քանակը: Ընդհանուր համեմատությունը հոդվածագրին նաև ենթադրել է տալիս Բուրդուր գաղթած հայրենակիցների պատմական տարածքը՝ նկատի առնելով ընդհանրությունների սահմանը՝ ավելի քան 70 (Կապան՝ 79,5, Գորիս՝ 76, Հաղրութ՝ 74):

Դ. ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԵՐ

2022 թվականին հրատարակվել են հետևյալ աշխատանքները:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննիսյան Ն.Գ., Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 264 էջ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր, Պրակ Ա, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, 118 էջ:

ՀՈԴՎԱԾՆԵՐ

1. Գրիգորյան Ս.Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի իրավական հասկացությունների իմաստային քննություն, Ե., «Զահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 102-107:
2. Grigoryan S.M., Semantic Examination of Legal Concepts Grigor Tatevatsi's "Book of Questions", Kutaisi, "Language and Culture", № 28, 2022, p. 97-99.
3. Գրիգորյան Ս.Ս., Իրավական հասկացությունների կիրառությունները հայերենի մի շարք բարբառներում, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրիյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 46-58:
4. Թադևոսյան Հ.Մ., Նորակազմ բժշկական բառեր 13-րդ դարի բժշկարաններում («Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց», «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»), Խ. Աբով-

- յանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Պրակ Գ, Ե., Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիա, Copy Print LLC հրատ., 2022, էջ 49-56:
5. Թադևոսյան Հ.Ս., Նոր բառիմաստներ 13-րդ դարի բժշկարաններում («Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց», «Բժըշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»), Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 17-27:
 6. Թորոսյան Հ.Վ., Կենդանանուններով կազմված դարձվածային միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները արդի հայերենում և պարսկերենում, Գյումրի, «Գիտական աշխատություններ», № 1(25), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, էջ 122-132:
 7. Torosyan R.V., On the Ethnonym Gēl in Classical Persian Literature, Pažūhešhā-ye zabānī-adabī-ye Qafqāz va Kāspiyan, Markaz-e dāyeratolmaāref-e bozorg-e eslāmi, IRI, Tehran, s. 25-29.
 8. Խաչատրյան Վ.Ս., Ղազար Փարպեցու երկերի ձեռագրերի լեզվական տարբերությունների շուրջ, Ե., «Լրաբեր» գիտական հոդվածների ժողովածու, մաս II, «Ճարտարագետ» հրատ., 2022, էջ 685-694:
 9. Խաչատրյան Վ.Ս., Մ. Սարգսյան, Լեզվաբանության տեսության հարցեր, «Տիր» հրատ., Ե., 2021, 166 էջ, (Գրախոսություն), Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 1(26), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 97-101:
 10. Հովհաննիսյան Լ.Շ., Թվականների հնաբանությունները Ղարաբաղի (Արցախի) բարբառում, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 67-73:
 11. Հովհաննիսյան Լ.Շ., *Արցախ* տեղանվան շուրջ, «Ղարաբաղ-Շամախիի կամ ծայրհյուսիսարևելյան միջբարբառախումբ. արդի վիճակ, միտումներ և մարտահրավերներ» միջազգային գի-

- տաժողովի նյութերի ժողովածու, Ե., ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 122-124:
12. Հովհաննիսյան Ն.Գ., Մեր լեզուն, մեր խոսքը և տրամաբանությունը, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 118 -129:
 13. Mkhitaryan G.M., Bible Translation as a Factor in the Preservation and Development of the Armenian Language, Ե., «Ջահուկյանական ընթերցումներ», № 1-2 (17-18), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 157-165:
 14. Մխիթարյան Գ.Մ., Միջնադարյան կատակերգության անվանումների լեզվական քննություն, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Պրակ Գ, Ե., Լեզվաբանական հետազոտությունների գիտական լաբորատորիա, Copy Print LLC հրատ., 2022, էջ 141-149:
 15. Սիրունյան Տ.Ղ., Ձեռագիր քերականության մի «լուծմունքի» ուսումնասիրություն (ԺԵ դար), Ե., «Լեզու և լեզվաբանություն», № 2 (27), ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2022, էջ 38-48:

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՍՓՈՓԱԳՐԵՐ

Գրիգորյան Ս., Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի իրավագիտական հասկացությունների իմաստային քննություն (հոդված)

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի իրավական հասկացությունները քննելիս հոդվածագիրը դրանք պայմանականորեն բաժանում է երկու մեծ խմբի՝ ա) հոգևոր ոլորտ ու եկեղեցական կանոններ, բ) հասարակական ոլորտ ու սովորության իրավունքներ: Հոդվածագիրը նշում է, որ միջնադարում իրավական կարգավորումները սովորաբար բխեցվում էին հիմնականում եկեղեցական կանոններից: Օրինակ՝ միայն *օրենք* բառը «Գիրք

հարցմանց»-ում Գ. Տաթևացին օգտագործել է ավելի քան երեք հարյուր անգամ ն' այն իմաստներով, որ արձանագրվում են կանոնական փաստաթղթերում ու մատենագրության մեջ, ն' սովորութային իրավունքները քննելիս:

Տաթևացու երկերը միտված են Հայոց Եկեղեցու իրավունքը պաշտպանելուն, դավանաբանական խնդիրներում Եկեղեցու իրավացիությունը ապացուցելուն, ուստի հոգևոր ոլորտի իրավական հարցադրումները գերիշխող են: Կիրառվող հասկացությունների մեջ որպես առանձին ենթախումբ առանձնացվում են *հերձվածողությունը* բնութագրող հասկացությունները:

Հոդվածագիրն ընդգծում է, որ Տաթևացին համակողմանիորեն քննում է «Կանոնագիրք հայոց»-ից բխող՝ *պատուիրան, արդարանալ, արդարացուցանել, հատուցում, բռնադատել, անարգել, յափշտակել, յանցանք, պատիժ, տուգանք, խոստովանութիւն, վկա, վկայութիւն, հայհոյութիւն, մեղանշել, քննել, արդարանալ, գղջում, հատուցում, կոնդակ, կանոն, կարգ, կամք, երկիւղ* հասկացություններին վերաբերող եկեղեցական կանոնները:

«Գիրք հարցմանց»-ում իրավական ոլորտի հարցադրումները խիստ բազմազան են և հետաքրքրական, հաճախ՝ ինքնատիպ, իսկ իրավական հասկացությունների պատկառելի քանակը հնարավորություն է տալիս դրանք ներկայացնելու իմաստային խմբերով: Հասկացությունների մեջ կան նաև հեղինակային նորակազմություններ:

Գրիգորյան Ս., Իրավական հասկացությունների կիրառությունները հայերենի մի շարք բարբառներում (հոդված)

Ուսումնասիրելով իրավական հասկացությունների գործածությունը մի շարք բարբառներում՝ հոդվածագիրը նշում է, որ դրանք, հիմնականում պահպանելով՝ հինհայերենյան իմաստները, կիրառվում են բառիմաստի փոփոխություններով (բառիմաստի նեղացում, ընդլայնում, հաճախ նաև բառիմաստի շրջում):

Այդ հասկացությունները բոլոր բարբառներում ենթարկվել են սովյալ բարբառին հատուկ հնչյունափոխությունների:

Հոդվածագիրը նշում է, որ սովորության իրավունքները սահմանված օրենքներին զուգահեռ ևս կարգավորել են հասարակական հարաբերությունները, ուստի բարբառներում շատ են այդ ոլորտի իրավական հասկացությունները: Պատահական չէ, որ շատ բարբառներում *օրենք*-ի փոխարեն շրջանառվում է *աղաթ* բառը: Երբեմն էլ իրավական հասկացությունը կիրառվում է սովորության հարաբերություններում: Այդպիսին են *հարկ* բառի «հարսանիք» կամ «հացկերոյթ» իմաստների դրսևորումները Երևանի, Նոր Նախիջևանի, Սվեդիայի, Վանի բարբառներում, իսկ Ատանայի բարբառում նաև՝ նշանակում է «հոգեհանգստյան համար տրվող հացկերոյթ՝ հոգեհաց»: Նման կիրառությունը, թերևս, պայմանավորվում է այդ գործողությունները կատարելու պարտադիր կամ անհրաժեշտ լինելու հանգամանքով:

Գրիգորյան Ս., Իրավական հասկացությունները Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում (հոդված/անգլերեն)

Հոդվածում ընդհանուր տեղեկություններ են տրվում «Գիրք հարցմանց»-ի իրավագիտական հասկացությունների մասին (*օրենք, իրաւունք, կանոն, սովորոյթ*) դրանք ներկայացնելով պատմական զարգացման մեջ: Հոդվածագիրը նշում է, որ Գ. Տաթևացին իրավական կարգավորումներին վերաբերող առանձին աշխատություն չի ստեղծել, սակայն նրա բազմաթիվ երկերում այնքան շատ են իրավական հարցադրումները և վերլուծությունները, որ եթե դրանք հեղինակն ամփոփեր կամ ի մի բերեր, անշուշտ կարելի էր ունենալ ժամանակաշրջանի իրավական հարաբերություններն արտացոլող ուրույն մի աշխատանք: Գ. Տաթևացին, որպես պահպանողական հեղինակ, փորձել է ժամանակի խնդիրները բացատրել նախնիների մոտեցումներով՝ պաշտպանելով Կանոնագրքի «նախնեաց սահմանումները», սակայն ժամանակի թելադրանքով անդրադարձել է նաև ժամանակի խնդիրներին, և նրա հարցա-

դրումները տեղեկություն են տալիս խնդրի առկայության և դրա վերաբերյալ հեղինակի տեսակետի մասին:

Իրավագիտության ոլորտի ուսումնասիրողները, որպես կանոն, նշում են հայ իրավագիտական մի քանի աղբյուր. սովորութային իրավունք, եկեղեցական կանոններ, փոխառու օրենքներ, ազգային դատատաստանագրքեր, մատենագիտական աշխատանքներ: Աղբյուրագիտական իմաստով Գ. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի, ինչպես նաև մյուս աշխատությունների իրավագիտական հասկացությունները մատենագիտական աշխատանքներից քաղվող տեղեկություններ են: Սակայն նրա հարցադրումները առնչվելով և՛ սովորութային իրավունքին, և՛ ազգային դատատաստանագրքերին, առավելապես վերաբերում են եկեղեցական կանոններին:

Թադևոսյան Հ., Նոր բառիմաստներ XIII դարի բժշկարաններում («Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց», «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ») (հոդված)

XIII դարի բժշկարանները կարևոր սկզբնաղբյուր են միջին հայերենի ամբողջական բառապաշարը ներկայացնելու տեսանկյունից. դրանցում արձանագրվում են առաջին անգամ կամ եզակի վկայությամբ գործածվող բազմաթիվ բառեր, որոնց մի սովոր մասը, հոդվածագրի հավաստմամբ, բժշկական տերմինի արժեք ունեցող ախտանուններ, կազմախոսական բառեր, դեղանուններ են: Հոդվածում ներկայացվում են նշված դարի երկու բժշկարաններում առկա բժշկական տերմինի արժեք ունեցող նոր բառիմաստները, դրանց գործածության հետագա ընթացքը: Պահպանելով գրաբարյան հիմնական իմաստները՝ քննվող բառերը ձեռք են բերել նաև նոր՝ ախտանվան կամ կազմախոսական բառի իմաստ:

Հոդվածագիրը նոր բառիմաստները ներկայացնում է ըստ կիրառության՝ միջին հայերենի բառապաշարում պահպանված և

արդի հայերենի բացատրական բառարաններում ամրագրված իմաստներ:

XIII դարի երկու բժշկարաններից առանձնացվող 25 նոր բառիմաստները, ըստ հեղինակի, բնորոշ են միջին հայերենին և պահպանվել են միջին հայերենի բառապաշարում: Վեցը «Միջին հայերենի բառարան»-ում վկայված չեն: Քննվող բառերից պահպանվել և արդի հայերենի բացատրական բառարաններում ամրագրվել են միայն չորսը՝ *անդամ*, *թուրթ*, *նշիկ* (*նուշ*), *շիտ*, որոնցից երեքը (բացի *նուշ*-ից) գործածվում են նաև բարբառներում:

ԹաղևոսյանՀ., Նորակազմ բժշկական բառեր XIII դարի բժշկարաններում (Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոց), «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» (հոդված)

Հոդվածագիրը քննում է XIII դարի երկու բժշկարաններում կիրառվող նորակազմ 133 բառեր, որոնք ունեն բժշկական տերմինի արժեք: Վերջիններս, բնորոշ լինելով միջին հայերենին, ըստ հեղինակի, ամենայն հավանականությամբ առաջին անգամ հանդիպում են նշված աղբյուրներում:

Նորակազմ բժշկական բառերը հոդվածում ներկայացվում են իմաստային երեք խմբով՝ *ախտանուններ*, *կազմախոսական բառեր* և *բուսանուններ* կամ *դեղանուններ*: Դրանք կազմվել են հիմնականում բառաբարդման և վերջածանցման եղանակով: Հատկանշական են բառաբարդմամբ ստեղծվածները, որոնց շարքում գերակշռում են իսկակական բարդությունները:

Քննվող բառերը, ինչպես փաստում է հեղինակը, պահպանվել են միջին հայերենի բառապաշարում: Հինգը՝ *կողմնցաւ*, *սպիտակցալ*, *կողացաւոտ*, *խելընկած*, *խոչայգլուխ*, «Միջին հայերենի բառարան»-ում վկայված չեն: 32 բառ, կիրառվելով միջին հայերենում և բարբառներում, նույն նշանակությամբ պահպանվել և ամրագրվել է արդի հայերենի բացատրական բառարաններում. հինգը՝ *բնեռագլուխ*, *ձվատակ*, *մեղրածոր*, *ջրփող*, *չախել*, պահպանվել են այլ իմաստներով:

Թորոսյան Հ., Կենդանանուններով կազմված դարձվածային միավորների իմաստակառուցվածքային առանձնահատկություններն արդի հայերենում և պարսկերենում (հոդված)

Հոդվածի նպատակն է բացահայտել արդի հայերենի և պարսկերենի՝ *կենդանանուն* բաղադրիչով դարձվածային միավորների իմաստային և կառուցվածքային յուրահատկությունները նկարագրական, զուգադրական և համեմատական մեթոդներով: Ջուգադրվող լեզուների դարձվածաբանական տարբեր բառարանների ընձեռած լեզվական նյութով ներկայացվում են *կենդանանուններով* կազմված անվանական և հաղորդակցական կապակցությունները, դրանց ձևավորման կաղապարները, դարձվածային համարժեքներն ու համապատասխանությունները:

Կենդանանուն բաղադրիչով դարձվածային միավորները, արտահայտելով փոխաբերական իմաստ, բնութագրում են մարդու այս կամ այն հատկանիշը (արտաքին տեսք, բնավորություն, մտավոր կարողություններ և այլն), երբեմն էլ արտահայտում են առարկայի հատկանիշներ: Կենդանանուններով բաղադրված դարձվածային միավորների մեջ գերակշռում են անձի հատկանիշ արտահայտողները: Դարձվածային ընդհանուր իմաստը պայմանավորվում է գերադաս բաղադրիչով:

Խաչատրյան Վ., Ղազար Փարպեցու երկերի ձեռագրերի լեզվական տարբերությունների շուրջ (հոդված)

Հոդվածում ներկայացվում են Ղազար Փարպեցու Պատմության և Թղթի՝ մինչ օրս հայտնի ձեռագրերի, այդ թվում և պատահիկների, ինչպես նաև տպագրությունների և հատկապես քննական բնագրին վերաբերող տեղեկություններ: Հոդվածագիրն անդրադառնում է ձեռագրերում առկա լեզվական տարբերություններին՝ փորձելով պարզել, թե ո՞ր իրողություններն են նախնական, որոնք կարելի է դիտել որպես ընդօրինակողների նորամուծու-

յուն և միջամտությունն: Դիտարկվում են նաև քննական բնագիրը կազմողների սրբագրություններ, կատարվում որոշ ճշգրտումներ:

Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր, պրակ Ա (Գիրք)

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի աշխատակիցների հետազոտությունները, որոնք 2013թ. հրատարակվել են տարբեր գիտական հանդեսներում և ժողովածուներում:

Պրակն ընդգրկում է լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխություններին ու դրանց օրինաչափություններին, հայերենի և այլ լեզուների բառային աղերսներին, գրաբարի բառապաշարին, օտար և բնիկ բառերի հարաբերակցությանը, փոխառությունների գործառական առանձնահատկություններին նվիրված հետազոտություններ:

Հովհաննիսյան Լ., Թվականների հնաբանություններ Ղարաբաղի (Արցախի) բարբառում(հոդված)

Ղարաբաղի (Արցախի) բարբառի թվականների հնաբանությունները հոդվածագիրը քննում է տարբեր լեզուների, նաև հրնդեվրոպական հիմք լեզվի առնչությամբ: Դիտարկվում են քանակական և անձներական թվականներն արտահայտելու ձևերն ու առանձնահատկությունները: Հոդվածագիրը նկատում է, որ գրաբարում, ինչպես և հնդեվրոպական հին լեզուներում, 11-19 քանակական թվականների մեջ միավորը նախորդում է տասնավորին, մինչդեռ Ղարաբաղի (Արցախի) բարբառում տասնավորներն են նախորդում միավորներին: Ենթադրվում է, որ այդ իրողությանը նպաստել են մի շարք գործոններ՝ գրաբարում վկայված բառաձևեր, հարևան ժողովուրդների լեզուների ազդեցություն, V դարից գործածվող ԺԱ, ԺԲ, ԺԳ թվանշանային գրություն:

Քանակական թվականներից կազմված անձներական թվականները ևս հողվածագիրը համարում է հնաբանություն՝ ենթադրելով, որ բարբառային այդ ձևերը ոչ թե գրաբարյան ժառանգություն են, այլ հինհայերենյան բառեր, որոնք պահպանվել են միայն Ղարաբաղի (Արցախի) և Մեղրու բարբառներում:

Հովհաննիսյան Լ., Արցախ տեղանվան շուրջ (հողված)

Արցախ // Արձախ տեղանունը վկայվում է դեռևս 5-րդ դարից՝ Փավստոս Բուզանդի և Եղիշեի Պատմություններում, ընդ որում՝ հայ մատենագրության պատմաշխարհագրական աղբյուրներում հաճախադեպ է *Արցախ* բառագրությունը: Հողվածագիրը ներկայացնում է *Արցախ//Արձախ* տեղանվան ծագմանը և ստուգաբանությանը վերաբերող հայտնի երեք մեկնաբանություն (Գ. Ղափանցյան, Հ. Կարապետյան, Ս. Երեմյան), որոնցով բառի համար ենթադրվում է ուրարտական ծագում:

Համաձայնելով հայերի և Դաղստանի ժողովուրդների (հատկապես ավարների) ազգակցական կապի մասին վերջին վարկածին՝ հողվածագիրը կարծիք է հայտնում, որ Հայաստանի և Դաղստանի ազգագրության, պատմության, լեզվի, նաև մարդաբանական տվյալների զուգադրական քննությամբ կարող են բացահայտվել նոր իրողություններ հարցի առնչությամբ:

Հովհաննիսյան Ն., Նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանների քննություն (մենագրություն)

Աշխատությունը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակներով վկայվող՝ XVIII դարից ավանդված հինգ ձեռագրերում ամփոփված նույնանիշների ձեռագիր բառարանների քննությունն է:

Ներածության մեջ պատմական համառոտակի անդրադարձով ներկայացվում է ժամանակաշրջանը, արծարծվում են լեզվի և

ժողովրդի պատմության փոխհարաբերությանն առնչվող որոշ խնդիրներ:

Հաջորդիվ ներկայացվում են ձեռագիր բառարանների տեսակները և կազմությունը:

Նույնանիշների բառաշարքերի ձևավորման սկզբունքներին անդրադառնալիս նշվում է, որ դրանք ներառում են իմաստային առնչություն ունեցող, ընդհանուր հասկացությամբ կապվող, ընդհանուր գաղափարով միավորվող բառեր: Ուսումնասիրողի կարծիքով՝ բառաշարքերն առավել հաճախ ձևավորվում են հետևանքի իմաստային հիմքով՝ հիշեցնելով *եթե ...սպա*-ով, պայմանական ձևակերպմամբ, հետևանքային հարաբերությամբ կառույցներ: Քննվող ձեռագիր բառարաններն առանձնանում են այնպիսի բառաշարքերով, որոնք ընդգրկում են հասկացությունը տեսակային տարբերակմամբ:

Բառաշարքերի բառակազմական և ձևաբանական առանձնահատկությունների քննությամբ արձանագրվում է, որ մեծավ մասամբ չի խախտվում բառաշարքի միևնույն խոսքի մասերով կազմության սկզբունքը, բայց կան, թեև սակավաթիվ, տարբեր խոսքի մասերով կազմված բառաշարքեր: Նույնանիշների բառաշարքերում առկա են նաև նախդրավոր կազմություններ, նկարագրական արտահայտություններ, բացատրական բառակապակցություններ, հղումներ և ծանոթագրումներ, ոչ ժխտական մասնիկով կազմություններ, հականիշներ: Բառաշարքերում որոշակիորեն առանձնացող հարադրական կազմությունները, բացատրական բառակապակցություններն ու արտահայտությունները, հիմնականում դրրվելով բառաշարքի վերջում, ասես ամփոփում են այն:

Բառային տարբերակների քննությունը փաստում է բառաշարքերում ձայնավորային և բաղաձայնական փոփոխություններով այնպիսի գուգաձևերի առկայությունը, որոնք լեզվաբաններն արձանագրել են գրաբարում, միջնադարյան գրավոր աղբյուրներում. նշված ձայնավորային փոփոխություններով առաջին գուգաձևերին հավելվում են այլ վկայություններ: Որոշ դիրքերում բա-

ղաձայնների ձայնեղությանը զուգաձևերը առավելապես բնորոշ են «արևմտահայ բարբառախոս վայրերի», հետևապես, ուսումնասիրողի կարծիքով, կարելի է ընդունել, որ այդ գրչագրերն ընդօրինակվել են Հայաստանի արևմտյան տարածքներում:

Հայ մատենագրության բնագրային օրինակների համեմատությամբ մանրամասնորեն դիտարկվում են ձեռագիր բառարաններում առկա բառիմաստային փոփոխությունները: Առանձնացվում են ձեռագիր բառարաններում առկա նոր իմաստով կամ իմաստային նոր երանգով բառերը: Ներկայացվում են նաև Հրաչյա Աճառյանի առանձնացրած մի քանի «նոր բառեր», որոնք ձեռագիր բառարաններում ունեն նոր բառիմաստներ կամ իմաստային նրբերանգներ: Բառարանային դիտարկումներն ու պրպտումներն ուսումնասիրողին հնարավորություն են ընձեռել առանձնացնելու նաև ժամանակակից հայերենում իմաստափոխված կամ իմաստային փոքր-ինչ այլ երանգով բառերը, որոնց քննությունից պարզորոշ է դարձել, որ առանձնացվող բառերի՝ արդի հայերենի բառարաններում վկայված առաջնային իմաստները չեն պահպանվել. այդ բառերը XX դ. վերջերից արդեն իսկ կիրառվում են նոր իմաստներով:

Նորակազմ բառերի գոյությունը փորձ է արվում հաստատելու հայերենի բառակազմության առանձնահատկություններով, XVIII դարից հետո ստեղծված բառարաններով, հնարավորության դեպքում՝ նաև բնագրային օրինակներով, այլև պարզելու և պարզաբանելու բառիմաստային անցումներն ու փոփոխությունները:

Քննությամբ պարզվում է, որ XVIII դարից ավանդված սույն ձեռագիր բառարաններում առկա, բայց և գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառերից շուրջ մեկ տասնյակը արձանագրվում է միայն այս բառարաններում, մեկ տասնյակից ավելին՝ Հակոբ Վիլլոտի, Մխիթար Մեբաստացու՝ XVIII դարում, նաև Մխիթարյան հայրերի՝ XIX դարում հրատարակած երկլեզվյան և երեքլեզվյան բառարաններում, քերականական և պատմական տարբեր աշխատություններում: Ըստ բառարանային տվյալների՝

այդ բառերի մի մասը նույն կամ իմաստային այլ նրբերանգով պահպանվել է հայոց լեզվի արևելահայ և արևմտահայ տարբերակներում:

Քննվող ձեռագիր բառարաններում մի քանի բառաշարքեր եզրափակվում են հայերենի բարբառներում և խոսակցական լեզվում հնչյունական տարբերակներով գործածվող բառերով: Սրանց շարքում առանձնանում են նեղ բարբառային բառերը, որոնք գործածվում են մեկ-երկու բարբառում, ընդգրկում են բարբառային սահմանափակ տարածք, այդ տարածքից դուրս մասամբ կամ ամբողջովին անհասկանալի են:

Փոխառյալ բառերը դիտարկելիս նշվում է, որ դրանք մեծավ մասամբ իրանական լեզուներից են և հնչյունական տարբերակներով ու տարբեր նշանակություններով գործածվում են հայերենի բարբառներում. մի քանիսն էլ բարբառային ընդհանրական կիրառություն ունեն:

Նույնանիշների բառաշարքերում որոշակիորեն առանձնանում են հարադիր բայերը, դարձվածային միավորները, այլև բառակապակցությունները և արտահայտությունները: Քննվող ձեռագիր բառարաններում վկայվող հարադրական կազմությունները, ինչպես պարզվում է, գրիչները կամ ընդօրինակողները քաղել են հայ թարգմանական և ինքնուրույն մատենագրությունից, և ուսումնասիրողի կարծիքով՝ դրանք բառարաններում ներառվել են, ամենայն հավանականությամբ, նաև ուսուցողական նպատակով:

Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններից հոմանիշների ձեռագիր բառարանները, լեզվաբանների վկայությամբ, հնագույններից են՝ ընդօրինակված XII դարում: Հետևաբար, ըստ ուսումնասիրողի, նույնանիշների՝ XVIII դարից ավանդված ձեռագիր բառարանները նույնպես կարող են վերաբերել «ավելի վաղ շրջանի», այսինքն՝ մինչև բնագրային օրինակներով համարված՝ գրաբարի բառարանները կազմելը և հրատարակելը կամ թերևս դրանց գուգահեռ: Եվ դա փաստարկելու համար ձեռագիր բառարաններում առկա դարձվածային միավորները, բառակապակցությունները և արտահայտությունները ներկայացվում

են՝ ըստ ամենավաղ վկայության և հետևյալ դասակարգումներով՝ Աստվածաշնչում, այլ երկերում, XVIII դարում և XVIII դարից հետո հրատարակված տարբեր բառարաններում վկայված կազմություններ. առանձնացվում են նաև դրանց նմանությամբ բաղադրված, իմաստային այլ նրբերանգով հավաստված և բառարաններում չարձանագրված կազմությունները:

Հովհաննիսյան Ն., Մեր լեզուն, խոսքը և տրամաբանությունը (հոդված)

Հոդվածում նշվում է, որ լեզուն՝ իր տարբերակներով, ունի յուրահատկություններ, բայց և քաղաքական հաղորդագրություն-մեկնաբանությունները, գիտական աշխատությունները, ամենօրյա խոսակցականը, անգամ կենցաղային նյութերի վերաբերող ակնարկները տարբերություններով հանդերձ պահանջում են լեզվի ճշգրտություն, հակիրճություն, ընթերցողին, լսողին վարակելու գրավչություն, մատուցման բազմազանություն: Հոդվածագրի կարծիքով սա ընդհանուր պահանջ է, որը միաժամանակ ենթադրում է մայրենի լեզվի հարստության, արտահայտչական հնարավորությունների ու միջոցների զգացողություն և իմացություն: Մանավանդ մեր օրերում, երբ ահագնորեն մեծանում է նաև համացանցի ազդեցությունը խոսքի մշակույթի, խոսակցական լեզվի վրա:

Հոդվածում փաստական նյութով ներկայացվում են մեր խոսքում արձանագրվող լեզվական բազմապիսի սխալներ, տրամաբանական խախտումներ՝ որոշակի մեկնաբանություններով:

Ըստ հոդվածագրի՝ այդ սխալների, խաթարումների ու շեղումների պատճառները բառիմաստը ճիշտ չընկալելը, բառը սր-խալ գործածելը, օտար լեզվամտածողության ազդեցությունը և խոսքը կառուցելու տրամաբանական խախտումներն են:

Միսիթարյան Գ., Միջնադարյան կատակերգության անվանումների լեզվական քննություն (հոդված)

Հոդվածում ներկայացվում են միջնադարյան Հայաստանում կատակերգության «ի կենցաղում» կիրառելի դրսևորումները, աշխարհիկ (ժողովրդական) արվեստի ուրույն դիմագծի ձևավորումը, ազգային հայ ավանդական երգարվեստի տերմինաբանության աստիճանական տարածումն ու կայունացումը: *Կատակերգություն*-ը հունարան կազմություն է: Բառի ամենավաղ վկայությունն արձանագրվում է Դ. Թրակացու «Արուեստ քերականին» երկի հայերեն թարգմանության մեջ: Հիշատակություններ կան Աստվածաշնչում և Մ. Խորենացու «Ողբ»-ում: Դ. Թրակացու Քերականության մեկնություններում նշվում է, որ *կատակերգությունը* «քերդողների» գործ է, նպատակը, յուրաքանչյուրի վարքին համապատասխան, խրատելը, նախատելը, քաջալերելն է: Բառաբաններում արձանագրվող առաջնային իմաստներն են՝ «խնջույքի երգ» և «գեղջկական երգ»: Հունարան տերմինը ստեղծվել է *կատակ* և *երգ* բառերից, որոնք հայտնի են թերևս որպես բանահյուսության ժանրերի անվանումներ: Դրանց քննությունը կարևոր է և արդիական՝ նշելու ժանրի զարգացումը, տեսակների բազմազանությունը և անվանումների կիրառությունը, մանավանդ որ *կատակերգություն* բառի վկայություններն ու այդ հասկացության միջնադարյան սահմանումները փաստում են, որ հայ մատենագրության մեջ այդ անունով գրական ժանր կամ տեսակ չկա: Նման վերնագրով գրական երկ մեզանում ևս հայտնի չէ: *Կատակերգություն*-ը բարոյական, գեղագիտական ընդհանուր համակարգ է, որի միջոցով ընդհանրանում է աշխարհիկ մտածողությունը: Հստակ է, որ աշխարհիկ մտածողության և հոգևորի սահմանները տարբերակված են: Գործածվող անվանումները՝ *կատակ*, *սոինչ*, *շեր*, *ցուց*, *պարուց երգեր*, նաև ժողովրդական երգիծանքի ինքնատիպ դրսևորումներ են, իսկ անվանումների լեզվական քննությունը որոշակի պատկերացում է տալիս հին հայոց մշակույթի առանձնահատկություն-

ների մասին և փաստում, որ դրանք ձևավորվել են դեռևս նախագրային ժամանակաշրջանում:

Մխիթարյան Գ., Աստվածաշնչի թարգմանությունը որպես հայոց լեզվի պահպանման և զարգացման գործոն
(հոդված/ անգլերեն)

Աստվածաշնչի հայերեն թարգմանությունը մեծ ազդեցություն է ունեցել հայ ժողովրդի մշակութային կյանքի գրեթե բոլոր բնագավառների վրա՝ հետագայում ձևավորելով հայ ազգային գիտական միտքը: Հայոց մշակույթի, առավել ևս հայոց արժեքային համակարգի վրա Ս.Գրքի ազդեցությանն անդրադառնալիս ընդգծվում է հատկապես լեզվի դերը. լեզու, որի ծաղկումը V դարում պայմանավորվում էր Աստվածաշնչի հայերեն թարգմանությամբ: Գրերի գյուտը ևս միտվում էր Աստվածաշնչի թարգմանությանը և Ս.Գրքի բովանդակությունը բնակչությանը հասու դարձնելուն: IV դարում ազգային ինքնապաշտպանության խնդիրը պետական և հոգևոր գործիչներին մղում է մասնատված ժողովրդի ներքին դիմադրությունը կազմակերպելու և համախմբելու գաղափարին: Հոդվածագիրը նշում է, որ մեր օրերում ևս արդիական է Ս. Գրքի թարգմանությանն անդրադառնալը՝ պայմանավորված ներկա աշխարհաքաղաքական նոր զարգացումներով, հայկական պետականությունը պահպանելու գաղափարով, ինչպես նաև անցյալի օրինակով ժամանակակիցներին ոգեշնչելու անհրաժեշտությամբ:

Միրունյան Տ., Ձեռագիր քերականության մի «լուծմունքի» ուսումնասիրություն (ԺԵ դար) (հոդված)

«Լուծմունք յաղագս քերականութեան» կամ «Յաղագս քերականութեան լուծմունք» (հեղինակն անհայտ է) ԺԵ դարի ձեռագիր քերականությանը նախորդած և ժամանակակից այլ քերականությունների համեմատությամբ հոդվածագիրը պարզում է, որ քննու-

թյան առարկա «Լուծմունք»-ը նշանակալի չափով ընդօրինակում է Առաքել Սյունեցու աշխատությունը՝ պարունակելով նաև տեղեկություններ այլ քերականներից: Նշվում է, որ ձեռագիր Քերականության բաժինների շարադրանքը սեղմ է, սակայն, բավարար խնամքով մշակված չէ, տեղ-տեղ հիշեցնում է հապճեպ սղագրություն: Հասկացական մակարդակում էական նորություններ չկան, «Լուծմունքի»-ի հեղինակային ինքնուրույնությունը սահմանափակվում է ավանդական ըմբռնումների վերաձևակերպումներով, որոնք երբեմն կարող են հանդես բերել իմաստային որոշ տարբերություններ. աշխատությունը չունի մեկնողական մանրամասներ, փոխարենը մեծ տեղ է տրվում օրինակներին ու գրույցներին:

Հաշվի առնելով նյութը մատչելի մատուցելու ընդհանուր միտումը՝ հողվածագիրը եզրակացնում է, որ «Լուծմունք»-ը ստեղծվել է կիրառական նպատակով՝ որպես տեսական գիտելիքներն ամրագրելու օժանդակ ձեռնարկ:

ENGLISH SUMMARIES*

PROBLEMS OF STUDY AND REGULATION OF MODERN EASTERN AND WESTERN ARMENIAN

Arakelyan K., Stylistic Means of Satire in the “Pocket Dictionary” of NshanPeshiktashlian.-The “Pocket Dictionary” of NshanPeshiktashlian is a brilliant example of Armenian satire. It includes 126 capital words, that have different explanations not only in distinguishing the profundity and shades of meanings, but also in exceptional rich language, the best use of different lingual-stylistic means, original interpretations, analysis, etymologies: absolute concord of form and content. All kinds of satire are present in this dictionary, and for their reflection the correct linguistic units are selected.

Arakelyan K., The Stylistic-satiric Use of Different Layers of Vocabulary in NshanPeshiktashlian’s „A Visit to Sick Man”.- The Armenian satirical literature has rich traditions and deep roots. The genre of satire reached its apogee in the 19th-20th centuries, in particular, in the works of Western Armenian writers HakobParonian and YervandOtian. Being one of the most brilliant satirists in the Diaspora literature, NshanPeshiktashlian followed the leagcy of the Western Armenian writers.

NshanPeshiktashlian’s comedy „A Visit to Sick Man” is replete with words belonging to active and inactive layers of vocabulary, which give the text a special stylistic coloring and expression, and these words are also an integral part of satirical speech.

Asoyan T., "Mshak" newspaper about Mkhitarian’s of Venice (to the 150th anniversary of the publication of "Mshak" newspaper).- "Mshak" newspaper occupies an important place in the history of the Armenian periodical press. It was published in Tiflis since 1872 under the editorship of famous intellectual and public activist GrigorArtsruni. People with

* Reprinted from relevant scientific journals.

progressive views of the time worked for the newspaper. Many of Raffi's works were first published in this newspaper.

"Mshak" newspaper has touched a lot on social, cultural and national issues of public concern, evaluated them with new ideological approaches, provided information from different regions.

In 1873, in the 40th issue, the newspaper referred to the activities of the Mkhitarian Congregation in Venice, related to some religious orientations. "Mshak" highly appreciated Mkhitarians' activities but contrasted the initial and last (second half of the 19th century) periods of their activity, considering the unconcealed inclination of some members of the congregation to the Catholic Church. If Catholicism was initially a mask for the purpose of developing Armenian culture, later it became an essence.

The observations of "Mshak" about the activities of the Mkhitarian Congregation are analyzed in the article.

Asoyan T., Ishkhanyan's interpretations of syntactic conceptions.-

Rafael Ishkhanyan is one of the famous figures of Armenian culture and science, an individual with an active social and political position. His range of interests is wide-history, bibliography, literature, but the focus of his attention is the Armenian language, the problems of its purity and preservation. Among the linguistic studies stands out "Syntax of Modern Armenian: Simple sentence" study. In this study R. Ishkhanyan interprets the key issues of the syntactic system of Armenian in his own way. Staying close to some traditional approaches, in many cases it presents linguistic facts in a new way.

In this small article we have referred to several syntactic realities, which were given different solutions by R. Ishkhanyan, differing from the previous opinions.

Galstyan A. - Issues of semantic-structural analysis of new words in the modern Armenian language.-

The study of word-formation patterns, the relations of suffixes and bases of new words in the modern Armenian language reveals certain regularities of semantic-structural nature. The present article explores the tendencies and regularities of the emergence and spread of new words. By means of consideration of some semantic-thematic groups of words some tendencies of activation of some suffixes

and suffixoids are revealed. New words denoting time in modern Armenian are examined. Special attention is paid to the analysis of new words denoting profession and occupation. Some deviations from the word-formation norms are also pointed out. The article is based on the factual material of the "New Words" dictionaries.

Ghamoyan L., Manifestations of Homonymy of Words Expressing the Concept "Clothing" in Armenian.- The semantic (thematic) group "clothing" is rich in homonyms, consisting of words denoting the concept of clothing, especially there are a lot of them in dialects. The series of homonyms usually consist of two, three and four (sometimes more) words, but two-member words predominate. According to the type of homonyms, we distinguish lexical and grammatical synonyms, according to the volume of involvement: full, partial and mixed homonyms, according to the method of occurrence: single-root and different root. Divergent homonyms appeared in different ways. a) on the basis of casual similarity of a word or word form, b) on the basis of word formation, c) on the basis of casual similarity of a borrowed word and an Armenian word, d) on borrowed words only. In the semantic (thematic) group "clothing" there are also two types of non-absolute homonyms: homophones (which are homonyms only in oral speech) and homographs (which are homonyms only in writing). Often the units of the homonymic series belong to different layers of vocabulary: common usage and neutral (obsolete, dialectal, colloquial, Western-Armenian). Usually, one of the members of the homonymic series is a word denoting the concept of clothing, while the others belong to other semantic (thematic) groups. Rarely, there are homonymous series, all the units of which belong to the same field (in this case - to the semantic group of clothing). The stylistic meaning of homonyms is mainly manifested in verbal situations, especially in artistic speech.

Ghamoyan L., Native Armenian Words in the Semantic Field of "Clothing".- From Old Armenian a small number of indigenous Indo-European names denoting clothing or apparel have come down to us (according to the samples we have collected, about 3 dozens). Some of them have passed from Old Armenian, Middle Armenian and from dialects to modern literary Armenian: although it should be noted that some of

these words are presumably native Indo-European. Many of the roots have undergone significant semantic changes over time: a) changed their primary meanings; as [huren, volog], b) the basic, primary meaning of the word became non-mainstream; as [otots], c) some keywords had a high frequency of use, retained their primary meanings, sometimes acquired new (often figurative) meanings, as [zgest, khav, goti, ktav, shor, odziq, eriz, tel, kar, kojak], d) some keywords have a small frequency of use; for example [gisht, grgli//grglyak, khrac] (used mainly in fiction). The roots [od, asr, goti, grgli, ersank, karzh, khrats, ktav, hesk, volog, eriz, tel, kar, kojak, shor, ter, odziq] (roots [ag, gads] are used in word formation) have passed into literary Western Armenian. The roots [karzh, heski, grgli, ersank, khav, kar, ktav, hur, tel, kar, kojak, shor, odziq] are also used in dialects. Over time, many derivatives and compound words were formed from the names of native Armenian clothes.

Ghamoyan L., Lexical Expressions of the Concept of "Հագուստ [Hagust]" in Armenian. - Of the components of the synonymic series of words հագուստ-հանդերձ-զգեստ-շոր [hagust-handerz-zgest-shor] the words հագուստ [hagust], զգեստ [zgest] are mostly used in literary Armenian, while in everyday spoken language շոր [shor] is used. In modern Eastern Armenian and Western Armenian literary language formations with հագուստ [hagust] are not numerous and have a limited use in proverbs and phrases, but recently some new formations and stable combinations have appeared which certainly enrich the Armenian vocabulary.

